

Ս Ի Ո Ւ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՈՆԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԻԵՏՈՎԱԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԿԱՐՔ ԵՎ ԱՌԱՋՎԱՎԱՐ ՀԱՅ ՊՈՎԵՐԱՐՄԱՆ ԹԵՂԵԿ

Ն Ո Ր Շ Ր Ձ Ա Ն

ԺԴ. ՏԱՐԻ 1940



ՏՊԱՐԱՆ ՄՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ

ԵՐՈՒՍԱԼԵՄ

ՑԱՆԿ ՆԻՒԹՈՅ «ՍԻՐՆ»Ի 1940 ՏԱՐԻՈՅ

Բ. Ա. Ն. Ա. Ս Ի Բ. Ա. Կ Ա. Ն . —

Արաւազգի Արք. — Քանանու եւ Ամենուրու երկրի ղեղերն ու բռւսաբանական պարտէցները.	22
Ա. Յ. Բամաջեան. — Ամիրտովլաթ Ամասիցի Հայ թժշկապիտ.	25, 67
Հ. Պեղկերեան. — Հայ գանականներ Ս. Սարյի վանրին մէջ.	29
Հ. Դ. Ակինեան. — Մարդիս վ. Կունտ.	16, 64, 94

Բ. Ա. Ն. Ա. Ս Տ Ե Գ. Ծ Ս Ա. Կ Ա. Ն . —

Արտէն Երկար. — Փայտէ սանդուխ.	127
Քարէ պատուհան.	184
Հողէ ճրագ.	260
Աւետում. — Ցուշարձանին առջեւ.	219
Եղիկարդ. — Օրեր.	11
Լեռնէն գար.	92
Վարագոյր.	181
Թ. Ա. Մ. — Կարօս.	296
Միքայէլ Ա. Կիւրնեան. — Արեւագալ (Թրգմ.) Alfred Drouin.	259
Դաշնակութիւն Երեկոյեան (Թրգմ.) Ch. Bauvalaire.	260
Հ. Կ. Կամար. — Ապագան.	219
Շաւորտ Արդ. — Պատէն կախ.	10
Վահէ-Վահեան. — Երգ հաշտութեան ու սիրոյ.	57
Տերունի. — Դաշտերուն մէջ...	127
Աստղերը...	295

Գ. Բ. Ա. Կ Ա. Ն . —

Զաւէն Արեդայ. — Մանկան մը երազը ասազի մը վրայ (Թրգմ.) Charles Dickens.	39
Յ. Օսական. — Կեանրին հնաւ.	220
Մոռցուած բաներ.	261

Դ Ի Խ Ա. Ա. Յ Ա. Կ Ա. Բ Ա. Յ . —

Գ. Ե. Ն. (Համս.) — ԵԲ. ԺԲ զիսով սահմանադրութիւն է.	153
ԻՖ. Արդնցի Ոհան վրդ. Էրգորումէն առ Եղիազար կաթողիկոս ի Կ. Պոլիս.	155
ԻՄ. Ցովնան Եպիսկոպոս Աղքանուարումէն առ Եղիազար կաթողիկոս ի Կ. Պոլիս.	156

ԻԵ. Դըմակիկ Մահակ վրդ. առ Եղիազար կաթողիկոս.	201
ԻԶ. (Խոճա Պաղտասաւր Կ. Պոլսէն առ Եղիազար կաթողիկոս).	202
ԻՀ. (Խոճա Խուճիման եւ Խոճա Պաղտասաւր Կ. Պոլսէն առ Եղիազար կաթողիկոս).	282
ԻԼ. (Ցովնանէս վրդ. Թոփսաթեցի Գաղատիայէն առ Եղիազար կաթողիկոս).	283
ԻԹ. Ասքր Հէւէսուն թիմառուզներն են այս փոյիցայ.	315
Լ. (Ազգայինք ոմանք Կ. Պոլսէն առ Եղիազար կաթողիկոս).	315
Լ. (Եղիազար կաթողիկոս Կրէտէէն առ ազգայինսն ի Կ. Պոլիս).	316

Ի Մ Ա. Ս Ո. Ս Ի Բ. Ա. Կ Ա. Ն . —

Շ. Ա. Պեղկերեան. — Աւազ Հինգշարթի կամ Խորհուրդ եմասաի եւ Հաղորդութեան.	146
Խաչվերաց կամ Խորհուրդ Տառապանքի.	271

Լ. Ե Զ Ո Ւ Ա. Գ Ի Տ Ա. Կ Ա. Ն . —

Ա. Անառեան. — Աշխարհաբար կամ Նոր Հայիքէն.	131
Գրապայրաբ.	229
Հայ բարբառների ծագման ժամանակը.	266, 309
Պ. Ա. Մինասեան. — Արդի Աշխարհաբարին կազմութիւնն ու զարգացումը.	99, 128

Խ Մ Բ. Ա. Գ Բ Ա. Կ Ա. Ն . —

Խոմք. — Վարդանանք.	49
Պատերազմ.	81
Յարութեան խորհուրդը.	113
Անթիիաս.	161
Էշմիածին.	209
Հայ կրթական զործը, Ա.	244
	289

151-98 2001

ԿՐՈՆ Ա. Կ Ա. Ն . — 1935 թահ

Ա. Երուն Վ. Արդ. — Թափառական Հրեան.	120
Գրիգոր Արեդայ. — Մարդկութիւնը եւ Աստուած (Թրգմ.).	292
Սղիօէ Վ. Արդ. — Մողեր.	4
Ա. Կ Ա. Ն . — Պոլիս.	216

Թուրքամ Արեղայ. — Խաղաղութեան ձայնը մեր Արրազան Գրականութեան մէջ.	176
Ուրախութեան սապհապը (թրգմ.).	252
Ճայրիկ Վեդ. — Հսկումը.	88
Ն. Արեղայ (Հայացուց). — Հոգեւոր զօրու- թեան Էական սպայմանները.	52
Դատապարտութիւն չկայ.	84
Ազատութիւն.	116
Պ. Ա. Մինասեան. — Թարոյականը և Կրօ- նականը դաստիարակութեան մէջ.	248
Պատի Վեդ. — Վատառողջ հետաքրքրութիւնը.	174
Ս. Ա. Ա. (Ամփոփեց). — Եկեղեցին եւ Աշ- խարհը.	170, 212
Ա. Մելիքեան. — Խորհրդածութիւններ պա- տերազմի մասին.	124
Տիրայր Վեդ. — Երջանկութիւն.	7
ԿՐՈՆԱԳԱՍՏԱԿԱՆ. —	
Յ. Ա. Պագարեան. — Քրիստոնէութիւնը զե- րիներու կրօնը մը չէ.	297
Պարզեւ Վեդ. Վրամնէսեան (Հայացուց). — Ցակորունները նոր Կտակարանին մէջ.	298
ՀՆԱԳԵԴԱԳԻՏԱԿԱՆ. —	
Տ. Ա. Տ. (թրգմ.). — Ս. Հեղինէի մատուռ.	37
Ե. Ա. Պեղպէրեան. — Տաճարի մը վերանո- րոգումը.	185
ՄԱՏԵՆԱԼՈՒՄԱԿԱՆ. —	
Ա. Ենթամ. — Առաջասաններ.	36
Թարգեն Արեղայ. — Աշխարհի լոյսն ի Հայո.	199
Ե. Ա. Տ. — Արտերու երգը, Վանիրի ծաղիկներ.	75
Թորգոն Պատրիարք Գուշակեան.	279, 312
Թուրքամ Արեղայ. — Կորնթեան համականի.	150
Տ. Օսման. — Երեմիա Զէլէպի.	30, 71, 103,
	142, 194
ՊԱԳԵՍԻՆԱՐԵՆԱԳՐԱԿԱՆ. —	
Արտաւազը Արք. — Պաղեստինեան դրախա մը.	137, 192, 225, 256
Նոր պեղումներ Ցուղայի անապատին մէջ.	303

Ա. ՅՈՒԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ. —

ՅՈՒՆ. - ՓԵՏԾ. — Ամսօրեայ լուրեր.	42
ՄԱՐՏ. —	78
ԱՊՐԻԼ. —	109
ՄԱՅԻՍ - ՅՈՒՆԻՒ. —	157
ՅՈՒՆԻՒ - ՕԳՈՍՏ.	204
ՍԵՊՏԵՄԲԵՐ. —	238
ՀՈԿՏ. - ՆՈՅԵՄ. —	284
ԴԵԿՏԵՄԲԵՐ. —	319

Հ. Ա. ՆԳԻՍ. —

ՄԵՍԱՐՈՎ Յ. Սէթեան Նոր-Ջուղայեցի.	46
Տ. Վրամշապուհ Արբեպս. Քիսարեան.	48
Տ. Խորէն Քհնյ. Մելիքշահ.	48
Արրանձամ Փափազեան.	80
Կարապետ Յ. Նուրեան.	111
Պետրոս Հայրապետ Կրէտ.	208
Մարիամ Մայրապետ Ասլանեան.	240
Տ. Տ. Պետրոս Ա. Կթղ. Մեծի Տանն Կիլիկիոյ.	242

Ա.ՐԴԻԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ. —

Արքուն Վեդ. — Եկեղեցի եւ Պետութիւն.	11, 59
--	--------

Ա.ՑԼԵԻԱՑԼ. Ք. —

Ա. Յ. Բառմանջիսն (Հրաս.) — Ներսէս Աշ- տարակեցիի քանի մը կոնդակները.	23
Ե. Միհրաննան. — Զէ՛ մեռած Թորգոն Արք- ազանը.	79
Ամեն. Ս. Պատրիարք Հօր Խօսրը, Ամանորի առթիւ Միհրանութեան ուղղուած.	1
«Ժողովեցէք զնշարեալ բեկորսն զի մի՛ ինչ կորիցէ».	40
Նամակներ Ս. Էջմիածնէն Երուսաղէմ.	41
Կիլիկիոյ Կաթողիկոսի ընտրութեան յատաճառումը.	76
Թարեպաշտական նույններ.	71, 160 320
Հնարքութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսի.	166
Օծում Կիլիկիոյ Նորբնտիր Հայրապետ Տ. Տ. Պետրոս Ա. Կաթողիկոսի.	204
Զեռնապատթիւն Մարկուազաց.	236
Էջմիածնին հեռազիք, Կաթողիկոսի ընտրու- թեան թուականի մասին.	284

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Father Torkom Manoukian. Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

Ս Ի Ռ Ա

2013

ԺԴ. ՏՈՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1940

» ՅՈՒՆՈՒԱՐ-ՓԵՏՐՈՒԱՐ «

ԹԻՒ 1-2

ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐք ՀՕՐ ԽՈՍՔԸ

ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻՒ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՂՂՈՒԱԾ

Շնորհակալ իմ ընորհաւորութեանց եւ բարեմաղբութեանց համար:

Կաղանդը կամ նոր Տարին ընդհանրապէս ուրախութեան օր մըն է: Կը գոհանանք Տիրոջմէն որ անցնող տարին բոլորեցինք անփորձ ու անվտանգ ու կը մաղրենք որ տարիին առաջին օրը երջանիկ ու բարեյաջող տարիի մը սկզբնաւորութիւնը ըլլայ բոլորին համար:

Սյս պահուս երբ աւանդական սովորութեան համաձայն համախմբուած ենք հոս, միտով ու երեւակայութեամբ կը փոխադրուիմ տարի մը առաջուան ճիշդ այս օրը, երբ մեր յաւէս ողբացեալ Երանաւորի Տ. Թորգոն Ս. Պատրիարք Հայրը բազմած էր այս առոռին վրայ ու ես յանուն Միաբանութեան կը ընորհաւորէի զինք, եւ ընդհանուր ակնարկ մը ձգելով վերջացող տարիին վրայ, խորունկ ցաւով ու դառնութեամբ կը յիշէի Ս.մեծնայն Հայոց Հայրապետին անակնկալ ու անժամանակ վախճանումով մեր կրած մեծ ու անգարմանելի սուզը: Այն ատեն, սակայն, որո՞ւ միտէն կ'անցնէր թէ տակաւին ամիսը չըոլորած մենք ալ պիտի որբանայինք եւ դրժբախտութիւնը պիտի ունենայինք ողբաց մեր սիրեցեալ Հոգեւոր Հօր եւ Ս. քրոռոյս բազմաւորին ու մեծարժէք Գահակալին առ յաւէս բաժանումը մեզմէ:

Տակաւին երեւակայութեանս առջիւ կը պատկերանայ ինք իր արքենի հասակով, իր վայելով ու ընորհակի շարժ ու ձեւերով. սրտի յուզումով կը յիշեմ իր Միաբանութեանս ուղղած նոր Տարիի պատգամը, պերճ եւ իմաստալից, որ իր վերջին հայրական կտակն ու կարապի երգը պիտի ըլլար կարծես: Ինկաւ մեր զլիսէն մեր պարծանաց բազն ու պասկը ու 1939 տարին խսկապէս սուզի եւ տրսմութեան տարի մը եղաւ մեզի համար:

Այդ սուզին վրայ նոր մըն ալ աւելցաւ վախճանումովք Կիլիկիոյ երջանկայիւատակ Տ. Սահակ Հայրապետին, Սոււր Ս.քռուս Երիցազոյն եւ բազմավասակ միաբանին, որ թէեւ յառաջացած ալեօֆ ու կբած տարիներու բերին տակ, բայց անոր ներկայութիւնը խոկական օրինութիւն մը եւ բաշալերանք մըն էր իր պատմական Ս.քռուկն կապտուած Տանն Կիլիկիոյ Հայրապետութեան եւ վայրավատին Հայ ժողովուրդին համար:

Այսպէս վերջին խանի մը տարիներու ընթացքին մէկը միւսին եւեւէն տապալեցան Հայաստանեաց Եկեղեցին ամուս սիւները: Մեզի կը մնայ մաղ-

քել որ ողորդի Տէրը Եր արքացեալ Եկեղեցիին ու նոգեւորական նորահաս սերունդը անի ու զօրանայ խմասութեամբ եւ նասակաւ, ոռպէսզի անիկա որ մը կարենայ արժանապէս լեցնել անդարձ մեկնողներու և մեկնելիքներու ձգած պարապը:

Սնցնող 1939 տարին տարի մը եղաւ նաեւ այն պատճառաւ որ պատերազմի արհատիրքներ ու տարերային աղետներ վրդովեցին ամբողջ աշխարհի խաղաղութիւնը: Երեկուան անկախ ու բարզաւան ազգերը այսօր կը նեծեն բիւ ոյժի և բռնութեան ծանր լուծին ներթե: Նզօր տէրութիւններ, սպառազէն ու սպառնալից, կազմ ու պատրաս են զիւար յօւստելու: Մէկ խօսքով խանգարուած եւ վերիվայր երջուած է ընդհանուր ապահովութիւնը, խանգարուած է բնականն ինանն ու տնտեսութիւնը ու աշխարհ ամենայն անձկութեամբ եւ սրաւորուի կը սպասէ այս արինալից պայքարի վախճանին, փափաթեով որ այդ պայքարը վերջանայ արդարութեան, իրաւոնքի եւ ազատութեան յաղթանակով:

Տիրող տնտեսական տագնապի նետեւաններէն, անօւշ զերծ չէր կրնար մնալ նաեւ Ա. Արուս, որ մեծապէս ազդուած էր արդէն 1936-ին սկսող ու անկէ ասդին նետքինէ Ա. Երեկին վրայ նեռող ժիոր կացութենէն, զոր աւելի ծանրացուց ներկայ պատերազմական վիճակը:

Կը յիշեմ որ անցեալ տարի Ամանորի առքի մեր հանգուցեալ Ա. Պատրիարքին ըրած ուղերձիս մէջ կ'ըսէի թէ Ելեկտրականացած է մքնոլորտը, ու չեմ զիսեր՝ անիկա պիտի պարզուի* թէ նորանոր անակնկալներու առջեւ պիտի դնէ զմեզ: Մքնոլորտը չպարզուեցաւ դժբախտաբար ու իրականութիւն է այսօր պատերազմը, զոր նին տարին կը փոխանցէ նորին, որ իր կարգին զուցէ փոխանցէ նաեւ յաջորդ տարիին կամ տարիներուն: Նոյն ուղերձիս մէջ կը վսահացնէի՝ թէ Միաբանութիւնը, սակայն, կազմ ու պատրաս է դիմագրաւելու ամէն պատահականութիւն ու ամէնքը, մեծերէն սկսեալ մինչեւ կրսներազոյնները, արոտասէր ու կարգապահ ոգիով եւ սիրայօժար ու անտրունչ պիտի մնան պատճէփն վրայ ի զլուս իրենց պարտականութեանց:

Այսօր զոհ եւ մխիթարուած եմ սրտով, վասնզի կրնամ յայտարարել թէ չեմ սխալած նախատեսութեանս մէջ: Ճիշդ է որ ներկայ վիճակը անձկութեան մատնած է Սուրբ Արուր, զգալի չափով նուազած են մեր եկամուտները, որով դժուարութեան կը բախի այս բազմանիւղ հասատութեան մասակարարութիւնը, եւ սակայն մեր սիրելի Միաբանութիւնը եւ մեր պատօնեանները, Ա. Արուսին բարի համբաւին ու անոր վայելած պատիւին ու վարկին զովելի նախանձախնդրութեամբ, համբերատար ոգի մը երեւան կը բերեն եւ, նոյնիսկ զրկաններու եւ զրիոլութեանց զինով, կը դիմագրաւեն ամէն դրժուարութիւններ, խորապէս զիսակցելով թէ անցեալին մէջ ալ այս Արուր անցուցած է բազմապիսի տագնապներ, ասկէ շատ աւելի ծանր, բայց ամէն անզամ աստուածային նախախնամութեան Աջը եւ Ազգին սէրը օգնութեան հասած են իրեն եւ բոյլ չեն տուած որ Միաբանութիւնը ընկնուի եւ յուսահատութեան մատնուի:

Իսկ այժմ, հակառակ մեզ երջապատող դժուարութեանց, ի պատի Միաբանութեան կարող եմ դարձեալ պարծանեով յայտարարել թէ Անոր ա-

խատասիրութեան եւ կարգապահութեան եւ դրուատելի ջանմերու ժողովի աւույս ընթացքին Ս. Արոտի վարչական մեմբեռան չունեցաւ ունէ խանգարում, Ս. Ռիխտի անդամները բնաւ եւ չմնացին իրենց նույրական կրչումին պահանջած պարտականութիւններէն, Սուրբ Եկեղեցին պահեց իր վայելչութիւնն ու բարեզօրդութիւնը, Տաճարի բեմէն միշտ հնչեց Ս. Աւետարանի պատգամը, կրքական գործը երեխ չկասեցաւ, նոզենոր տեսուչները եւ բարեջան ուսուցիչները խղճմօրէն ու լիովին կատարեցին իրենց պարտը ու Ընծայարանի այս տարի ալ տուա իրմէ սպասուած նոզենոր հունձքը ու Միաբանութեան կազմին վրայ աւելցան մեց խոստմնալից անդամներ, որոնք արդէն լծուած են զանազան պատօններու, եւ Ս. Տեղեաց ու այս մեծ Հաստատութեան զանազան հիւդեռուն մէջ տիող ու աշխատող իրենց նոզելից ու միաբանակից երեց եղբայրներուն նես հաւատարմաբար ու սրտուանդն սկսած են արդէն իրենց ծառայութեան բաժինը բերել Ս. Արոտի: Գալով Տպարանին, թէեւ տիրող կացութիւնը մի ժիշ գանդադեցուց անոր գործունելութիւնը, բայց եւ այնպէս նոզ կը տարուի ՍԵՐՈՒ ամսաբերքը լոյս ընծայել կանոնաւորապէս: Մեր կողմէ կարգուած Խմբագրական Մարմինը գրեթէ տարիէ մը ի վեր կրցաւ արժանի բարձրութեան վրայ պահիլ Ս. Արոտի պատօնները ու ոչ մէկ ջանի չխնայել լցցնելու համար մեր երանաւորի Պատրիարքին այդ մարզին մէջ ալ բողած բացը:

Պատրիարքութեան ենթակայ բեմերը եւ չեն դադրած մեր նոզածութեան առարկայ ըլլալէ: Անոնց վրայ կարգուած նոզենոր տեսուանդն նույրումալ կ'աշխատին բեմականներու նույրութեան ու անոնց զաւակներու գաստիարակութեան գործին մէջ: Սուրբ Ս. Արոտ իր ներկայ դժուարին կացութեան մէջ խոկ՝ ըստ առաջնոյն՝ կը տարունակէ ընձեռել իր բարոյական ու նիւրական նպասները անոնց:

Սյմմ նոր Տարիի սեմին վրայ կանգնած՝ ամենուն միակ բաղձանքն է խաղաղութիւնը, վասնզի կայ դժբախտաբար պատերազմը, որ թէեւ ներկայիս սահմանափակուած է որու նականներու վրայ, բայց կը սպառնայ ընդգրկել մերձակայ Երկիրները ու տարածուիլ մինչեւ Արեւելք: Կայ բարեբախտաբար նաև խաղաղութեան բաղձանքը ոչ միայն չեզոք, այլ եւ պատերազմիկ տէրութեանց մէջ: Մարդեմ որ ժիշ ատենէն իրականանայ այդ բաղձանքը, փարատի ամենուն վրայ նետող մղձաւանջը ու այս նոր Տարին ըլլայ առշալոյսը տարիի մը բարօր ու եցանիիկ:

Կրկնելով ժողովակալութիւնն արտայայտուած ժողովաւորութեանց ու մալքանեներուն համար, ես ալ փոխադարձաբար Ս. Արոտիս պատուական Միաբանութեան եւ պատօննեից, վարժարանաց բարեջան ուսուցիչներուն եւ ուսանողներուն, նաև մեր սիրելի Հայ ժողովուրդին ուղղելով խօսի՝ կը ժողովաւորեմ նոր Տարին ու սրիս բոլոր ջերմութեամբ կը մաղքեմ որ Բարձրեալն Ասուած իր նախախնամական Աջով նովանաւորէ Հայ ազգի ու Հայ. Ս. Եկեղեցին թէ՝ Հայրենիքին եւ թէ՝ Սփիուրքին մէջ ու Առաքելական Սուրբ Ս. Արոտ՝ իր սրբանուէր Միաբանութեամբ՝ պայծառ, բարեզարդ ու անսասան պահէ միշտ եւ յաւիտեան. Ամէն:

ԿՐՈՆԱԿԱՆ

Մ Ո Գ Ե Ր

Յիսուսի ծննդեան նախօրեակին, արեւելքի կարգ մը երկիրներէն երեք մոգեր կուգան երուսաղէմ, ստուգելու համար այն արտասովոր ծնունդը որուն աստղը տեսած էին իրենք: Այս պարագան տիեզերական հանգամանք մը կ'ընծայէ Յիսուսի ծնընդեան, զայն տարածելով բովանդակ մարդկութեան հասկացողութեան:

Այդ օրոնումը նոր չէր, զարեր լեցուած էին այդ տագնապով: Լոյս որոնելու այդ ըղձանքը յաւիտենական է, այսօր ևս այդ տագնապը աւելի քան երբեք սուր է, հակառակ երկինքը նուաճելու մեր բոլոր յաւակնութիւններուն, հակառակ երկիրը մեզ գերի ըլլած ըլլալու մեր ստոյգ մեծամութեան: Խորքը չէ փոխուած այլ ձեւը միայն: Աստղը լոյսի պաշտամունքին խորհուրդն է, վասնզի մոգերը տիեզերքի տաճարին քուրմերն էին, արգոնաւորդները լոյսին, երջանկութեան, մեծ գաղափարական գրութեանց խուզարկուներ: Այս օրոնումը, արդիւնք հոգեկան պէտքերու, կը նախագրէ ընկերային կեանքի վատասերում եւ անկանոնութիւն, եւ այդ ձգտումին նպատակը եղած է միշտ նուաճելու նիւթին տիրապետութիւնը, եւ մեղմելու մարդկային տառապանքը: Բոլոր կրօնները, և մարդկային բոլոր սխրագործութիւնները իրենց զսպանակ ունեցած են յաւիտենական այդ իրողութիւնը, Ծնունդէն առաջ և Ծնունդէն զերջ:

Մարդկային հոգին միշտ օրոնեց լոյսը, և անոր մէջ խորհրդանշեց այն ինչ որ քիչ անգամ կը բացատրուի, որ էոյթն է կրօններու և իմաստասիրութեան, անորակելի զսպանակը գիտութեան: Լոյսը առաջին չնորհն է ստեղծագործութեան:

Մեծ բարեկարգիչ Զբագաշտ յաւիտենական կոչած էր լոյսը: Տիեզերքի Տէրը լոյս էր, և մարդկային հոգին յաւիտենական արգոնաւորդն այդ լոյսին:

Բոլոր ժամանակներու աստղագէտներն ու մոգերը քուրմերը եղած են լոյսի այդ սպասին: Այս ըմբռնումով մոգերը կը դառնան աւելի քան սիրելի ու խորհրդաւոր, ինչպէս նաև այժմէական, վասնզի լոյսին տենչը կիրքն է միայն ազնուական հոգիներուն, և երջանկութիւնը՝ լոյսի զգեստ մը մեր գժբախտ մարմիններուն վրայ:

Պիտի ուզէի փորձ մը ընել, ցոյց տալու թէ ինչպէս այդ ձգտումը կ'իրանայ աստուածայայտնութեան նախօրին, արեւելքի կարգ մը երկիրներու մէջ:

Ըսի թէ այդ որոնումը, այդ տագնապը, արգիւնք էին մարդկային ապերջանկութեան, ընկերային վատասերման, և որ իրողութիւն մը ըլլալէ աւելի բան մըն էր Արեւելքի մէջ, որուն գարաւոր պատմութիւնը մեզի ծանօթ է իր քմայքոտ, հեւքոտ ու արիւնոտ պատկերախաղերով: Ուր կեանքը մահուան կը ոյցիթով քալած է, ուր կիրքն ու գաղանութիւնը միշտ վարձատրուած են, և անարդարութիւնները անպատիժ մեացած, մարդը մղելով այս բոլորը ըմբռնելու անխորտակելի ձգտումին, որուն արտայայտիչներն են քիչ մը բոլոր կրօնները: Մահէն անդին տեսնելը մարդ սորգած է մահուան ճիրաններուն ներքեւ:

Այն օրերուն մարդը աւելի գժբախտ էր. մարդկային ընկերութիւնը բաղկացած էր երկու իրարամերժ եղբերէ, իշխողներէ և գերիներէ, հարուստներէ և աղքատներէ, գիտուններէ և տղէտներէ:

Ճիշգ է թէ նախապատմական աղջամուղին, Արեւելքի մէջ առաջին անգամ վառուեցան մարդկային քաղաքակրթութեան ճրագները. այդ լոյսերու հայրենիք հանդիսացան հեռաւոր Հնդկաստան, Եղիպատոս, և հարաւային քանի մը գետահովիտներ, ուր նախնական մարդը աւելի մեծ յարմարութիւններ գտաւ բնութեան գէմ կրուելու, իր կացութիւնը բարւոքելու, և սաեղծելու քաղաքակրթութիւններ, որոնց փառաւոր մեացորդներու վրայ աշխարհ ցարդ հիացումով չէ զադրած նայելէ:

Բայց ի՞նչ էր այդ քաղաքակրթութեան ոգին, ի՞նչ կուտար ան տառապակոծ բազմութեան որ իրբե ստրուկը կը ջանար և կը նիւթէր միայն պետութեան փառքին համար: Մարդերու այդ մեծ զանդուածը մէկ պարտականութիւն ունէր միայն՝ աշխատիլ,

և մէկ պարտաւորութիւն՝ հնազանդիլ։ Արեւելքի այդ հարուստ և արգասարեր երկիրներում յաճախ յեղաշրջումներ եղան, բայց բոլորն ալ վերէն կը սկսէին, և չէին հասներ զանգուածին։ Նիւթական քաղաքաթութեան մը արդիւնք եղող հսկայ քաղաքներ, բուրգեր, և յիշատակարաններ, ամուր մինչև այսօր, պերճախօս վկաներն են անորակելի գժբախտութեան մը։

Զկար հասարակական և անհատական զարգացման զաղափար, և ունէ ընդուժմարում ազատութեան մասին։ ամէն տեղ բռնութեան լուծն էր ծանրացած, զանգուածները հազիւ կը տարբերէին անսառւններէն։

Աւանդութիւնը թէիւ անյարիք, բայց չէրացող պատմութիւնն է ժողովուրդներու, երբեմն աւելի լայն չափով խոսցուցած իր մէջ գարերու ողին։ Եւ աւանդութիւնը այդ մոգերը կը բերէ մարդկային փարթամ կեդրոններէն, հինցած քաղաքակրթութիւններու սատաններէն, խորհրդաւոր ու հեռու Հնդկաստանէն, Միջազետքէն, և ոսկի գետերու, ու արի արիւններու երկիր Պարսկաստանէն։ Համատարած այդ խաւարին մէջ իրբե սպասման խորհրդանիւ կը կենան անոնք, աւանդապահները ոչ միայն հին կրօնին, խմասութեան և գիտութեան, այլ և միտքն ու խլճմանքը մարդկութեան, տառապագին թրթուացումը իր կարիքներուն, արգոնաւորդներ երջանկութեան, փնտուելով երկնքին վրայ մարդկային ճակատագիրը լուսաւորող սատղեր, ա'յն ինչ որ երկիրը չի տար։

Ու մութ բայց խորհրդաւոր գիշերուան մը միջոցին, ինչպէս կը պատմեն գիրքեր, անոնք երկնակամարին վրայ կը նշմարեն անսովոր լոյս մը։ Խաղաղ ու գեղեցիկ են արևելքի գիշերները, իրենց մոյք կապոյտով և աստղերով, և խորհուրդին ու վսեմին սիրահար հոգիները հոն գտած են միշտ դոյզն կազդոյրն ու սփոփանքը իրենց տեսչերուն։ Արևելքի երկինքները միշտ հայելիացուցած են իրենց խաղաղ խորութիւններուն մէջ այն ինչ որ անպարագիրէլի է տարածութեամբ, և անչափելի ժամանակով, խորունկ լուսութեամբ, զերթ մահ, բայց կինդագանի յաւիտենականութեամբ, նման լոյսի։ Մի՛ զարժանաք որ կատարելութիւնն ու յաւիտենականութիւնը խորհրդանշուին երկին-

քով ու լոյսով, մի՛ զարժանաք երբ երկինքը ցուցուի իրբե աթոռու կեանքի յաղթանակին, մի՛ զարժանաք որ երկինակամարը պանող աստղերը իրենց խորհրդաւոր շարժումներով կարենան հեգել մարդկային առագան, իր խորհրդաւոր ճակատագիրը։ Մոգերը այդ երկնագրութիւնները կարդացող գպրապետներ են հին աշխարհի։ Նոր աստղը գտնուած բանալին է երկինքներու գարպասին, մարդկային ապագայ երջանկութեան։

Զգած Արևելքի խաղաղ գիշերները, ձըգած իրենց աստղագիտարաններն ու աստղերը հէքեաթ գեղեցիկութեամբ մոգեր կը հետապնդեն Աստղը օրերով ու գիշերներով։ Ամէն տեղ ուր լոյսը կ'առաջնորդէ զիրենք, կը տեսնուի ու կը զգացուի մարդկային խորութիւն։ Աւագով ծածկուած խրճիթներէն մինչև բերդութեամբ մոգեր կը հետապնդեն մինչև երգերն ու ապաստանարաններն իշխաններու, պալատներու շքեղութենէն մինչև բարձունքները բուրգերուն, նոյն լացն է որ կը լսուի եւ Աստղի պայծառ բայց տխուր լոյսին մէջ երկնքէն հեռացող երկիրը կը նմանի միթթարութեան կարօտ ցաւի տան մը։

Երուսաղէմ ուր կ'առաջնորդուին իրենք երկար ու տաժանագին ճամբորդութենէ մը յետոյ, տարբեր չէր այն երկիրներէն, ուրկէ անցած էին, իր վիճակով ու ճակատագրով։ Արևմտեան կեսարներու արիւնոտ ծիրանիին շուքը կը տիրէր հոն չարագուշակ մարդու մը իշխանութեամբ։ Անիրներով լեցուն, վաւաշոտ ու կասկածամիտ Հերովդէսը, ծարաւ ոսկի և փառքի, մին էր այն հրէշներէն որոնք իրենց ծնունդով կ'եղբայրանան անապատի իժերուն և աղուէսներուն։ Մոգեր շուտով կրցին ճանչնալ զինք, ընտանի ըլլալով անոր տիպարին արգէն այլուր։ Աւետարանը կը պատմէ թէ պահ մը Աստղը կորսուեցաւ անոնց տիսողութենէն։ Կը խորհիմ թէ մարգարէները սպանող քաղաքին մեղքն էր որ այդպէս կ'ամպանար ընդմէջ երկնի և երկիր։

Անտարբեր է երուսաղէմը սակայն ու կղզիացած, անմասն այս որոնումէն, և անհաղորդ օտար ազգերու։ Ան որ զարերով իրեն գեր էր տուած Աստուծոյ խօսքին ընդունաբանը ըլլալու, ուրիշ խօսքով երկնքի լոյսին պահպանիչը մեր այս աշխարհի մռայլ դժբախտութեանց վերև իսրայէլը կը սպա-

սէր, մինչ ուրիշ ժողովուրդներ կը տարածուէին, կը տիրապետէին, կը միաձուլուէին ու կ'օրոնէին ինչ փոյթ թէ ստարները կ'իշխէին Ս. Երկրի մէջ, և թէ կ'ուշանար Խորացէլի փրկութիւնը, անստորդ այս ներկայի գէմ Խորացէլը կը սպասէր: Սակայն իր ըսպասումը փոխանակ ըլլալու զիտակից ու արգաւանդ ըմբռնումը աղագային, կը զառնար տակաւ եսապաշտ ու կղզիացնող: Խորացէլը մոռցած էր իր փրկութեան օրը, որու մասին խօսեցան իրեն այնքան մարդարէներ, անիկա սպասեց, և տակաւին կը սպասէ Խորացէլի փրկութեան ու Խաղաղութեան իշխանին:

Բայց աշխարհ չի կրնար սպասել, և յանձին մոգերու կը փնտաէ: Ու մոգերը չեն կրնար սպասել աշխարհն գէմ իր պարխապներուն և սրտին գուռները զոցող երուսաղէմի մէջ: Հին մատեանները Յեթղեհէմը կը մատեաննէին իրը վայր ծնող Արքային, ու մոգերը թօթափելով իրենց ոտքերու փոշին որբազան քաղաքի գուռներուն՝ կը մեկնին գէպի Յեթղեհէմ:

Աստղը գարձեալ կ'առաջնորդէ զիրենք. Խաղաղ են գաշտերը մթակապոյտ երկնակամարին ներքեւ: Հովիւներ, բնութեան այդ աննենդ զաւակները իրենց հօտերուն քովիկն ընկողմանած, կը շեշտէին անդորրութիւնը այդ խորհրդաւոր զիշերուան: Եւ Աստղը կը չողար բարախուն սրտի մը պէս ու կ'առաջնորդէր զիրենք: Հովիւներու և ոչխարներու աչքերուն խորը երկնքի պատառիկներ կը ցուցլան: Բոլորը Աստղին կը նային զարմացած, և մոգերուն՝ որ անոր կը հետեւին երկուղածօրէն: Երկնքը երբեք չէր եղած այնքան լուռ ու խօսուն, և այնքան մօտ մարդերու:

Աստղը կ'առաջնորդէ զիրենք այրի մը մուտքին, որուն խորը յարդի մը գէզին վրայ, կը ննջէ խանձարուրուած նորածին մը: Կին մը, երկնքէն վար ինկած հրեշտակի մը նման կը հոկէ, և ծերունի մը որ կ'երազէ, հակառակ իր յառաջացած տարիներուն, և ճերմտի մաղերուն, որոնք կը թուէին ըսել թէ երազելու ժամանակը վաղուց անցած է արդէն:

Մոգերը կը հասկնան այրին վրայ փալփլող Աստղին և բացուող երկնքին խորհութքը: կը զգան թէ երկնքին մէջ հորիզոն մը բացող Աստղին ներքեւ ծնող Մանուկը,

պիտի բանար նոր երկինք մը մը հոգիներու մէջ: Թէ աշխարհի մէջ բան մը պիտի փոխաւէր, թէ այս տկար մանուկին ետե երկինքը կար աւելի խօր ու խօսուն, քան Միջաղեաքի զիշերներուն, և առջեւը ապագան: Դի Մանուկը մօտ է աւելի երկնքին, ինչպէս երիտասարդզը աշխարհին: կը զգան թէ այս տկար ու գողգղացող Մանուկը իր անորոշ ապագայով, պիտի ըլլար լոյրը աշխարհին, սիրոյ ոսկի ոզակը երկնքի և երկրի, մարգուն և Աստուծոյ միջե խզուած շղթալին: Թէ անօրորան այս Մանուկը իրեն իրեն սրբաց ընտրած էր բովանդակ աշխարհը: Թէ ան մարմացած սէրն էր, աշխարհը տաքցնող ոզին, որ այս խաղաղ զիշերով կը բանար երկնքին սիրան ու մարգուն արգանդը:

Կը խօնարհին նորածինին առջև՝ անոր ընծայելով խորհրդաւոր նուէրներ, պատրաստուած ո՛վ զիտէ որ ծիրանածինին համար: Եւ աննոնց հետ միասին կը խօնարհին կրօնն ու խօսատութիւնը հին աշխարհին:

Այս տարօրէն զիշեցիկ և սրտառուչ տեսարանին մէջ կուգան հովիւները, մինչ վերը երկնքին մէջ կ'երգեն հրեշտակներ: Մ'րքան պիտի ուզէի որ երկնքի ու երկրի այս հաշտութեան վրայ Աստղը վշուր վշուր տարտղնուէր լուսակապոյտ երկնքին մէջ, զին կը համար գարերով սպասուած կախարդական պատամբ, «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն և մարդուկ հաճութիւն»:

ԵղիՇէ ՎԱՐԴԱԿԵՏ

ԽՈՐՃՈՒԲԴ ԵՒ ԽԾՍՓ

Պատերազմը, արեան ծարաւով եւ ուրիշին դիմ մղուած ատեն՝ միակ խաղն է, զոր, վերշացած պահուն, երկու կողմերն ալ կորպուցուցած կ'ըլլան արդէն: Բայց երբ մողավորդ մը կամ անհան մը ինք իր մեջ և գաղափարական գետնի վրայ կը կատար զան, իմացուկան եւ բարոյական կորովի այն ազնուական կիրառութիւնն է, որուն նետեւանէր փրկարաց է անվեկ:

ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐՔ

ԵՐԶԱՆԿՈՒԹԻՒՆ^(*)

«Մերակի լեռն ի Տէր յանձնոյն մամ, զարձեալ ասեմ, ուրախ լեռնք»:

(Փիլիպ. Գ. 4)

Տարօրինակ կամ գէթ անժամանակ պիտի թուի արգեօք Սրբազան Առաքեալին այս յորդորը:

Հարց կուտամ այսպէս՝ մտածելով թէ օրուան տաղտուկին կամ նոյնիսկ տառապանքին մորմոքն է որ անմիջապէս պիտի արթնայ գոնէ շատերու մտքին մէջ։ Անոնք օրուան հոգն ունին։

Խանգարուած է աշխարհի խաղաղութիւնը։ պատերազմին վոթորիկը ծայր տըւած է եւրոպական ցամաքամասին վրայ։ զէնքն ու թնդանօթը սկսած են իրենց աւելները գործել քաղաքներու և գիւղերու մէջ, մարդկային զոհեր ամենուրեք թափթիելով զիտապատ և պետութիւնները որ քան զօր սարսափով կը լեցուին խորհելով որ հետզետէ կրնայ ընդարձակուի կոռու դաշտը ու կարելի չըլլար չափ զնել կիրքերու մոլուցքին։ Սյա կացութիւնը փոխած է արգէն կեանքի բնականոն պայմանները ամէն կոզմ, բոլոր տուններէն ալ ներս, և ծանրազոյն նեղութիւններ ևս ի յայտ բերելու երկիւզը կը ներշնչէ։

Ահա օրուան հոգը, որ պատճառ եղած է ու կ'ըլլայ շատերու լուրջ մտատանջութեան ու խոր ցաւին և որմէ իրաւունք կը ստանան անոնք որ կ'առարկեն թէ կարելի չէ տեական ուրախութիւն կամ երջանկութիւն ունենալ, ինչպէս ներկային գաֆան պայմաններն ալ կը հակասեն Սրբազան Առաքեալի յորդորին։

Եթէ ուզէք սակայն որ այդ առարկողները աւելի որոշ ու մասնաւոր օրինակներով հասկցնեն ձեզի իրենց հակառակ տեսութիւնը, անոնք պիտի յանդգնին այս օրերու կեանքի պայմաններն իսկ անտես ընել ձեր առջև պարզելու համար ռարցունքի հովիտնն համատարած, որ այս աշխարհն է, ուր պիտի մղուիք տեսնելու՝ ժամանակներու ամբողջ երկայնքին վրայ՝ վշտի և հեծութեան այրուցքներէն քայքայուած գէմ-

քեր անհամար։ Անոնք պիտի ցուցնեն ձեզի երկարաձիգ կարավանը զեղջուկներու, մեծահարուստներու, իշխանաւորներու և թագաւորներու որոնք զոհերը եղած են կործանարար քայքայումներու և իրենց ապրուժներուն դառնութիւնը քամած են ի վերջոյ պայծառ երազներու կուռքի մը մախրացած կոյտին առջեւ Անոնք պիտի կրնան մատնանշել ձեզի նոյնիսկ ընտանիքի սոսկական անդամներու տիրատեսիլ պատկերները։ մարդ մը՝ որ իր սիրասուն զաւկին մահը կ'ոզքայ անմիջիթար, երիտասարդ ամուսին մը՝ որ անչէքք կը կարգայ զինքն իր սիրելիէն զրկող չար բախտին, յուսահատ որբեր՝ որոնք ամայացած խրճիթէ մը ներս կամ բաց հոգերու հոսանքին անձնատուր՝ իրենց զգացումները սուր սլաքներու վերածած են խրելու համար զանոնք իրենց զբժեախտութիւնը կարծես ծաղրող սիրաքայլ անցորդներու սրտերուն։ Տառապանքն ուստող ու տառապանքէն ուտուող այդ զըժեախտութերուն զուր չէ՝ միթէ խօսիլ երջանկութեան մասին ու սպասել որ անոնք կարենան ըլլալ այն ինչ որ խօսա անձանօթ կը մնայ անոնց, ինչպէս արեգակին լոյսն ու չուլքը՝ լերանց ընդերքներու խաւարակուռ անգունդներուն։

Բայց այս ալ չէ ամբողջութիւնը այն օրինակներուն կամ լուսաբանութեանց ուրոնցմով կ'ուզուի խրամ շինել առաքելական շանչով քարոզուած ուրախութեան կեանքին առջեւ կ'ըսեն տակաւին, քօղազերծելով ընդհանուր մարդկացին կեանքի երեսներն իրենց մերկութեանը մէջ։ «կարելի չէ գտնել ու է կեանք, ինչ տարիքով ալ եղած լինի ան, որ ապրած ըլլայ միշտ անվրդով ու խաղող։ Ամէն կեանք ունեցած է իր խոռվքը, կամ փիզիքական օրէն կրուած հարուած մը կայ կորսուած, անգին վառ երազ մը՝ խարկանքէն յափշտակուած ու տարուած և այլուր բերկրալից յաջողութիւն մը՝ եղկելիորէն չախչախուած։ Երբ այսպիսի խոցոտիչ ցաւերէ զերծ չէ մարգկային մէն մի կեանք, կ'եղբակացնեն անոնք, ցնորական միայն պէտքէ նկատել տեական երջանկութիւնը, որով լեցուելու յոր-

Քարող՝ խօսուած Յիշմակի Ա., Կիրակիին Ա., Յակոբյան Տանարին մէջ։

դոր կը կարգայ Առաքեալը մարդկութեան:

Մի՛ զարմանաք սակայն երբ ըսիմ ձեզի թէ Սրբազն Առաքեալին խօսքին որպէս թէ հակասելու համար բերուած առարկութեանները երբեք չեն հակառակիր անոր պատղամին ճշմարտութեան: Վասնզի տառապանքը երբեք ժխտումը չէ ուրախութեան կամ երջանկութեան, այլ ընդհակառակն՝ տառապանքով վմիայն հասկնալի է երջանկութիւնը: Կարելի՞ է միթէ ըսել թէ խաւարը ուրացումն է լոյսին:

Բայց աւելի ևս չյառաջացած, պէտք է ըսել նախապէս որ երջանկութիւնը արդինք մըն է որ իր պատճառն ունի: Կամ ըսինք՝ վիճակ մըն է ան որ առարկայի մը վրայ խարսխած է իր գոյութիւնը: Շինուածք մըն է ան, հոգեկան շինուածք: Ու այդ հանգամանքով այնքան իրական կամ տեսական է ան որքան տմուր է իր հիմնաքարը, իր գոյութեան նեցուկը: Խոկ տեսակները այդ կիմնաքարերուն: — Բազմապիսի: Խնչո՞ւ երջանիկ է կամ գոնէ այդպէս կ'երեի սա կամ նա: Վասնզի հարուստ է ան ու իր ինչքով գոհացում կրնայ տալ իր հաճոյքներուն ու փառասիրութեամբ, կամ կարեոր զիբեք մը գրաւած է ան ընկերութեան մէջ ու կը գովարանուի իր հմայիչ ձիբքերուն համար, կամ իշխանն ու վեհապետն է ան բիւրաւոր հպատակներու և իր թագին պերճանքով ու զիւթանքովը կը վերանայ, կամ շինական մըն է ան որ իր ազարակին կենդանութեամբ կը խանդավառուի, կամ զիտութեան մը ակնյայնի տեսարանն է ան որ իր հանճարին փառքը կը վայելէ, կամ պարզ արհեստաւոր մըն է ան որ իր ընտանիքին ապրուստը ճարել կրնալու գոհունակութիւնն ունի, կամ հայր մը՝ որ իր զաւակներով կը միսիթարուի, կամ մէկը՝ որ չքաւորի մը օգնութիւն հասցուցած ըլլալու հաճոյքը կ'ըմբռչինէ, ևն. ևն. Ու այս վիճակները բնական բերումներն են մարդկային բնութեան:

Պիտի ըսենք ուրեմն որ երջանկութիւնը մէկ պահանջքն է մարդկային հոգիին, որ տկարութիւններով զգածուած է: Եթէ հոգիին կրակն է որ բանկցուցած է մարդկային կեանքը, երանութեան զգացումը այն ուժն է որ կայծ կուտայ այդ կեանքին ու կը հրահրէ միշտ բոցավառ պահելու համար զայն: Մարդկային հոգին տկարութիւններով

զգածուած է, ըսինք, երջանկութեան շունչը՝ մարդուն մէջ՝ այն սպեղանին է որ սահմանուած է բուժելու այդ տկարութիւնները:

Եւ սակայն երջանկութիւնը՝ իրեւ դարման մարդկային հոգիի վէրքերուն՝ այն ատեն միայն բուժիչ է ու կենդանարար, երբ հարազատ տարբերով շաղուած ու կազմուած է ան: Խոկ մահացու կը զառնայ ան երբ խարդախսեալ նիւթեր ներմուծուած են անոր մէջ: Երջանկութիւնը կեանքն է անզամ՝ տառապանքով շաղուած, բայց մահն ալ երջանկութեան պատմուածնը կրնայ հագնիլ առժամապէս:

Էսինք թէ երջանկութիւնը սահմանուած է կենդանարար սպեղանին ըլլալու հոգիին: Հոգին աննիւթական է: Աւստի հոգիին դարմանը աննիւթական տարբերով միայն պէտք է բաղադրուած ըլլայ, բուժիչ լինելու համար: Նիւթը լոկ քայքայում կրնայ պատճառել հոգիին: Աննիւթական երջանկութիւնն է տեսական, նիւթը վաղանցիկ վայելք մը միայն կուտայ:

Կորստական երջանկութեան տիպար պարագայ կամ օրինակ մըն է որ կը ներկայացնէ այսօրուան ձաշու Աւետարանը (Դկ. ԺԲ. 13-ՀՕ): Ի՞նչ է այդ առակին պատճածը: Հարուստի մը մասին է: Հարուստ մը որ ընդարձակ արտեր ունի: Հունձքի ժամանակ է: Կատարել կուտայ ան իր արտերուն հունձքը, որ առատ է շատ, այնքան առատ որ իր խոշոր շտեմարանները անբաւական կ'ըլլան պարունակելու համար հրսկայական արգիւնքը: Ի՞նչ պէտք է ընել ուրեմն: Կը մտածէ ան ու կը ծրագրէ անմիջապէս քանդել իր բոլոր մթերանոցները ու նորերը շինել աւելի մեծ: Երբ յաջողած է անոր այդ ծրագիրը ու կրցած է ան ամբարել իր անդաստաններուն բովանդակ ինչքը, բերկրապատար խնդութիւն մը կը համակէ զայն, որ՝ զգլխած՝ կը գոչէ ինքն իրեն «Ո՞վ իմ անձս, ահաւասիկ անսպառ հարստութիւն քեզի, կ'ը, խմէ՛ և ուրախացի՛»: Սակայն Աստուած, որ Տէրն է կենաց, կը պատասխանէ այդ անմիտ մեծատունին: «Այս զիշեր իսկ հոգիիդ պիտի առնուի, ուրեմն պատրաստածներդ որո՞ւ պիտի մնան»:

Նիւթին վախճանը անկում ու ոչնչացում է անխուսափելիօրէն: Բաց աստի, անակնկալ կերպով է որ տեղի կ'ունենայ կորստաբեր այդ աղէտը, խորտակելով կեան-

քը՝ կարծեցեալ երջանկութեան իր գագաթ-նակէտին վրայ անգամ Անմահական երանութեա՞ն կը ցանկայ մարդկային հոգին բնականօրէն. զայր պիտի կրնայ գտնի ան միայն հոն՝ ուր քրիստոնէական կեանքին դռւոները կը բացուին, գերազոյն ճշմարտութեան լոյսերուն ներքս։ Ուրիշ ու է ճամբայ կամ միջոց, ամէնքն ար ծանօթ՝ նիւթին հրապարյաներէն դժուարաւ ազատիլ կրցող մեր բնութեան, զոր կ'ուզուի ծառայեցնել նոյն նպատակին հասնելու համար, ահաւոր ձախողութեան կը դատապարտուի ուշ կամ կանուխ։

Կը պատմուի աւանդաբար թէ խլամական աշխարհի խալիֆաներէն մին, որ լայնածաւալ կայսրութեան մը միահեծան տէրն էր ու անսահման հարստութեան ժառանգորդ, կը տառապէր ապերջանկութեամբ։ Նա շատ կը մտածէ ու ամէն միջոց ի զործ կը դնէ գարման մը գտնելու համար իր ցաւին, բայց իզուր։ Պալատական մեծափարթամ ճոխութիւններն ու իշխանական անպարտելի զօրութիւնը, որով չըջապատուած էր ան, օրստօրէ կարծես աւելի ևս կը զրգուէն թախծազին տրտութեան ախտը որ կը ճարակէր անոր ներսը ու ամէն հանգստութիւն խլած էր անկէ։ Իր մաքին կարողութեան բոլոր ճիգերը վատնելէ յետոյ ապարդիւն կերպով, կը ստիպուի դիմել աւելի զիտուններու։ Կանչել կուտայ իր տէրութեան ամենէն մեծ զիտունը ու անոր խորհուրդը կը հարցնէ։ Գիտունը երջանիկ միջանիկ ըլլալու միակ միջոց՝ կը թելազրէ թագաւոր-խալիֆային որ երջանիկ մարդու մը շապիկը հազինի։ Խալիֆան անմիջապէս հրաման կուտայ իր վէզիրին որ երթայ գտնէ երջանիկ անձ մը ու անոր շապիկը բերէ իրեն։ Վէզիրը կը չըջի իր վեհապետին աշխարհածաւալ բովանդակ երկիրը, կը մտնէ մեծահարուստներու պալատները, կ'այցելէ համբաւաւոր բժիշկներու և ամէն կարգի զիտնականներու, կը բաղխէ հասարակութիւններէ պատասխուած ու իշխանական զիրքի տէր անձերու դուռները, և սակայն չի կրնար գտնել երջանիկ անձ մը։ Ամէն տեղ տեսակ մը ցաւ ու ամէն ոք վիշտ մը ունի անպայման։ Վէզիրը, ճարահատ ու ձեռնունայն, երբ վերագարձի իր ճամրուն վրայ է, յանկարծ արօտավայրի մը գեղածիածաղ կանաչութեանց մէջ կը նշմարէ հովիւ տղեկ մը որ զուարթօրէն կը կայտոէ իր ոչխարներու հօտին պահպանութիւնն ընելով։ Վէզիրը կ'ուրախանայ որ գտած է վերջապէս երջանիկ մարդը յանձին այդ հո-

վիւին։ Ու կ'երթան առնելու անոր շապիկը, որ երջանկութիւն պիտի տանի իրենց արքային։ Յուսահատութիւնն է սակայն որ կը դիմաւորէ զանոնք այս վերջին հանգրուանին վրայալ, վասնզի հովիւը շապիկ չունէր

Այսպէս է ահա ու այսպէս պիտի ըլլայ ճակատագիրը անոնց որոնք հոգիին կարօտութիւնը նիւթական տարրերով զարմանելու կը ճննին։

Քրիստոնէական կեանքն է միակ իրական ու տեսական երջանկութիւնը։

Եթէ հարստութիւնն է որ երջանկութիւն կը բերէ, ատիկա հոգիին ձիրքերովն ու առաքինութիւններովը շահուած զանձն է միայն։ Եթէ մեծութիւն կամ փառք անհրաժեշտ է. ատոնց աղամանդներուն շողերով ու ճառազայթներով կը հիւսուի արգէն այն պատկը զոր պիտի կրեն աստուածային ճշմարտութեան պատգամներուն հընազանդ գործադիրները։

Քրիստոնէական կրօնէն է որ կը բղիք երջանկութեան աղբիւրը, ու այդ աղբիւրին ջուրն է որ պիտի կրնայ գոհացնել մարդկային հոգիին կարօտութիւնը ու յագեցնել անոր ծարաւը միանդամընդմիշտ։ Յակորի ջրհորէն առնուած հեղուկը անզօր պիտի մեայ միշտ։ Քրիստոս ինքնիսկ ըստ այդպէս։

Քրիստոնէական կեանքը տառապանքի կեանքն է։ Բայց արդէն ամէն բարիք տառապանքի գնով միայն կարելի է ստանալ։ Յարութեան աւետիսը Գողգոթայի չարչարանքին արդիւնքը չեղա՞ւ ու չէ միթէ։ Տառապանքը փորձաքարն է քրիստոնէի ուժին։ Կրակով է որ իր փայլը կը ստանայ ոսկին։ Այս պատճառաւ է որ կ'ըսէ Սրբազն Առաքեալը «ամենայն ուրախութեան արժանի համարիջիք, եղբարք, յորժամ ի պէսպէս փորձութեանց ի մէջ անկանիցիք» (Յկր. Ա. 2)։ Այս օրինակն է որ տուած են քրիստոնէական հաւատաքին երանելի մարտիրոսները։

Ուստի, իբրև քրիստոնեաներ, մենք պարտինք սիրով ունկնդրել Սրբազն Առաքեալի յորդորին ու կատարել զայն, թէ իսկ պատերազմը՝ իր ահաւորութիւններով՝ պայթած ըլլայ աշխարհի մէկ մասին վրայ ու մահասարսուու երկիւղ տարածած ամենուրեք։ Քրիստոնէական խաղաղութեան արշալոյսն է որ պիտի ծագի ի վերջոյ։

Ուրեմն, «ուրախ լերուք ի Տէր յամենայն ժամ, գարձեալ ասեմ, ուրախ լերուք»։

Ամէն։

ՏԻՐԱՅԹ ՎԱՐԴԱՊԵՏ

ԲԱՆԱՍՏԵՂՄԱԿԱՆ

ՊԱՏԷՆ ԿԱՒ...

20% ՆՈՐԾԵՎԱՑ ԵՎՐԱՅԻՐԱԿԱՆ

Երբ կը նայիմ հասակին, ներմակ պատին վրայ՝ սե,
Կու զայ ինձի վերլուսին յորդ զգացումն առաջին
Զիս լեցընող, զիս զրկող այդ սե զգեսէն . . . առդ կախուած
Պատէն, նըման մարմինի մ'ուրկէ հոգին է փախած :

Ան պատմունանն էր մըռայլ բայց կրտակն էր նոյն ատեն
Պատող մարմինն ըլլալու կանչըրած տուն Ս.ԱՄՈՒՆԵՅ.
Ան կը դառնար կոչումին խորհրդանիւը պայծառ
Ռւրկէ կայծեր քրոչէին լուսաւորդ իմ նամբան :

Մաւեկեակ մ'իրօք ընորհարեր որուն ծալֆէն վերլուսին
Խմ մէջ զըսայ աբեղան, պատշան մարդուն առանձին
Որ, նեններուն, սահմանուած է Սեղանին ողջակէզ :

* * *

Կախուած նիմա, պատին վրայ, խաղաղ կըսոր մը լարի,
Ա՛լ պարտասած, նալումաւ, խորհրդանիւ մը սակայն :
Ոգեւորիչն երեմնի դատարկրւած իր մարմնէն.
Սըրտիս զարկին անհաղորդ ու կրտակէն իմ պաղած :

Գէմն իմ աչին, ինձմէ դուրս, բայց թերելով զիս ինձի,
Երիտասարդ օրերէս նիմա խըլեակ սրբնի .
Խմ աննահանջ պայժարին մահուր նըւէրն արգադիր՝
Վանականի խուցս իրմով կ'ըլլայ լոյսի առդ տանար :

Նայուածին իր վրայ կը քառի, յոււերս ամրող կ'արքըննան,
Կարծէք հոգիս իմ ըլլար՝ զուրգուրացի իր վրան .
Ա՛լ մաշած է իրեւ նիւք, բայց իր խորհուրդն է անման .
Փափասն է այս. վերջին օրն իրմով իշնել գերեզման :

ՇԱՀԱՐԾ ՊԱՐԴԱՊԵՏ

Օ Ր Ե Ր

Օրեն անդարձ, խոսքմնադրուժ նամբորդներ են,
Ռոսի նրանի Տէրիլիսներու բոկոս անձայն,
Ժամանակի անծայր նամբէն կ'անցնին կ'երպան:

Զեռներուն մէջն իրենց ունին քագ ու աստից,
Եւ ըրբներուն՝ խմասութիւն, վիշ ու ծիծաղ,
Մեծ իզներու անոնք աներգ մեռելարաղ:

Ոչինչ մընաց: Անցեալի դօւնն է յաւէս փակ:
Եւ մանկութիւնս նեռու պարտէզ կախարդական . . .
Մեկնող օրեր խարեցին զիս ու ես չեկան:

Բայց կ'ըսպասեմ ես տակաւին իրենց նամբուն:
Ընդունելու խոսումն անոյց որ կ'ուշանայ,
Մինչ երկիրիք կ'ըլլայ օրուան դագաղն անհուն:

Ե Վ Ի Վ Ա Ր Դ

ԱՐԴԻԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԵՏՔԸ

ՖԱՇԻԶՄԸ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆ

(Շար. Դեկտեմբերի թիւն, 1939).

Ֆաշիզմը կը դատապարտէ նաև Մարքսիզմի դասակարգային պայքարը. «Ոչ թէ երկու դասակարգեր կան, այլ անթիւ. մենք կը պատկանինք զանազան խումբերու եւ դասերու. հետեւաբար այլանդակ պիտի ըլւար ամբողջ կեանքն ու աշխարհը մեկնել երբեմ յաւիտենական պայքարը ընդ մէջ եր-

կու իրերամարտ դասակարգերու». ընկերութեան ֆաշիստ ըմբռնումը ընկերութեան մէջ կը տեսնէ ամբողջութիւն մը անթիւ անհամար դասերու, արժէքներու նույն բարպետութեան մը մէջ դասաւորուած, որ կը կազմէ անոր միութիւնը. արժէքներու այս նույնիրապետութիւնը կայուն չէ, այլ ուժական, որ կը թելազրէ անհատին իբրև իր տարերուն մէջ «փոխուող արիստոկրատիայի» անդամ մագլցիւ այդ նույնիրապետութեան բարձունքը. անհատական նախաձեռնութիւնը և ճիզը առածիր արժէքունին ֆաշիստ մտածումն մէջ:

Ֆաշիզմը հակառակ է նահեւ խալաղապաշտութեան (pacifisme), որ կ'ուրանայ պայքարը, մինչ ֆաշիստ ըմբռնումով «պատերազմն է որ բոլոր մարզկային ուժերը կը հանէ բարձրագոյն լարումի և ազնուականութեան դրույմ կը զարնէ այն ժողովուրդներու ճակտին որոնք քաջութիւնը կ'ունե-

նան գիմագրաւելու գայն»։ հետեւաբար իտալ-հապեշական պատերազմը՝ պատահական գէպք մը չէր, այլ սկզբունքի մը կերարկումը և անհրաժեշտ իրացումը՝ հերոսական գաղափարական կեանքի մը որ կը քարոզուի նոր սերունդին 15 տարիէ ի վեր։ Ֆաշիզմը, չի հաւատար ո՛չ կարելիութեան և ոչ ալ օգտակարութիւնը մնայուն խաղաղութեան։ ան տեսակ մը փորձութիւն է ֆաշիզմի համար, որ մողովուրդներէն կը գողնայ իրենց բարոյական կորովին ուժգնութիւնը։

Ֆաշիստ գաստիարակութիւնը՝ պայքարի գպրոց մըն է։ «Պայքարի մէջ միայն անհատը կ'ազնուանայ եւ կը սրբանայ եւ կը բարձրանայ գաղափարական հերոսութեան եւ սրբութեան, որոնց կը հաւատայ ֆաշիզմը։ որովհետեւ ո՛չ Ընկերվարութիւնը, ո՛չ ալ Ռամկավարութիւնը կարող են այսպիսի գաղափարականի մը։ այս պատճառաւ անոնց ժամանակը անցած է, անոնք պատմութեան կը պատկանին։ որովհետեւ առաջինին նիւթապաշտութիւնը, և երկրորդին՝ անպատճանատու հաւաքականութիւնը, եւ «յաւիտենական յառաջդիմութեան երազը» սիրուն սուտեր են միայն։ Ռամկավարութիւն կարելի է միայն ֆաշիստ ըմբռանումով, իրեւ կազմակերպուած, կեդրոնացած եւ հեղինակութիւն ստացած ռամկավարութիւն։ իրաւունքներու ռամկավարութիւն հաւասարութիւն չի նշանակեր, ոչ ալ տնտեսական այլանգակ միակերպութիւն։ Ֆաշիզմը հակառակ ըլլալով Ընկերվարութեան և Կոմիւնիզմի՝ կը ճանչնայ անձնական ստացուածքը, անհատական նախաձեռնութիւնը եւ լայն տեղ կուտայ անոնց իր հաւաքական գրութեան մէջ։ «Ֆաշիզմը կը հաւատայ սրբութեան և հերոսութեան, ու այն ակտուերուն որոնք տնտեսական ու է շարժառիթ չունին, կ'ըսէ Մուսոլինի։ մերժելով պատմական նիւթապաշտութիւնը կ'ուրանանք գասակարգային պայքարը, իրեւեւ միջոց Ընկերային բարեկարգութեան։ չենք կընար ընդունիլ նիւթապաշտ երջանկութեան մը գաղափարը։ կը մերժենք հաւասարութիւն, բարօրութիւն, երջանկութիւն, որոնք մարդը անասուններու կը փոխեն, որոնք մէկ մտածում միայն կ'ունենան, ըլլալ գէր և կուշտ»։

Ֆաշիզմը կը կենայ, ըստ Մուսոլինիի,

իտէալական իրապաշտութեան վրայ, դասակարգերու համագործակցութեան, անհատական իրաւունքի, արժէքներու գասակարգութեան տեսակէտէ։ իրականացներու համար այս գաղափարաբանութիւնը, ֆաշիզմը որդեգրած է արմեսապետականութիւնը (corporatisme) իրը պետական հիմնարկ և մեթոս ապահովելու համար նաեւ ընկերային խաղաղութիւնն ու համագործակցութիւնը։

Ընկերային այս արհեստապետականութիւնը անուղղակի կերպով կ'ազգէ եկեղեցին։ Տեսնելէ յետոյ ֆաշիստ գաղափարանութիւնը, այժմ քննենք անոր զիրքը Եկեղեցւոյ հանդէպ։ Ֆաշիզմի հականիւթապաշտ ընդհանուր ուղղութիւնը, իր գործոն և կառուցողական գաղափարապաշտութիւնը, ընկերային արդարութեան հիմքրուն վրայ նոր ընկերութեան մը կազմութեան իր ձգումը, և պատմական կրօնական աւանդութեան ու բարձրագոյն արժէքներու հանդէպ ցոյց տուած իր պատկառանքը, կրօնքի համար նպաստաւոր կիմայ ենթադրել կուտան։ Ֆաշիզմի պատրաստակամութիւնը՝ կարգապահութեան, պարտականութեան, նուիրումի, զոհողութեան, և իր ասպետական արհամարհանքը հանգստաւէտ, հաճոյապաշտ գաղքենի կենցաղին դէմ, գաղափարներ են՝ որոնք քրիստոնէական կրօնքի բարոյական ըրջանակին մէջ կ'իյնան։ Բայց, միւս կողմէ ֆաշիզմը կը քարոզէ ամրողջապաշտ պետութեան մը միքրոս որ չի կրնար ներդաշնակութիւն Աստուածային պատգամին հետ։ Ֆաշիզմի համար, Պետութենէ զուրս փրկութիւն չկայ։ իր կեցուածքը Եկեղեցւոյ և կրօնքին հանդէպ բարեկամական պատեհապատճենութիւն մըն է, որ Եկեղեցին կը նկատէ քաղաքական ազգակ մը, զոր Պետութիւնը պէտք է նկատի ունենայ։ 1934 Դեկտեմբեր 23ին Ֆիլարո-ի մէջ յօդուածով մը Մուսոլինի պարզեց իր կրօնական պատեհապաշտութեան տեսակէտերը, որոնք ցոյց կուտան իր Եկեղեցական քաղաքականութեան ուղղութիւնը։ Տուչէն պատմութենէն սորված էր թէ, Եկեղեցւոյ և Պետութեան միջև մղուածերկար պայքարէն, յաղթանակը մնացած էր միշտ Եկեղեցւոյ կողմը։ այս փորձառութիւնը ունենալով կ'ըսէր, «կրօնքին գէմ մղուած պայքարը՝ Անքննելիին Անջոշափելիին և Ողիին գէմ մղուած պայքար մըն է», մինչ

Պետութիւնը չունի գօրաւոր զէնքեր մահացու կերպով վիրաւորելու Եկեղեցին . նոյն իսկ Եկեղեցւոյ խաղաղ, կրաւորական զիմաղբութիւնը բաւական է վիճեցնելու պետական բոլոր հակա-Եկեղեցական ձեռնարկները :

Բայտ ֆաշիստ գաղափարաբանութեան Կրօնիք պէտք է ազատ մնայ իր սեպիական կալուածին, իր անձնական տանը մէջ . «Պետական Եկեղեցին մը գաղափարը երբեք չէ անցած իմ մտքէս» կ'ըսէ Մուսոլինի . ֆաշիզմը պարտականութիւն չունի միջամտելու կրօնական խնդիրներու . Պետութիւնը կրնայ անգիտանալ բոլոր Եկեղեցիները, ինչպէս է պարագան Միացեալ Նահանգներու և կամ որոշել իր յարաբերութիւնը Եկեղեցւոյ հետ մասնաւոր համաձայնութեամբ : Նախապէս Խտալիիան անգիտացաւ Կաթոլիկ Եկեղեցին . և Կոմս Քավուրի բանաձեւը Ազատ Արոռ ազատ Պետութեան մէջ, անբաւարար էր երկրի մը համար, որ առաւելութիւնը ունէր ըլլալու քրիստոնէական կրօնքի մէկ խոչըր ճիւղին կեդրունը : Իսկ ձիուլտութիւնի երկրաչափական բանաձեւն ալ որ Եկեղեցին և պետութեան յարաբերութիւնը կը նմանցնէր երկու զուգահեռական զիծերու, ընդունելուութիւն չգտաւ : Զախակողմեան կուսակցութիւնը իր հակա-կրօնական զիրքով ստեղծեց աններողամիտ կացութիւն մը . այս ամէնքը լուծումի մը յանդեցան ֆաշիստ Պետութեան օրով Լազերանի գաշնազրութեամբ 1929 Փետրուար 11ին . Կաթոլիկ Եկեղեցւոյ կողմէ ստորագրեց Կարտինալ Գասպարի, իսկ Ֆաշիստ Պետութեան կողմէ՝ Վարչապետը՝ Մուսոլինին : Մուսոլինի անով ճանչցաւ Եկեղեցւոյ գերազահութիւնը կրօնական հարցերու մէջ, և նոյն գերազահութիւնը վերապահեց Պետութեան համար ալ, բոլոր պետական, երկրաւոր խնդիրներում . «ոչ մէկ կառավարութիւն աւելի ամրողջապաշտ է կամ հեղինակաւոր որքան ֆաշիստ Պետութիւնը . ոչ մէկ պետութիւն աւելի նախանձախնդիր է քան ան՝ պաշտպանելու պետական ամենակարողութիւնը և գիրքը . բայց ճիշդ այս պատճառաւ ֆաշիզմը պիտի խուսափի միջամուխ ըլլալէ կրօնական հարցերու » . Ֆաշիստ պետութիւնը Բացարձակն է, իրքեւ արտայայտութիւնը Ոգիին որ կը վերանցէ նոյն իսկ Ազգի մը հաւաքական զիտակցութիւնը .

քանի որ Պետութիւնը Բացարձակն է, ան՝ կրօնական և բնականցական նկարագիր մը ունի . «Թաշխստ Պետութիւնը, կ'ըսէ Մուսոլինի, աստուած արանութիւն չունի, բայց ունի բարոյական . կրօնքը ֆաշիստ լմբրունումի մէջ Ոգիին մէկ ուրիշ մարմառութիւնն է, հետեւաբար, կրօնքը ոչ միայն պէտք է յարգուի, այլ նաեւ պահուի ու պաշտպանուի . ֆաշիզմը նոր կուռք, նոր աստուած չէ ստեղծած, ինչպէս ըրաւ Ռուպէսրիէր քոնվանսոնի սրահին մէջ, ոչ ալ Աստուծոյ զգացումը կը վռնտէ մարդոց սիրտերէն, ինչպէս կ'ընէ պոլչեւիզմը . ֆաշիզմը յարգանք ունի հաւասարապէս բոլոր ճգնացներուն, միստիկներուն, սուրբերուն, հերոսներուն, իմաստասէրներուն, խորհուներուն և պարզ ժողովուրդէն հասկցուած ու պաշտուած Աստուծոյ հանդէպուն Եւ քանի որ Խտալացի ժողովուրդին մեծամասնութիւնը կը պատկանի Կաթոլիկ դաւանանքին, ֆաշիզմը՝ Կաթոլիկ Եկեղեցւոյ կուտայ առանձնաշնորհեալ գիրք մը իր գաղափարանութեան և իր Եկեղեցական օրէնսդրական քաղաքականութեան մէջ : «Հոռովմի հարցը որ 1870էն լիւէր ծանր մղձաւանջի մատնած էր Կաթոլիկ Եկեղեցին, և խտալական նորակազմ պետութեան կողին մըխուսած փուշ մըն էր, երկար մաքառութիւնը յետոյ այսպիսի բնական լուծում մը կը գտնէր Ֆաշիստ Պետութեան և Կաթոլիկ Եկեղեցւոյ պետերուն իմաստուն և շրջանայեաց քաղաքականութեամբ :

ՆԱՅԻՉ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆ

Հիթլէր երբ 1933 Յունուարին՝ Պետութեան գլուխ անցաւ և Գերմանիոյ նոր ոզի մը տուաւ, առաջին բոպէէն Գերմանիա հասկցաւ թէ ճակատագիրը Ազգի մը զուուը գուրսէն չի բախտի, այլ իր ներքին հնթագիտակցութեան մէջ պահուած ուժէն : Նըկարագիտը բախտի ոզին է մարդուն համար . Հիթլէր այս ճշմարտութիւնը զամեց գերման ազգի հոգիին մէջ իրրե մողական բանաձեւ . ժողովուրդին սորվեցուց, ինչպէս Շիլլէր իր Wallensteinի մէջ՝ իրքեւ ուսուցիչը էնէրժիի և ինքնազմանութեան թէ՝ ճակատագրին աստերը պէտք է փնտութին ոչ թէ գուրս՝ խաւար երկինքի մը մէջ, այլ

իր իսկ կուրծքին տակ. այս ճշմարտութեան կախարդիչ միակերպ կրկնումով, յառահաւատած ժողովաւրդի մը մէջ արթնցոց ազգային նոր գլուխութիւն, նոր հաւատք, յոյս ու կամք և լիցուց զայն, թերես դերման պատմութեան մէջ առաջին անդամ ըլլալով՝ իրական քաղաքական կիրքով մը:

Նոր և երիտասարդ սերունդի մտքին մէջ պետական նոր գարշաճեւ մը մարմին առաւ, պատրաստ պատանեկան բոլոր բարի ու չար հակումներու. Ազգը մտաւ մէծ քաղաքական արկած ախնդրութեան մը մէջ իրականացնելով ազգային միութիւն մը ուրուն պատրաստ էր արդէն ժողովուրդը 1871 վերսալի գաշինքէն իվեր, և կոտրելով, ըստ նացի յաւակնութեան, մնկուսացման, թշնամութեան երկաթէ շղթան, զոր յաղթական երկրներ Գիրմանիոյ վիզը անցուցած էին, ոտքի կանգնեցաւ շղթայուած Գերմանիան:

Այս մէծ քաղաքական գաղափարականը պայքարի մտաւ զանգան ճակատներու վրայ. երեք ուժեր, պաշտօնապէս հասարակաց թշնամի յայտարարուեցան. կոմիւնիզմը, ազատականուրիւն (Libéralisme), և նրեան(*). Նոր Պետութիւնը վճռապէս հակա-մարքսեան, հակա-ազատական, և հակա-սեմական է: Հիթլէրի պետութեան այս «հակա» նկարագիրը մէկն բռնկեցոց քաղաքական կիրքերու վառնգաւոր կրակը. Նոր Պետութիւնը ուրացաւ պատմութեան մէջ երեցած ճշմարտութիւններու յարարեականութիւնը, և յայտարարեց ազգային նոր գաղափարականի մը բացարձակացեալութիւնը, նոր Պետութիւն նոր տիպի մարդ, և նոր կրօնք մը ստեղծելով:

Նոր Պետութեան հակա-մարքսեան և հակա-պոլչեւիկան նկարագիրը շհշուռած է ո՞չ միայն Ազգ. Բնկերվարութեան՝ իր հակառակորդ Ընկերվարական և կոմիւնիստ կուսակցութիւններու երկրէն զուրս վարելու յաճախակի արտայալած փափաքին,

(*) Այս յօդուածը գրուած ըլլալով նախ քան ներկայ պատերազմի յայտարարութիւնը, նացիւնի կը մօտենայ այն տառեալներով որոնցմով ան կը ներկայանար, զեթ հանրութեան. Արդի պատերազմը ինչպէս յայտնի է, բաւական կետերու մէջ եկաւ փոխելու յօդուածին մէջ արտայալած գաղափարները:

Պոլչեւիկմի հետ մզած դիւանագիտական պայքարին և նախիկին վայմարեան Հանրապետութեան դատապարտութեան մէջ, այս նաև, տեսականորեն, ազգայնական Ընկերվարութիւնը մը հակագրելուն մէջ՝ մարքսեան Ընկերվարութեան, մերժելով Պոլչեւիկմի նիւթապաշտութիւնը և անոր հակագրելով՝ գաղափարապաշտ իրապաշտութիւն մը, զամակարգային պայքարին և աշխատաւուրութեան՝ իրաւունքներու հաւասարութեան և արժէքներու բնական նույիրապետութեան վրայ հիմնուած ընկերութիւն մը:

Հիթլէր Ազգ. Ընկերվարութեան պատմական նշանակութիւնը ակասաւ անոր կեցրոնական և Սրբամեան Եւրոպան Պոլչեւիկմի ներխուսուժումն ազատելու կոչումին և գերին մէջ. որովհետև Շ-Ց տարի առաջ, կեցրոնական Եւրոպան՝ Կոմիւնիզմի, Մարքսիզմի եւ բանատիրութեան միջեւ նախընտրութիւնը մը ընկելու յուստահատ ճգնաժամին մէջն էր, և Հիթլէրէն առաջ, Գերմանիոյ մէջ կոմիւնիզմը զրեթէ կացութեան տէլ գանհանալու վրայ էր. մինչ Հիթլէրի գործի զլուխ անցնելէ ետք Պոլչեւիկմը ոչ միայն ոճիր մը նկարուեցաւ, այլ նաև ուսորկայ զարձաւ անինայ յարձակումի մամուլով, կրթութեամբ եւ բրորականութիւն 1936 Մարտ 7ին, Հիթլէր Ռայխիսթակի առջև Առիբեթ գրութիւնը ոչ միայն բաղականի թենամի յայտարարեց, այլ նաև կրօնական վանոն մը, «թշնամին՝ վերանցական աշխարհ»: «Պոլչեւիկիները կԱստուած գահազրկեցին», Եկեղեցիներն ու կրօնքները խարսակեցին, իրենց հոփն հակայ աշխարհ մը ամայացուցին, ու թշուառ, երկրաւոր գոյութիւն մը ընկունեցին իբր միակ իրականութիւնը մարզունու: Ազգ. Ընկերվարութեան քրիստոնեայ ոզեկանութեան գրութիւնը, ըստ նացի գաղափարարանութեան, միակ պատաւարն է առաջք երեկի պաշտուածներէն որոշ բաներ: Ռամկազմարութիւնը եղած էր և Եւրոպական մէծ աւանդութիւն մը, նոյն

Ազգ. Ընկերվարական Պետութեան հակա-պատաւական ձկտումը՝ դատապարտութիւնն է այժմու իշխողներու՝ անցեալի իշխողներուն դէմ և մահաւանդ Վայմարեան Հանրապետութեան: Եւղափոխութիւն մը պէտք է այրէ երեկի պաշտուածներէն որոշ բաներ: Ռամկազմարութիւնը եղած էր և Եւրոպական մէծ աւանդութիւն մը,

իսկ միապետական երկիրներու համար . Հիթւլի ալ կ'ընդունի թէ իր Պետութիւնը սամակավարակոն մասնաւոր գուշչածեւ մըն է , բայց իրականին մէջ , Գերմանիոյ համար՝ ֆրանսական Յեղափոխութեան վախճանը , որ ռամկավարական սկզբունքներու աւանդութիւնը ժառանգ եւրոպական ցամաքամասի ժառանգութիւններուն ։ Բայ նացի գաղափարախօսներու , Եւրոպական ցամաքամասի պետական Բարլամէնթարիզմի պատմութիւնը ցոյց տուած է թէ ռամկավարութիւնը Եւրոպայի ժողովուրդներուն համար վտանգաւոր քաղաքական թոյն մըն է : Հո՞ն ուր ռամկավարական ազատութիւնը , անհատին իրաւունքները , ուժի կամեցողութիւնը , կ'ըսէ Նացի գաղափարաբանութիւնը , չեն զսպուած բարձրագոյն բարոյականութեամբ մը , ծառայելու պատրաստականութեամբ , քաղաքական հասունութեամբ և պատախանաւութեամբ , ընդհանուրին համար ըմբռնուած տեսիլքով մը , հո՞ն ռամկավարութիւնը , աղէտք մըն է զանգուածին համար ։ Սրդի Բարլամէնթարիզմը ժամանակ եւ գրամ կը վատնէ եւ չարաչար կը գործածէ անհատական պատութիւնը խօսքի ու գործի մէջ . Ռամկակավարութիւնը , կ'ըսէն , Նացիները , կը ծառայէ աւելի քաղաքական շահերու քան գաղափարներու և սկզբունքներու ։ Սրդի բարլամէնթները , կ'ըսէ Հիթլէր , լեցուն են խօսքով ու գաղափարներով . անոնք կը բնան խօսիլ , ճառել , բայց ոչ գործել . մինչ կացութիւնը աւելի քան երեք գործ կը պահանջէ » . ուստի առիթը եղական է մարդու մը համար որ մտածող չէ , ոչ ալ « բրոֆէսիոնէլ » քաղաքագէտ մը , կոմ փայլուն հանճար մը ու նուրբ զիւանազէտ մը , այլ առաջնորդ ծնած մարդ մը , ժողովուրդի խորունկ բնազդուներուն ցուցիչը . ուրիշ խօսքով՝ կերոս մը՝ որ կամք ունի գործելու , կուելու և միլիոններու հաց բաշխելու :

Ռամկավարութիւնը , կ'ըսէ Նացի գաղափարաբանութիւնը , տեսականորէն , կը պաշտպանէ անհատին իրաւունքը և նախաձեռնութիւնը , բայց գործնականին մէջ անհատին կուտայ անոր արժէքին անհամապատասխան տեղ մը և զայն կը խեղդէ զանգուած-գոյութեան և հաւասարապաշտ գաղափարաբանութեան մը մէջ . մինչ Գերման Աղդ . Ընկերվարութիւնը եղական տեղ

մը կուտայ՝ Երկրի մը զաւկին զահելու ինքնութիւնը , իր քաջաւթիւնը , կեանքը , խօստացեալ երկրի մը վերականգնութիւնը կործին մէջ , ուր իր վերածնած ցեղը պիտի ապրէր ազատ և հպարտ : Բայ այսմ Ազատական Ռամկավարութիւնը նկատուած է , իմացապատճեամբ ու գեղապատճեամբ առանձին սերունդիկ մը անկարութիւնը , քաղաքական և կրօնական մարզերու մէջ և նախարդ սերունդին ժառանգ ինկերային մեղք մը :

Հակա-Ռեմականութիւնն ալ , Աղդ . Ընկերվարութեան հանգանակին գլխաւոր կետերէն մին է . Հիթլէրի ստեղծումը չէ ան . հակասեմականութեան խորունկ արմատները կը գտնուին ոչ այնքան մարդու մը անձնական « կոմպլէքս » ին մէջ , որքան փիզիքական և բնազդանցական հակամարտութեանը (antagonism) մէջ ցեղերու որոնց ազգային ինքնազիստակցութիւնը չէ յաղթահարուած իրապէս ոչ տիեզերականութիւնը (universality) և ոչ ալ ազատական մարդասիրութեամբ մը : Այդ հակամարտութիւնը և միտիկ ատելութիւնը Հիթլէր մասամբ իրականացուց անձնական հակարութեամբ եւ մասամբ հրեայ տարրին գերիշխան դիրքին պատճառաւ , զոր ան ապահոված էր իրեն , իր ազգեցութեամբ , մշակոյթով , իմացականութեամբ , անտեսական անկախութեամբ , նախկին Վայմարեան Հանրապետութիւնն արով . գիրք մը՝ որ բոլորովին անհամապատասխան էր ըստ նացիներու , հրեալ բնակչութեան քանակին , բաղկատած գերման ազգարնակցութեան թիւն : Հրեան այսպէս թշնամի կը յայտարարէր և անոր ճնշումն ու հալած անքը աղգային պարտականութիւն :

ԱՐԹՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏ

(Նարունակելի)

ՀԱԽԱՏՔԻ ԵՒ ՄԱՍՄԱՆ ՑՈԼՔԵՐ

Գրիստոնեութեան նետապերած նայատեղ միայն բնականական նեմառտորին մը կամ կրօնական խորհուրդ մը չէ , այլ նաև գործնական կեանիք բարոյական վիճակ մը : Այս պատճառաւ Աւետարանը որին վարդապետական գրուած մը՝ նոյնիւ ու թեեւս նաև տեկի նոյնիւ՝ ուսուցաւմի զիրք մը , նոյնիւ իրուրեան մատեան մին է , որ կը ցուցի մեզի քէ որոնի են այն միջոցները կամ պարաները , որոնց զորադրութեամբ պիտի կարեանք Աստուծոյ կամեմին համաձայն կեանք մը ունենալ :

ՊԱՏՄԱԿԱՆ

ՍԱՐԳԻՍ Վ. ԿՈՒՆՏ

ԵՒ ԻՐ ՄԵԿԱՌԱԿԱՆ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Զարժանալի բախտի մ'արժանացած է Սարգիս Վ. Կունտ, որ եղած ԺԲ. զարու երկրորդ կէսին հիմնադիր մեկնողական գրականութեան նոր սեռի մը, ողջունուած է ժամանակակիցներէն հիացմունքով, տուած է երկասիրութիւններ, հասցուցած է աշակերտներ. բայց ժամանակակիցներէն, նաև մերձժամանակակիցներէն ոչ ոք նախահոգ եղած է աւանդել յաջորդներուն զծեր անոր կենսագրութենէն կամ ակնարկներ անոր ժամանակին և երկասիրութիւններու ժամին: Նաև ժամանակը չէ եղած հաւատարիմ աւանդապահ՝ անեղծութեամբ հասցընելու մեզի անոր երկերը: Կը սպասէինք, որ Սամուէլ Անեցի և իր Շարունակողն, Վարդան Պատմիչ, կիրակոս Գանձակիցի և Միհիթար Ալյիվանեցի, որոնք առաւել կամ նուազ չափով խօսած են ԺԲ. դարու կարեոր դէպքերու և ականաւոր դէմքերու վրայ, գէթ անունով յիշէին մատենագիրս, որ Ցովհաննէս Սարկաւագ Վարդապետին արդիւնաւոր աշակերտներէն մին հանդիսացած էր:

Այս մթաղդած հողի վրայ Մատենագրիս¹⁾ անձի, ժամանակի և տեղւոյ շուրջ լոյսի գէթ ազօտ նշոյլ մը փայլատակելու համար ստիպուած եմ որոնումներով ձեռք բերել առկայծ ցոլքեր: Այսպիսի ցոլքեր նշմարելի են նախ իսկ հեղինակին տողերու մէջ, զորոնք իրեր յիշատակարան գրումած է իր Մեկնութիւններուն վերջը, ինչպէս կ'երեւայ կրկին խմբագրութեամբ, պահուած վենետիկի Միհիթարեանց մէկ ձեռազրի մէջ, ուսկից առած ծանօթացուցած է մեզի Հ. Չ. Ալիշան իր Հայտառումի մէջ: Մանր

տեղեկութիւններ կը գանուին նաև ուրիշ Յիշատակարաններու եւ Յիշատակազրութեանց մէջ, զորոնք կրնանք այսպէս ամփոփել:

I. ԱԳՐԱՔԻՐԵՆԾՐ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱԾ

ՀԱՅՈՐԾ

1ա. «Մոռացայ զծերութիւն եւ զեկարութիւն մասց առ անձուկ յօժարութեանս... եւ Սարգիս <վարդապետ> մականուն <կունտ կոչեցեալ> եւ ոչ իր յիմաստս իմաստնոց եւ տղէտս ի զիտնականաց . . . ի թուականիս նորոյ կ'Գ ստացայ զսա ինձ ի խրատ եւ ի վայելումն:

1բ. Ես տրուպս եւ անպիտանս ի ժառանգաւորս եկեղեցւոյ Սարգիս վարդապետ մականուն կունտ կոչեցեալ, ի գաւառն Արարատեան . . . զեկարութիւն ի բաց եղեալ ձեռն ի զործ արկի եւ բազում աշխատութեամբ ի մին տեղի հաւաքեցի (զլուսափալ միկնութիւն որբոց վարդապետացն) [ի ՈՒՂ թուականնութեանս Հայկազեանս սեռի ի զառն եւ ի չար ժամանակիս, որ չփոթ էր կաթողիկոսութեան իշխանութեան սրբոյն Գրիգորի. զի անկեալ մեռաւ տէր Գրիգոր կաթողիկոսն ի զղեկէն կոպիտառու. եւ այժմ ոչ ոք է յաջորդեալ զաթոռն նորին] եւ աղերս ընծայեցի ի սուրբ եւ յուղղափառ Հայտառունեացդ եկեղեցին²⁾:

2. «Գրեցաւ ձեռամբ թագէոսի եւ Վարդանայ ի յիշատակ մեզ եւ ծնողաց մերոց. . . զրեցաւ ի թուականիս Հայոց ՈՒՂ (այսպէս ձեռազրին մէջ, տպ. ՈՒՂ), ի սուրբ յանապատիս թեղենիս, ի սուրբ Կաթողիկէ զրանս . . . եւ տուաք զսա հոգեւոր եղած մերոյ Աւետեաց, որ տառապէր տարաշխարհիկ ի զիւտս մակացութեան գրոց»³⁾:

3. «Կատարեցաւ հոգենորոց տառս Մեկնութեան սուրբ Աւետարանիս Ցովհաննու, զոր կարգեալ եւ ուղղեալ բազում աշխատութեամբ մեծի իմաստնոց Սարգիս կոչեցեալ, աշակերտ երիցս երանեալ սուրբ վարդապետի Սարկաւագ կոչեցեալ. որ եւ նմա համազուգեալ ի սոյն խորհրդին⁴⁾:

4. Աղպէ զրիչ ի կեչառուս ՈՒՂ (1184)

1) Կը կանխեմ ըսել, թէ նկատի բանիմ հոս Շնորհալի Սարգիս վարդապետը Սեւ Լեռան Քարտշիթու (Քարտշիթու) վանքին, որ ծաղկեցաւ ԺԲ. դարու երկրորդ և երրորդ քոռորդին, գրեց կաթողիկեայց Թղթերու Մեկնութիւնը 1150ին և ապա, 1166ին քի ծերութեանը, տուաւ անոր Համամատութիւնը. հմմտ. Հ. Դ. Ալիշան, Սիսուան, էջ 408—409.

2) Յիշատակարան Յովհաննու. Մեկնութեան, Հայոցառութիւն, էջ 370, է 286.

3) ՈՒՂ:

4) ՈՒՂ:

5) Հայապատում, էջ 399, է 295.

թուին կ'օրինակէ ի վայելումն Աստուածաւա-
տուր արեգայի Դուկասու և Յովհաննու
Մեկնութիւնը. Յիշտատակարանին մէջ կը
դրէ ստացողը⁵.

«Ես թշուասս Աստուածատուր լոկ ան-
ուամբ կրօնաւոր եւ անպիտան աքեղայ
ցանկացեալ սուրբ եւ երկնատեղեաց տա-
ռիս, զոր լատ օրինի երգնազան եւ պա-
ծառացուցիչ ծաղկանց ի միասին հաւաք-
եալ է աշխատանք եւ արի մօսկին Տեառն՝
հմտանք եւ հանճարեղ իմաստիք Հոգեղին
Սարգիս, կաշեցեալ եւ Կունդ. Ճողովեալ
զսոսա ի միասին զերկոցունց զիմոց աւե-
տաքեր բանից Տեառն զՄեկնութիւնն ի բա-
զում սրբոց զիսուեցեալսն եւ մի վայր գու-
մարեալ՝ զԴուկասուն եւ զՑոփհանուն»:

5. Յիշատակարան Բարսղի Ճառերուն,
գրուած ի Հաղբատ⁶.

«Գրեցաւ զիրքս ի թուականիս Հայոց նորումս Զթ (1172), իսկ Հոռոմոց ՅՇ.Դ. (1172) ի հայրապետութեան տեառն Եերսիսի Հայոց կաթողիկոսի եւ ի թագաւորութեան Վրաց եւ այլ բազում ազգաց Գէորգեայ որդւոյ Գեմենարէի։ Գրեցաւ ձեռամբ Սարգիս նուաս գրչի եւ պիտարի եւ լեշին աշակերտի եկեղեցւոյ սրբոյ ուխտիս (Հաղ-բատայ)։ Յորոց ամենացունց հայցիմ չլինել մեղադիր տգիտութեան իմոյ» . . . :

6. «Յաւուրս Շնորհաւոյն միւսանգամ
եւս յիշատակ լինի Թեղենեաց՝ գալստեամբ
անդը նորոյ վկային Յովսեփայ Դունեցոյ
տաճիկ ազգաւ, հաւատացելոյ ի Քրիստոս,
որ գանակոծ լեալ ի հօրէն «ելեալ գաղտ
ի ծնողացն զնաց առ Մարգին նզնաւորն ի
Թեղինիս» եւ նա քաջալերեալ յորդորեաց
զնա ի հաւատս Քրիստոսի. եւ առաց չըջե
ընդ վանորայն. եւ նա առեալ զաղօժի
սրբոյն ել եւ գնաց ի Հաղթատ»:

Հ. Պ. Ալիշան այս յառաջըքութիւնը՝
կարգացած է Յօվաէփ նոր վկայի վկայա-
բանութեան մէկ խմբազգութեան մէջ, որ
այլուստ անձանօթ է մեզի: Տեղիքս «Հա-
յոց նոր վկաները»⁸ հաւաքման մէջ այս-
պէս ներկայացուած է. Գնաց «ի գաւառն
Մաղաղայ որ է Բջնի, ի վանս Եշիսանի, որ
է ի մէջ երկուց լերանց բարձրագունից՝
պարփակեալ անտառախիտ ծառոք, առ այր

ուն միանձնացեալ, որ առաւել փայլեր յաջ-
խարիս մերում մահուր վարուք, ճգնառա-
կան հանդիսիւ, բահանայական շնորհի զար-
դարեալ, Սարգիս կոչեցեալ, Խրատ իմն
գտանել ի նմանէ, եթէ որպէս վարեսցէ
զկեանս իւր եւ կամ ո՞ւր երթեալ գաղա-
րեսցէ: Եւ ուսեալ ի նմանէ՝ երթայ այնու-
հետեւ ի գաւառն Սեւորդեաց, ի գերազա-
կան եւ ի հռչակաւոր ուխտն ի Հաղբատ եւ
ի Սանահին»:

Յովսէփ Նոր վկայ նահատակուեցաւ ի
Դուքին Հոկտ. 1170:

Այս տեղ յիշուած իշխանի վանքը նոյն
է միւս բնագրին «Թեղենիաց» կոչած վան-
քին հետ, ինչպէս կարելի է հետեւ ցնել տեղ-
ւոյն նկարագրութենէն:

7. Կայ թեղենեաց վանքէն ոչ շատ հեռու, այժմեան Զորուտ կոչուած գիւղին մէջ ուրիշ վանք մը, անունն այժմ անծանօթ, որուն աւերակ Ս. Աստուածածին եկեղեցւոյ վրայ կը կարդացուի արձանագրութիւնս, հաւանօրէն ժՔ. դարու վերջերէն. «Կամաւն Աստուծոյ մեղաւորս Մարգիս վարդապետ, որ առաջնորդ եղէ եւ շինեցի զսուրբ Աստուածածինս . . . »⁹:

8. Թովմաս Մեծոփեցի 1427ին կը գրէ
ի վերջ Ղուկասու Մեկնութեան¹⁰. «Գրե-
ցաւ աստուածային կտակս ի սուրբ ուխտու
Աստուածածնի, որ այժմ Մեծոփայ վանք
անուանի, ի գաւառու Քաջքերունեաց : Եւ
օրինակն առաջին գրեալ էր ի սուրբ ուխտոն
Եղէվարդու ի դուռն սրբոյ եկեղեցւոյն Թէո-
դորոսի, որ էր գրեալ յառաջին օրինակէն
ձեռամբ աւակերտաց սուրբ Վարդապետին
Սարգսի Դաւթի եւ Ներսէսի յոյժ սխալ»:
Այս օրինակը, կ'ըսէ Թովմա, «230 ամաց
էր», այսինքն գրուած 1427էն 230 տարի
յառաջ, այն է 1197ին :

9. «Ով ընթերցող[ք] և կամ ընդօրինակող[ք] . . . ասասջիր Աստուած . . . ուղարմեա սուրբ Վարդապետին Ստեփանոսի (Կարգա՝ Սարգսի) որ կոչի կունդ. եւ որք ընդ նմա աշխատեալք են ի գործս բարիոք զրոցս այսմիկ»: Այսպէս Յովհաննու Մեկնութեան վերջը (ի ձեռագիրս եջմիածնի):

10. Գէորգ Վ. Սկեռնացւոյ Եսայեայ

6) *Zusammenfassung*, § 382, § 291 u. s. w.

7) Угруповані, № 257.

8) Հայոց նոր վկաները, մազովրդական հրատ. Վաղար-

լսմբագիր Մեկնութեան Ընծայականին մէջ կ'ըսուի¹¹⁾. «Եւ զի էր Սարգսի վարդապետի հոգացեալ (զՄեկնութիւն Եսայեալ)՝ առեալ եւ զայն . . . »:

11. Յովհ. Վ. Կոլոտիկ 1415ին իւր խըմբագրած Եսայեալ Մեկնութեան մէջ, ակնարկութիւն ընելով Սարգսի խմբագիր Մեկնութեան մասին, կ'անուանէ զանիկա այսպէս. «Սարգիս վարդապետ ի վանացն Խորանաշատոյ՝ կոչեցեալ Կունտ»:

12. Հ. Ա. Ալիշան¹²⁾ կը զրէ. «Յամի 1146 Կունդ Սարգիս անուամբ արեւելցի վարդապետ մ'ալ, աշակերտ մեծիմաստ Սարկաւագ վարդապետի, Դուկասու աւետարանի համառօտ մեկնութիւն մը զրելով՝ կը հաւաքէ զանագան Հարց և Վարդապետաց զրածներէն, որոնց մէկն ալ կոչէ Տէր իգնատիոս»:

13. Հ. Գ. Զարպանալեան¹³⁾ կը զրէ. «Սարկաւագայ աշակերտաց մէջ կը յիշուին . . . նաեւ Սարգիս Վ. Կունդ կոչուած, Սրարատեան գաւառէն, զոր ժամանակակիցք և աշխատասէր եւ արի մշակ Տետոն կը կոչեն, հմուտ եւ հանճարեղ իմաստիւք հոգւոյն»: Դուկաս և Յովհաննէս աւետարանագրաց մեկնութիւնը շարագրած է Սարգիս՝ իւր ծերութեանը հասակին, կամ Սարկաւագայ թոււականին 63 տարւոյն մէջ . . . շարագրած է . . . ընդհանրապէս ընտիր ունով և լեզուով»:

2. ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԴՐԵԲ

Այս տեղիքներէն ուշագրութեան արժանի են մասնաւորապէս թ. 1-2, որոնք, ինչպէս բացայայտ կ'երեւայ, գրուած են հեղինակին՝ Սարգիս Կունդ ինքնագրէն և անոր թելագրութեամբ, բայց հասած են մեջի յետնագոյն զրիչներու արտագրութեամբ, օրինակէ օրինակ անցնելով, երբ կամաւ կամ ակամայ մուտ գտած են աղճատութիւր, նաև նորամուտ յաւելուածներ:

Ունինք հոս չորս իրարու անհամապատասխան թոււականներ.

ա. «Ի թոււականիս նորոյ ԿՊ (1146).

բ. «Ի թոււականիս Հայոց ՈՒՀ (1178).

գ. Ամ մահուան Գրիգոր կաթողիկոսի, այն է ՈՒԳ (1194).

դ. «Ի ՈՒԶ թոււականութեանս հայկական սեռի», այսինքն 1197:

Առաջին թոււականը Սարգիս Կունդի գրչէն է, գրուած անոր ծերութեան հասակին: Սարգիս ուրիշ տեղ ալ (թ. 5) գործածած է Սարկաւագիր թոււականս, զորնոր կ'անուանէ (ուրիշները ՄՏՐՈՒ կը կոչեն), այսպէս. «զրեցաւ զիրքս ի թոււականիս Հայոց նորումս ԶԹ», այն է 1083+89=1172: Եթէ Սարգիս ԿՊ (1146) թոււին ինքնքնուք ծեր կը նկատէր, ԶԹ թոււին անիկազառամած պէտք է ըլլար: Կ'առաջարկեմ ԿՊ կարգալ ՂՊ, այն է 1083+93=1176, այս տարւոյն «համառօտեցի», կ'ըսէ Սարգիս Յովհաննու Մեկնութիւնս և եւ ստացայ զսաւ ինձ ի խրատ եւ ի վայելումն»¹⁴⁾:

Եօյն միաքը կը կրկնէ Սարգիս երկրորդ Յիշատակարանին մէջ. «բազում աշխատութեամբ ի մին տեղի հաւաքեցի ի ՈՒԶ թոււականութեանս Հայկազեանս սեռի — ի դառն եւ ի չար ժամանակիս, որ շփոթ էր կաթողիկոսութեան իշխանութեանս որրոյն Գրիգորի. զի անկեալ մեռաւ տէր Գրիգոր կաթողիկոսն ի գղեկէն Կոպիտառու. եւ այժմ ոչ ոք է յաջորդեալ զաթոռ նորին — եւ աղերս ընծայեցի ի սուրբ եւ յուղղափառ Հայտատանեացդ եկեղեցին: Երկու թոււականներու մէջ 21 տարիներու ոստում կայ: Յայտնապէս իսանգարուած է սկզբնաւգիրը: Ինձ կը թուի թէ խանգարումը տեղի ունեցած է երկու ուրոյն զրիշներէ զանագան ժամանակներու մէջ:

Եկամուտ է Գրիգոր կաթողիկոսի մահուան յիշատակութիւնը, որ ընդհատած է Սարգիս վարդապետի գեղեցիկ նախազասութիւնը՝ ալ մի տեղի հաւաքեցի ի ՈՒԶ թոււականութեանս Հայկազեանս սեռի — եւ աղերս ընծայեցի ի սուրբ . . . եկեղեցին: Յետասամուտ է այն զարձեալ իր սամկօրէն շարագրութեամբ, անյարիբ բոլորովին Սարգսի կուռ սճին: Յաւելուածս կ'ակնարկէ 1194-1195 տարւոյն գեղքերը: Գրիգոր կաթողիկոս քարավէժ եղաւ 1194ին, ուստի Հայոց ՈՒԳ թոււականին, աշնան հա-

11) Արտաւան, էջ 103.

12) Հ. Ալիշան, Ենորհարի և պարագայ իւր, Վենետիկ 1373, էջ 114.

13) Պատմութիւն Հայկական Հին Դարութեան, Վենետիկ 1886, էջ 597.

14) Բայ այսօմ իւմնաբու է Հ. Գ. Ալիշանի (թ. 12) և

Հ. Գ. Զարպանակեանի (թ. 13) «1146» և «Սարկաւագայ թոււականին 63 տարւոյն մէջ», երկուքն ալ այսի ունեցած են թ. 1-3 Յիշատակարանները, ինչպէս կ'երեւայ գենետիկի Միքիթարան Մատենագարանի մէկ ձեռագրի մէջ:

ւահօրէն. գոյժը Հայաստան հասած ըլլալու է ՈՒԴ (1195) թուին. արգեամբք ալ ի Հաղպատ Եփրեմի Մեկնութեան Աւետարանի Համարբռառ կ'օրինակուի ՈՒԴ թուին «ի մահուան տեառն Գրիգորի Հայոց կաթողիկոսի»¹⁵⁾: Այս տարւոյն, օրուան լուրերու տպաւորութեան տակ, մուտ գտած ըլլալու է յաւելուածս գրչէ մը, որ այս տարւոյս օրինակած է Սարգսի Մեկնութիւնս: Գրիգորի յաջորդն եղաւ Գրիգոր Զ. Ապիրատ, ըստ Օրմանեանի նոյն 1194 տարւոյն գերջերը¹⁶⁾. ուստի թօթը Հայաստան հնչած պիտի ըլլայ յընթաց 1195 տարւոյն, երբ ի զլուի կը հանուէր Մեկնութեանս օրինակութիւնը:

Այս ըմբռնմամբ ՈՒԶ (1197) թուականը հարկ է երկրորդ օրինակովի մը վերագրել, որ «ՈՒԴ» վերածած է ՈՒԶի, որ ընթացիկ տարին էր նոր գրչութեան, առանց անդրագանալու, թէ կաթողիկոսի մահուան չուրջ պատմուածները անհամապատասխան են 1197 տարւոյն: Սարգսի Կունտ ինչպէս թ. 1ա եւ 5 Ցիշատակարաններու մէջ, նաև այս տեղ գործածած ըլլալու էր Սարկաւագագիր թուականը. ըստ այսմ կ'առաջարկեմ կարգալ՝ «ի թուականիս Հայոց նորումս Ղ. ի հայրապետութեան տեառն Գրիգորի եւ աղերս . . .»:

Այսպէս կը ստանանք դարձեալ 1176 տարին: Այս թուականէն երկու տարի ետքը՝ աի թուականիս Հայոց ՈՒԷ (1178) ի սուրբ յանապատիս Թեղենիս կ'օրինակեն Մեկնութիւններու Թաղէսու և Վարդան գրիչները: Հաւանօրէն այս առաջին օրինակն է, որ կը հանուի սկզբնազրէն հեղինակին հսկողութեան տակ: Հ. Ղ. Ալիշան, որ այլուր¹⁷⁾ այսպէս «ՈՒԷ» ընթերցուածով յառաջ բերած էր տեղիքս, Հայապատումի մէջ կարեր տեսած է կարգալ «ՈՒԷ», ազդուած վերագոյն յիշուած «ՈՒԶ» թուականէն: Բարեբախտ գիպուածի վերագրելու է սակայն, որ չորս այլազան թուականներու մէջ այս մէկը միայն անեղծ պահուած է: Շնորհիւ այս մէկին հնարաւոր եղաւ ահա լուսաբաններու Սարգսի Կունտի Մեկնութիւններու գրութեան ժամանակը:

Այսպէս Սարգսի Վարդապետ 1176ին

հրապարակ հանելով իր Մեկնութիւնները կարող էին այնուհետեւ Թաղէսու և Վարդան 1178ին ի Թեղենիս, Սոդէ գրիչ 1184ին ի կեչառուս եւ Դաւիթ եւ Ներսէս գրիչներն 1197ին յեղիկարգ տալ անկէ օրինակութիւններ:

Կ'ուղեմ անդրագառնալ հս 1178ի Յիշատակարանին միւսանգամ. կ'ըսուի թէ օրինակս «գրեցաւ ձեռամբ Թաղէսուի եւ Վարդանայ ի յիշատակ մեղ եւ ծնողաց մերաց . . . եւ տուաք զսա հոգեւոր եղբօր մերոյ Աւետեաց, որ տառապէր տարաշխարհիկ ի գիւտս մակացութեան գրոց»: Արօն խնդրանոք գրած են օրինակս Թաղէսու և Վարդան: Խնձ կը թուի թէ անոնք գրած են յանձնարութեամբ Սարգսի Վարդապետի. և ինքն է որ կ'ըսէ թէ «տուաք զսա հոգեւոր եղբօր մերոյ (իմացիր՝ մերում) Աւետեաց»: Վերագոյն Սարգսի էր որ կը խօսէր իր կրկին յիշատակարաններու մէջ. իսկ թ. 3 Յիշատակարանը առանց տարակուսի Թաղէսու և Վարդան գրիչներէն է. նոյնը պահուած է նաև երուսաղէմի թ. 855ի մէջ:

Աւետիք, որ «տառապէր տարաշխարհիկ ի գիւտս մակացութեան գրոց», հաւանօրէն Աղթամարցի Աւետիք վարդապետն է, որ ըլլալով հետամուտ «ի գիւտս մակացութեան գրոց» աշխատասիրած է կազմել երուսաղէմի թ. 1250 Հաւաքածոյքը, ուր ի մի ամփոփած է զանազան վարդապետական ասացուածքներ, տօնական ճառեր և այլն. իր անուան կը հանդիպինք հոն երկու անգամ. անգամ մը յիշել կ'աղերսէ «եւ զԱւետիս վարդապետ Աղթամարեցի» (թղ. 165թ) և ուրիշ անգամ ողորմութիւն կը խնդրէ «եւ Աւետիս վարդապետի աշխատողիս»: Զեռագիրս, որ սկզբէն և վերջէն թղթերու անկում կրած է, չունի Յիշատակարան. բայց գրուած ըլլալու է ԺԲ. Դարու վերջին քառորդին: Հաւանօրէն այս Աւետիքի գրչէն է նաև երուսաղէմի թ. 1268, Գրիգոր Սատուածարանի «Քրիստոս ծնեալ լինի» ճառախումբը, գրուած ախտ և խոչըր գրով, նուրբ եւ նուազ ձեռով ձեռամբ Աւետեացս, մեղաւոր գրչաւորի, ի ՈՒԶ թուականութեանս Հայոց». տեղը չէ յիշուած:

Եթէ Սարգսի Կունտ 1178ին ի Թեղենիս կը գտնուէր, գժուարին չէ նոյնացնել իրեն հետ այն Սարգսի միանձնացեալն, «որ ա-

15) Հայապատում, էջ 383, է 291թ.

16) Աղջապատում, էջ. էջ 1509—1510:

17) Այրարատ, էջ 257.

սաւել փայլէր յաշխարհիս մերում մաքուր վարուք, ճգնաւորական հանդիսիւ, քահանայական չնորհիւ զարդարեալ»: 1169ին իրեն կը դիմէ ի թեղենիս կամ ի վանս իշխանաց նորադարձն Յովաչի, հրահանգուելու քրիստոնէական վարդապետութեան մէջ, գտնելու անկէ միսիթարութիւն:

Առանց տարակուսի սոյն այս Սարգիսին է նաև այն ԱՄարգիս նուաստ գրիչն և ախմար և յետին աշակերտն եկեղեցւոյ սրբոյ ուխտիւ Հաղբատայ, որ 1172ին Կ'օրինակէ ի Հաղբատ Ս. Բարսղի ճառերը: Սարգիս կունտ ըլլալով «աշխատասէր» և «հմտասէր», կ'այցելէր անշուշտ ստէպ ստէպ Հաղբատ տեսակցելու իր ուսումնակիցներու՝ Վարդան և Պետրոս գիտնական վարդապետներու հետ, որոնք կը զասախօսէին հոն այս շրջանին, և օգտուելու վանքին հարուստ Մատենադարանէն: գիտենք որ այն տեղ կար ի մէջ ալլոց Եփինմի Մեկնութիւնն Աւետարանին համարաբրառ¹⁸ զոր օգտագործած է Սարգիս առատապէս իր Մեկնութեանց մէջ:

Այսպէս կ'ունենանք ժամանակի համար մեր սարքի տակ հաստատուն կունտն 1168-1178 տարիները, երբ Սարգիս կունտ արդէն այ ծերութեանց կը գտնուի թեղենեաց վանքի մէջ:

Թ. 5 Յիշատակարանին մէջ, զրուած 1172ին, Սարգիս կունտ ինք զինքը կը ներկայացնէր «նուաստ գրիչ և ախմար և յետին աշակերտ եկեղեցւոյ սրբոյ ուխտիս», այսինքն աշակերտ Հաղբատայ դպրոցին, ուստի անիկա իր ուսումնը առած է Հաղբատի մէջ, անշուշտ յիշեալ թուականէն շատ յառաջ արդէն: Այս տեսակէտէ ուշադրութեան արժանի վկայութիւն է և այն, զոր կու տայ ժամանակակից մը 1178ին, երբ կը վկայէ թէ Սարգիս «աշակերտն է երից երանեալ սուրբ վարդապետին Սարկաւագ կոչեցեալ, որ և նմա համազուգեեալ ի սոյն խորհրդի»: Խօսքը Յովհաննէս Սարկաւագ վարդապետի մասին է, որ գործած է ի Հաղբատ արդիւնաւոր գրական գործունէութեամբ և վախճանած է 1129ին¹⁹, ուստի ժամանակ մը, երբ կ'իյնայ Սարգիս կունտի

կտրճութիւնը, վասն զի Սարգիս եթէ 1178ին ենթարկուած էր արգէն ծերութեան տկարութեան («մուացայ զծերաւթիւն և գտկարութիւն մտաց», «գտկարութիւն ի բաց եղեալ»), ըլլալու էր իրը 70 տարեկան, ուստի ծնած 1106ին մերձաւորապէս, որով կարող է գոնէ 5 տարի աշակերտած ըլլալ Սարկաւագ վարդապետի անոր կեանքի վերջին տարիներուն²⁰: Թերես այս կրութութիւնը նկատի առնելով Սամուէլ Անեցի և Վարդան, չին յիշած զինքը Սարկաւագ վարդապետի աշակերտներու թուին մէջ²¹, որոնք են Երեմիա Անձրեւիկ, Սամուէլ երէց, Անանիա, Խաչատուր, Գրիգոր և Յովհաննէս Անեցիք: Սարգիս կունտ Սարկաւագ վարդապետի մանէն ետքն ալ շարունակեց իւր ուսումնը Հաղբատի մէջ: իւր զարդնեկերներն եղած են անշուշտ Վարդան և Պետրոս վարդապետները, որոնք ապա նշանաւոր հանդիսացան Հաղբատի մէջ 1150-1180 տարիներուն:

Թէ որ և է կապ ունի²² Սարգիս կունտի անուան հետ Զորուտի Ս. Աստուածածին եկեղեցւոյ արձանագրութիւնը, ուր «Սարգիս վարդապետ» առաջնորդ» կը յիշուի, չեմ կրնար հաստատել:

Աստուածատուր արեղայի տողերը թ. 4 Յիշատակարանին մէջ, զրուած 1184ին ի կեչառուս, այնպէս զգալ կուտան թէ Սարգիս այս թուին տակաւին ի կեանս էր: Նա վախճանած ըլլալու է այս թուականէս ոչ շատ ուշ:

Մինչեւ այժմ մեր ձեռք բերած տեղեկութիւններու հետ շատ անմիաբան կը հնչէ այն վկայութիւնը զոր կուտայ Յովհաննէս Վ. Կոլոստիկ 1415ին Սարգիս կունտի գործունէութեան ասպարէզի նկատմամբ, երբ կը գրէ: «Սարգիս վարդապետ ի վանացն Խորանաւատոյ՝ կոչեցեալ կունտ»: Այս վըկայութեան անկայունութեան համար ապացոյց կարելի է առնել այն պարագան որ, ինչպէս Կիրակոս Կանձակեցի, աշակերտն Յովհաննէս Վանականի, կը պատմէ, Խորանաւատի վանքը կառուցած է Յովհաննէս

20) Ասեեան, անդ, էջ 15-16 կը գրէ: Անորկաւագի տակերտ մըն է նաև Սարգիս կունտ, որ մնացէն կ'երեաց անոր թունաբներին մին եղած է, վասն զի Սարգիս գիւն. 1178էն [իմացիք, 1178էն]: Ետքը կ'առցրեց:

21) Յան. Սարկաւագ իւր գրուածներն ինչ ինչ նուիրած է ութեմբն Սարգիսի, որուն նոյնութիւնը Հաղբատի համանուն առաջնորդի հետ հաւանական է: յամենայն գեպս կազ չունի Սարգիս կունտի հետ:

18) Հայապատում, էջ 388:

19) Այս է Սարկաւագ վարդապետի մահուան հաւանական թուականը, հմատ. Հ. Հ. Ասկեան, Մատենադրամական գննութիւններ, Վիճեննա, 1926, էջ 1-3:

Վանական վարդապետ, որ և վախճանած է 1251ին «ի վանսն զօր իւր իսկ էր շինեալ, որ կոչի Խորանաշատ». և վասն յոլով եկեղեցեացն օր ի նմա՞ ընկալաւ զանունն, որ կայ հանգէպ Երբէվանից բերդին և ի թիւկանց Գարդմանոյ»²²⁾: Կիրակոսի վկալութիւնը կը հաստատէ յիշատակազիր մը 1224էն, երբ կը զրէ թէ «շինող եւ առաջնորդ վանից էր Վանական վարդապետն»: Կան ի Խորանաշատ արձանագրութիւններ, որոնց հնագոյնը թուական կը կրէ Ոկե (1216). տակէ կը հետեցնէ Հ. Հ. Ոսկեան, թէ Խորանաշատի հիմնարկութիւնը պատահած ըլլալու է թուականէս ոչ շատ կանուխ. բայց Սարգիս արքեպ. Զալալեան հիմնարկութեան տարին կը նշանակէ Ոկ (1191)²³⁾: Յամենայն գէպս երբ ալ ընդունինք Խորանաշատի հիմնարկութեան տարին, կ'իյնայ այն Սարգիս Կունտի մահէն ետքը: Զկայ պատճառ ենթադրելու, թէ անիկա իր կեանքի վերջին տարիներուն նորակառոյց Խորանաշատ գացած ըլլայ²⁴⁾:

Ն Կ Ա Ռ Ա Գ Ի Ր Բ

Սարգիս Կունտի²⁵⁾ կեանքի առաջին յիսնամեակը մթութեան մէջ է մեզի համար: Բայց գիտենք թէ անիկա պատանի հասակին մտաւ Հաղբատի Դպրոցը, աշակերտեցաւ Յովհաննէս Սարկաւագ վարդապետին անոր կեանքի վերջալուսին: Զկրցաւ անշուշտ տւարտել ուսման ընթացքը անոր հովանաւորութեան տակ. բայց շարունակեց մեալ Հաղբատ, ի խնդիր անգրագոյն գարգացման, համապատիւ ուսուցիչներու խընամքին տակ: Իր գործունէութեան ասպարէզն եղաւ Թեղենիաց վանքը Սրբարտեան դաշտին վրայ, ուր եղած էր հաւանօրէն իր ծննդավայրը: Հոս գտաւ զինքը նորաբոյսն Յովաէփ և ըմբոշինեց իրմէ հոգեւոր միխթարութիւն: Ժամանակակից մը, որ գրեց յիշեալ Յովաէփ նոր վկայի վկայարանու-

22) Կիրակոս Գանձակեցի, էջ 21:

23) Խորանաշատի յիշատական յօրը հմատ, Հ. Հ. Ոսկեան, Յովհ. Վանական և իր Դպրոցը, Վեճնան, 1922, էջ 9-10:

24) Ի Խորանաշատ եղած են անշուշտ Սարգիս անուն վարդապետեր, որոցք մին կամ միաւուլ թերեւ նկատի առած է Յովհ. Կորակի, Խոնոթ է թէ Յովհ. Վանական իր դրամաքն յանդրախացիք պատկանից, գրած է ի խնդրոյ Սարտի գանձաւոյքի:

25) Այսպէս շնորհած կամ շնորհ մականաւոր ծանօթ է Թեղի Սարդին վարդապետ, արգեօք ձաւացած ըլլալուն պատճառաւ:

թիւնը, կը ներկայացնէ զինքը «այր միանձնացեալ, որ առաւել վայլէր յաշխարհիս մերում մաքուր վարուք, ճգնաւորական հանգիսիւ, քահանայական շնորհիւ վարդարեալո: Իսկ Աստուածատուր երեց կ'անուան զինքը «աշխատասէր արի մշակ Տիառն, հմտասէր և հանձնարեղ իմաստիւք Հոգւոյն», ուրիշ մը «մեծ իմաստուն . . . համազուգեալ (Յովհ. Սարկաւագի) ի սմին խորհրդի» Մեկնութեան Ս. Գրոց: Բայց և այնպէս Սարգիս կը խոստավանի ինք զինք «ոտրուպ և անպիտան ի ժառանգաւորս եկեղեցւոյ», «ոգէտս ի զիտնականաց», «ախտմար և յետին աշակերտ եկեղեցւոյ»:

«Աշխատասէր» և «հմտասէր» ոգին իր նկարագրին արտակարկան զիծն եղած է: Սիրած է տեսական կեանքը. բայց միաժամանակ ապրած է զրքերու մէջ. «հմտասէր» մտքով նույիրուած է ընթերցման և «աշխատասէր» կամքով պարապած է ընդօրինակութեամբ ձեռագիրներու, իսկ «հանձնարեղ իմաստիւք Հոգւոյն» միջամուխ եղած է արտագրել զրական գործեր. նաեւ «ի սմին խորհրդի» «համազուգեալ» իւր ուսուցչին: Մեզի ծանօթ չէ լրիւ թիւը իր զրական արտագրութիւններու: Անոնք, որոնք հասած են մեզի, աշխատասիրութիւններն են իր ծերութեան օրերու: Համարինք, թէ այդ «աշխատասէր» արի մշակը» միայն իր կեանքի վերջին տարիներուն անձնատուր եղաւ զրականութեան: Թերեւ ժամանակը կարող է երեան բերել զործեր նաև իր կատարեալ հասակի արտագրութիւններէն:

Ունինք իրմէ խմբագիր Մեկնութիւններ Յովհաննու և Պուկասու Աւետարաններու. Կ'ընծայուին իրեն նաև Եսայեայ մարգարէտութեան Մեկնութիւն և ուրիշներ: Մեկնութեան այն եղանակը, զոր կիրարկեց ինքը, նորութիւն էր հայ զրականութեան մէջ և կը կազմէ մեկնողական զրականութեան նոր սեռ մը, որուն հիմնագիրը ինքը եղած է: Գոնէ ինձ ծանօթ չէ թէ իրմէ յառաջ որ և է մէկը ձեռնարկած ըլլայ յօրինել Ս. Գրոց մասերու խմբագիր մեկնութիւն: Այսպիսի աշխատանք ծանօթացուցած էր Հայոց Ը. գարու սկիզբը Ստեփանոս Սիւնեցի՝ թարգմանելով Դեւտականի խմբագիր Մեկնութիւնը. որ սակայն մասնաւոր ուշադրութեան արժանացած չէ: Ուրիշ մը, Կաթողիկեաց թղթերու խմբագիր Մեկնութիւնը,

մատչելի եղաւ Հայոց ժթ. զարու վաթսնաւկան թուականին. զոր օհարսեղ առաջնորդ Դրազարկու տայ թարգմանել ի Լամբրոն ձեռամբ Գրիգոր գալրին, զոր ապա ներսէս եպիսկոպոս Կիլիկեցի, ոչ Լամբրոնացին, 1163ին և յարմարեաց յիտ մահուան տեսան Բարսղի ըստ քերթողական արհեստի²⁶⁾: Կ'երեայ թէ այս խմբագիր Մեկնութենէն օրինակ մը հասած է նաև Հաղբատ. և Սարդիս կունտ կարգալով զայն՝ գաղափար յուացած է նոյն ոճով կազմել Հին և Նոր Կտակարանի մասերու խմբագիր Մեկնութիւնները, յեցած ձեռքի տակ գտնուած աղբիւրներու վրայ:

Խանդավառ ընդունելութիւնը, զոր զըտան Սարգիս կունտի Մեկնութիւնները ժա-

մանակակիցներու քով, ցոյց կու տայ, թէ Մեկնութեան այս ոճը հաճելի երեցած է զրասէր ընթերցողներու, որոնք Ս. Հարց և հայ հեղինակներու մտքերը այսպէս համապրուած կը գտնեին: Իր օրինակին հետեւեցան ապա ուրիշներ. Յովհաննէս Վանական վարդապետ յօրինեց խմբագիր Մեկնութիւնը Յորայ, Գէորգ Ակեւուացի՝ Եսայեայ և Գործք Առաքելոցի, Վարդան Սրբւելցի՝ Մովսիսի հինգ զրքերու և այն, Յովհաննէս Երգնկացի նոյն խոկ Քերականի Մեկնութիւնը:

Տեսնենք այժմ Սարգիս կունտի զործերն առանձին առանձին:

Երուսաղէմ Հ. Ն. Ակինեն (G. A. Kinne)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔԱՆԱՆՈՒ ԵՒ ԱՄՄՈՒՐՈՒ ԵՐԿՐԻ ԴԵՂԵՐՆ ՈՒ ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԷԶՆԵՐԸ

ԳՐԵՑ՝ ՌԱ. G. CONTENAU

Սեպագիր տախտակները (tablettes), նամակներն ու հաշուետոմարներու բնագիրները, մեզի ապացոյցը կը բերեն Միջազգետքի և արեմտեան երկիրներու Ամմուրուի ու Քանանու միջեւ բանուեկ առանուրի մը: Ասոնց մէջ, շատերու կարգին, երկու հատ կան՝ որոնք նման սեռի զրականութեան մը իրր նմոյլ կը ծառայեն: Առաջինը¹⁾ կը յիշատակէ որ ոսկին կու գար Ամմանի (Ammān-na-ai) և Մովարի (Mu-ba-ai) երկրէն. իսկ արծարը կու գար Յուդայի երկրէն: Կար նոյնպէս անունը անհետացած ուրիշ նիւթի մըն ալ՝ որ յատուկ էր Կիլիկիներու (Gu-ub-la-ai, Ճիպէլլ) երկրին: Տախտակներուն երկրորդը²⁾ կը նշէ պղինձի

26) Սիսուան. էջ 516: Գրուածքին մասին աեւա Հ. Յ. Տաշիեն, Յուցակ Հայերէն Զեռագրաց Միջարքան Մասնագրանի, էջ 234—242.

1) R. F. Harper, Assyrian and Babylonian Letters. Chicago (University Press). T. VI (1902), № 632. էջ 683:

2) G. Contenau, Musée du Louvre. Textes cunéiformes. Paris (Geuthner), T. XII (1927). Contrats Néobabyloniens. № 84:

և Երկարի առաքում մը Խօնիալէն (Ja-a-mana), երկաթը Լիբանանէն (Lab-na-nu) և նոյնիսկ պալլել (alun): Եզիզուսուն (Mi-sir):

Ծինութեանց յատուկ մետաղներու, ինչպէս նաև քարի ու փայտի առաքում ները ընթացիկ գործեր են: Կուտէա իր տաճարի շինութեան համար Արեմուտքի կը գլմէր, ամէն անզամ որ նախանիւթի պէտք ունենար:

Արհամարհելի գործ մը չէր նկատուեր բնաւ Սուրբիայէն զինի բերել տալլը, գրեխաւորար Գամատկոսի մօտ Խոլպունի ըլջանէն³⁾:

Հանքի և թանկագին մետաղի մեծաքանակ այս առաքումներուն քով, կային նաև ուրիշներ ալ, նուազ կարեոր, ինչպէս փայտի, նունի, աղի կամ բարերու, որոնք կը գործածուէին գեղազործութեան մէջ: Ասորական գեղարանութեան մէջ Քանանու երկրին արտազրութիւնները, ներածելի ապրանքներու կարգին, լաւագոյն տեղը կը զրաւէին: Պր. R. Campbell Thompson հետաքրքրութիւնը ունեցաւ երեան հանելու ասորական գեղազիրներու մէջ գործածուած ու գեղի ոյժ ունեցող կարգ մը հիւթեր (substance), որոնց մէջ երկրորդ կարգին վրայ Կ'երեայ Հալէպի (pin) բետինը. իսկ չորրորդ կարգի վրայ կը տեսնուի լի-

3) R. Dussaud, Topographie historique de la Syrie. Paris (Geuthner), 1927. էջ 285.

բանանի մայրին (cèdre): Այս վերջինը ծանօթ է ամէնուն և անունին (erīnu) նոյնացումը վիճաբանութեան տեղի չի ձգեր: Անշատ փնտուած է Եզիպտոսի ու Միջագետքի մէջ, որքան իրը շինութեան փայտ, նոյնքան ալ իր անփուտ յատկութիւններուն համար: Երբ պէտք ըլլար վհուկներուն հմայութիւնները խափանել, իրը հականմայք ծառայող արձանիկները մայրիկ փայտէն կը շինուէին: Խոկ ունիին խոզակը կը ծառայէր իրը սրսկաման (aspersoir) քառութեան ջուրի: Ասորական գեղագործութեան տարագներու (formulaire) մէջ շոճին գործածուած կը տեսնենք վերքեր պատելու (pansement) և ծխումի (fumigation) մէջ: Ասորեստանցիք, ինչպէս որ կը պատմէ Պլինիս, շոճին բետինը՝ կամ իրենց բացատրութեամբ արխինը ու իւղը կը հանէին թորումով: Իրենց ծանօթ էր նաև շոճին փոշին՝ կամ իրենց բացատրութեամբ ալիւրը և բնագիրները ցոյց կու տան որ շոճին ոկրնական բնավայրը Ամանոսն էր: Դէպի արեմուտք էր և ո՞չ թէ ելամի երկրին մէջ, ուր կիլկամէ: Կռուեցաւ Շոճիներու պահապան Հումպապայի հետ:

Հին գպրութեանց մէջ կը հանդիպինք նաև Erin-Badի, նոյնքան պիտանի վերոգրեալ գործածութեանց մէջ, որ անտարակոյս դարաւոր շոճին է, ինչպէս նաև Erin-Babbatի կամ ալիտակ ունիին, որ կը թուի եղած ըլլալ Linneի Juniperus oxycedrusը, որ հին գեղագիրներու մեծագոյն մասն մէջ յիշատակուած շոճիի իւղն է:

Հալէպի շոճին բետինը ծանօթ է ու անունին տակ, ասոր համազօր է ցըլ կամ shammū sha libeर կամ she-li-ud «Հալէպի շոճին հանուած գեղը» (Li-ud), որ գուրսէն գործածելի գեղ մը ըլլալով, ընդհանրապէս կը ծառայէր ականջի, բերնի եւ աչքի վերքերը պատելու, ինչպէս նաև ծխումի (թիւթսի) համար: Կը պատրաստէին ջուրի կամ մեղրի մէջ եռացնելով: Ո՞վ չի գիտեր տակաւին այսօր ալ, ըլլալ հազի, ըլլայ յօդացաւի զէմ, բեւելինի խէժին (térebenthine) բուժիչ յատկութիւնները:

Անուշահոտ իսկութիւններու այս գլուխը փակելէ առաջ, կ'արժէ խօսիլ նաև կո-կրսի վրայ, Ասորեստանի մէջ ա'յնքան ժողովրդական այս գեղին, և որ Jastrowէն իւր կը շփոթուէր եղերդին (chicorée) հետ:

Պր. R. Campbell Thompson իր մագիստրոսական ուսումնասիրութեան մէջ¹⁾, որուն կը դիմենք ամէն անզամ երբ ասորական բժշկութեան հարց մը կը ներկայաւնայ, իրաւամբ դիտած է որ, կո-կրսն ընդհանրապէս մօտեցուած է բուհս (չոճի)ին և որ յաճախ անուշահոտ բոյսերու ցանկին առաջին գլուխն վրայ գրուած ըլլալով, աշնի (եղեկին) ընտանիքն նկատուած է, այն ձեռվ որ կարելի չէ որ եղեկինի բետինէն տարբեր բան մը եղած ըլլայ: Այսպէս ուրեմն կո-կրսն և իր համազօրը եղող ցամ-ցամը, արեւմտեան ծագում ունեցող եւ Ասորեստանցիներէն գործածուող գեղերու չարքին իրենց արժանի տեղը կը գրաւեն:

* * *

Ըլլալ իրենց հաճոյքին համար, ըլլայ օգտակար բոյսեր իրենց երկրին մէջ վարժեցնելու նպատակաւ, Ասորի և Բաբելոնի վեհապետները հոգ տարին ուրիշ երկրներու մէջ ապրող բոյսեր իրենց պարտէզներուն մէջ հաւաքելու: Ասոր առաջին օրինակը տուին Եգիպտոսի փարաւոնները: Խաղէքրուողի կողմէ Բունդի երկիրը դըրկուած գեսպանը վերագարաւ երեսուններկու հոտաւէտ տունկերով, որոնք զրուած էին հողով լեցուած կողովներու մէջ, որպէս զի կարելի ըլլար զանոնք իրենց հողովը տնկել թէփէի պարտէզներուն մէջ: Նմանապէս թութմէս Փ. Պաղեստինի երրորդ արշաւանքէն հետը բերաւ տունկեր ու ծառեր, զորս գասաւորել յետոյ, Քարնաքի մէջ կառուցած իր նոր շէնքերէն մէկուն սենեակը զարդարել տուաւ նոյնիսկ այդ տունկերը սերկայացնող խորաքանդակներով:

Ասորեստանի թագաւորները հաւասարապէս հոգ կը տանէին թէ՛ պարտէզներու և թէ՛ ոռոգմանց: Աննաքերիա, որ իր մայրաքաղաքին ջուր բերելու համար բազմաթիւ ջրուղիներ (acqueduct) փորել տուած էր, ըլլալ՝ Պագեանի, ըլլայ իր շինութեանց յիշատակարաններուն մէջ, կը յիշէ Ամանոսի մէջ եղածին նման պարտէզներու շինութիւնը, լեռներու վրայ ու զաշտերու մէջ աճող ամենազգի տունկերով ու պըտ-

1) The Assyrian Herbal, Լոնտոն, 1924. էջ 155 և յաջորդ էջերը.

զատու ծառերով։ Կը յիշէ նոյնիսկ այն ծառ՝ «որ բուրդ կը կրէր վրան», բամպակենին։ Կրնայ ըլլալ որ ակնարկուած ծառը կաղամախին եղած ըլլայ, որուն պառվը, հասունցած տակն, մետաքսային խօչրտուք (bourre) կ'արձակէր, վասն զի Ասորեստանցիներուն ծանօթ բամպակենին կին էր աւելի։

Մարտուք - աբալ - իտալին, որ աւելի Մերօտաշ - Պալատան անունով ծանօթ է, իրաւամբ կը հապատանար Բարելոնի իր պարտէզովը, որովհետեւ իր գպիրներէն մին մեզի թռած է հոն գտնուող տեսակներուն ցանկը։ Այս վաւերազրին մէկ պարզ օրինակը հասած է մեր ձեռքը, ինչպէս որ ցոյց կու տայ ստորագրութեան մէկ յիշատակութիւնը — «բնազիրը զրուած ու վերստուգուած է տախտակին համաձայն», ու այս՝ անտարակոյս, վասն զի խոկականը, գէշ կերպով թրծուած, խոթարուած էր, գատելով գէթ գպիրին տեղ տեղ թողած նօթերէն՝ թէ «խորտակուած է, նոր կոտրած չէ»։

Տախտակին առաջին չորս սիւնակները, երեսին ու կոնակին կողմէն, հորիզոնական զիծերու միջոցաւ բաժնուած են փոքրիկ հատուածներու, նշանակելով անունները այն բոյսերուն՝ զորս Բարելոնացի բուսաբաններ ի մի հաւաքած էին։ Բոլորն ալ նշանակուած են SAR (մեր ծա՞ռը արդիօք) նշանով։ B. Meissner և R. Campbell Thompson, բոլոր այս բոյսերը նոյնացուցած են իրենց տեսակներուն թիւովքը։ Պէտք էր անշուշտ որ բոլորն ալ իրենց անունները ունեցած ըլլային։ Այս տախտակներուն վերլուծումը շատ կարեւոր է սակայն, ցոյց տալու համար մեզի թէ բոյսերը դասաւորելու համար լ'նչ սկզբունքներէ կ'առաջնորդուէին։ Կը թուի թէ առ հասարակ դասաւորումը կատարուած է աւելի բոյսերուն ընդհանուր յատկութիւններու հիմամբ, քան թէ անոնց կաղմուածքին հանգամանքներովք։ Այսպէս, եթէ ստորագրիներն ու շրթնաւորները իրարու քով դասաւորուած կը տեսնենք, միւս կողմէ սակայն, ընդհակառակը, ուրիշներ ի մի խմբուած են զանոնք գործածելու եղանակներովք։

Նախ և առաջ կու գան սիսորը, սոխը (shūmu՝ որ ըստ բնագիրներու՝ կապոցով կը ծախուէր) և պրասը (karâshu)։

Թէկ առաջին երեք դասակարգերուն մէջ զնել ճիշտ պիտի ըլլար, իբր ասոնց աւելի մերձաւոր բոյս մը, այս առաջին խումբին մէջ կը տեսնենք ուրցան, զոր կարելի է ենթադրել իբր կալամբի(?) տեսակ մը։

Երկրորդ խումբը շատ զարտուղի հաւաքում մը կը ներկայացնէ, կարենալ արգարացնելու համար անոնց նոյն ընտանիքի պատկանած ըլլալը։ Հոս կան սպորտինին (antahshu) և ոսպի՞ր (kunibhu)։

Երրորդ խումբին մէջ առնուած են ըրթնաւորներու սեսէն անուշահոս տաւնեկերը, ուր կը տեսնուին երեք տեսակ անտեսնիւ (արոն, մանիս և զրոն) ու նոյնպէս ըրթնաւորներու ընտանիքին պատկանող արքայածաղիկը (hamuk, pasilic)։

Չորրորդ ու հնդկերորդ խումբերուն մէջ կ'իյան պարտէկի եղերգին (marrutu, endive), հազարին (hashshu, laitue), սամիրին (shibâtu, fenouil) և ննիին (pinu, ammi) նման բանջարեղէններ։

Վեցերորդ խումբին մէջ կ'իյան օշնանային ընտանիքին պատկանող տունկեր (ալլուր Elleg նշանով որակուած)։ Առնոց մէկ քանիները միաւորուած են ջրկոտեկի (qaquillu, cresson) տեսակներուն հետ։

Եօթներորդ ու ութերորդ խումբերուն մէջ զրուած են համեմունքները, ինչպէս՝ frfniմը (azipiru, safran), զինձը (kusibirru, coriandre, քիշնիշ) և փեղենան (egengiru, rüe, ուտէփ օթու)։ Այս խումբին մէջ կը գտնուի նաև asmidun կամ samidun՝ որ աւելի թփիկ մըն է, որովհետեւ թռչունները անոր վրայ կը թառէին։ Ասոր հետ նոյնացուած է նեղոսի յատուկ աբասիան (acacia nilotica)։ Առնոց կը յաջորդեն ալլ տեսակի փեղենայ (bishshu) մը, մօշիկ զոպմն (յնրո, hysope), անանուխի (zamburu) մը, զամբուռը (hashshu, ծոթոր) և պիսակենի (bûtnu)։

Իններորդ խումբին մէջ են պեղենին (silqu, bette), կարմիր բողկ (laptu, rave) ու սիւ բողկ (pulgu, radix) բանջարեղէնները։

Տասներորդ խումբը կը հոշուէ րեսիններ (résine), որոնց մէջ կան Միֆիկի բարսանը (argânu, baume de la Mecque) և պարսկական նարգես (bariratu, férule persique)։

5) Ասորեստանցիներուն ծանօթ էր «սամիւի», հորիք (խորչ), եղէզի (kisi, roseau), փշնիի (ashâgi), տաբանի ու տագանի (թռչունը)։

Տասնըմէկերորդ, տասներկրորդ ու տասներեքերորդ խումբերը իրենց մէջ կը համբեն միայն ծաղիկներ, այսպէս՝ լեռան խաչխաչը և երեք տեսակ մեկնն (kusibu, hassuhaltu, kanâshuttu) ⁶⁾, գանհալեզո՞ւն (lisan kalbi) ⁷⁾, եզջերուի Հը (qa-an-nu-ai-lu), թռչունի Հը (hal-la is-sur) ⁸⁾:

Տասնըմըրբորդ խումբը կը պարունակէ տապար (aspastu, luzerne, պապա հօնճա), անգծար (surbu, assa foetida) և դղմենիները (qishshû, piqqûtu):

Հակառակ կարդ մը անուններու անսուռգութեան, կը տեսնուի որ բոլոր այս ընթացիկ տեսակները կը պատկանին միակ պարտէզի մը, ծաղիկներով, կանաչեղէններով և հոտաւէտ բազմաթիւ բոյսերով, որոնք կը զործ ածուէին արեելեան խոհանոցի մէջ և զորս զործ ածեց նոյնպէս արեմուեան խոհանոցն ալ, մինչև ի վերջ Միջին դարու ծիշտը ըսելով անիկա բուսաբանական պարտէզ մը չէր, ինչպէս էին Սիննաքերիպի այսնքան պարծ անքով արեկելը յիշած պարտէզները:

Հետագայ երկու խումբերը կը նշանակեն՝ առանց քանակութիւնը ցոյց տալու՝ պարտէզի յատուկ գործիքները (գլխաւորաբար սականները) և տախտակը կը կրէ հետեւեալ յիշատակազրութիւնը, «...թագաւոր Մարտուք-արաւ-Ետափինի պարտէզին (բոյսերը): Մարտուք-Ետում-Ետափինի տախտակը: Այն որ Մարտուք (չ)աստուածը կը մեծարէ, թող չվերցունէ (այս տախտակը): Յանձնաբարութիւնը՝ որ կը թուի մասնաւորապէս սահմանուած ըլլալ Միջագետքի, եթէ դատենք Պր. Շալլի կողմէ հաւաքուած նման այլ բնագիրներու յիշատակարաններէն»:

Թարգմանեց

Հալիս

ԱՐՑՈՒԱԶԴԻ ԱՐՔԱԳՈՒՅ.

6) Ասորեստանցիք մեկնի այս տեսակները կը գործածէին իրք քնածական (hypnotique) գեղ, ըստ Dr. G. Cantenauի Կեղացուցակին La Médecine en Assyrie et en Babylonie, Paris (Malaine). 1938. էջ 181.

7) Ասորեստանցիք մեզի նման ծանօթ էին «ամ լեզուին, աղուեսի խաղող»ին են: Աւելորդ է ըսել որ այս որակումները ամէն բանէ առաջ ցոյց կու տան անուններու կազմութեան ժողովրդային միենայն եղանակը, թէե կրնայ ըլլալ որ ասոնց տեսակները նոյնը եղած ըլլալ:

8) Mélanges Syriens, Paris. 1939. Ա. Հասոր. էջ 11-14:

ԱՄԻՐՏՈՎԼԱԹ ԱՄԱՍԻԱՑԻ ՀԱՅ ԲԺՇԿԱԿՊԵՏ

Յիշատակն անշէջ մեայ, երից վարդապետաց՝ Հ. Հ. Պարրիէլ Աւետիքեանի, Աւաչատուր Ավերմէլեանի և Մկրտիչ Աւգերեանի, որոնք առաջին անգամ՝ 1836 թուին՝ իրենց ի Վենետիկ հրատարակած «ՆՈՐ ԲՈՒԳԻԲԻԲ ՀՈՅԿՈՋԵԱՆ ԼԵԶՈՒԻԻ» վերնազիր կոթողական աշխատութեան միջոցաւ ծանօթացուցին մեզ գոյութիւնը Ամբրովլութ Ամասիացի բժշկապետի, հետեւեալ բառերով:

«Բժշկաբանք պէսպէս գտանին՝ նմանք եւ աննմանք իրերաց, թարգմանաբար հաւաքեալք յամենայն աղջաց՝ խան և ռամշկական ոճով: Առաւել քաջածանօթ է զործ Ամբրովլաթայ ամասիացոյ բժշկապետի հայոց ի ԺԵ. դարու: Յայսպիսի գրութեանց ոչ այնչափ վկայութիւնու առաք բանի, որչոփ բառի, որ երեւէր հայկական, թէ եւ իցէ ռամփական կամ գաւառական, որպէս պիտանացու յոյժ ըստ տեղւոյն»: (Հար. Ա. էջ 10):

Յետոյ 1879ին նոյնը կրկնեց նշան ձիվանեան, իր «Հայոց Առձեռն Բառաբան պատմական, աշխարհագրական եւ դիցաբանական Յատուկ անուանց» գործին մէջ (Կ. Պոլիս, 1879), ըսելով.

«Ամիբ Ծովլաթ կամ Ամըրտովլաթ. բըժիշկ և ճանապարհորդ հայ ամասիացի, ի ԺԵ. դարուն, զիտակ էր լեզուի լատինացւոց, յօւնաց, ասորւոց, արաբացւոց, պարսկաց և թրքաց, թողեալ է զբժշկաբան ընդգործական մակագրեալ Անգիտաց անպէտու:

Ասոնց յաջորդեց Հ. Արոէն Վ. Առոքի, 1881ի Բազմավիճին մէջ ձեռնարկելով «Հայ բժշկական Պատմութեան» մը, որ գժրախտաբար անաւարտ մնաց, հմուտ հեղինակին խիստ ցաւալի մահուան պատճառաւ:

1888ին ասոնց յաջորդեց Հանգէս Ամսուեալի մէջ՝ ողբացեալ Հ. Ղեւոնդ Վ. Յովիանեանի ընդգործակ մէկ աշխատութիւնը, — «Հետազօտութիւնք Նախնեաց ռամշկորչնի վրայ», — որ ապա գրքի ձեռով ալ լոյս տեսաւ ի Վիեննա, 1897ին:

Այս միջոցին՝ Դոկտ. Վահրամ Յ. Թոր-

գոմիանի կարեսը մէկ յօդուածաշարքն հրատարակուեցաւ է. Պոլսոյ Արևելի լրագրին մէջ, 1889ին, որ կը խօսէր Պարփակ Աղջ. Մատենագրանի (Bibliothèque Nationale) Հայերէն բժշկական Զեռագրաց վրայ: Իսկ 1922ին՝ նոյն Թորգոմեան Դոկտ. Վ. Յ. բարեկամու հրատարակեց իր «Ներքողեան Ամիրտովլաթ Ամասիացի բժշկին» գասախոռութիւնը, միեւնոյն տարին արտասանուած ի Կ. Պոլիս:

Իմ՝ Հայ բժշկական Զեռագրաց մասին հրատարակած առաջին գրութիւնս եղաւ պարզ յօդուած մը, որ լոյս տեսաւ 1890ի Արևելի մէջ, ձօնուած նոյն Դոկտ. Վ. Յ. Թորգոմեանի, նիւթ առնելով մէր գրացի բարեկամուհի Տիկին Թագուհի Ամուելեանի կողմէ ինձ փոխ տրուած Ամիրտովլաթի «Օգուտ բժշկութեան» ընտիր մէկ Զեռագիրը:

Արդ, նկատելով որ ներկայիս՝ Հայաստանի կառավարութիւնը մամուլի յանձնած է Ամիրտովլաթ Ամասիացի բժշկապետի առգուտ բժշկութեան» աշխատասիրութիւնը, կարեոր համարեցի քանի մը հակիրճ տեղեւութիւններ տալ Ամիրտովլաթի անձին և գործոց վրայ:

Ամիրտովլաթ ծնած է Ամասիոյ մէջ, մօտաւորապէս 1415ին: Հայրը կը կոչուէր Եղիա. իսկ զաւակներէն միոյն անունն էր՝ Ամիրէտիլ: Իր մահուան որոշ թուականն է՝ Զիե (= 1496), Դեկտեմբեր 8, Հինգչարթի, ըստ Լոնտոնի Բրիտանական Թանգարանի հայերէն մէկ ձեռագրին:

Ուսանք կը կարծեն թէ Ամիրտովլաթ մեռած է Ամասիոյ մէջ, ուր գացած հաստառուած ըլլալու է սուլտան Մէհմէտ Բ. ի մենալէն (1481) ետք: Թագաւորին պալատական բժիշկն էր ան, ժամանակ մը, արժանանալով և ձառահ պաշի (= վիրաբուժագետ) և Պօստանի պաշի (= անձնապահապետ) տիտղոսներուն, ինչպէս կ'ըսն Պարփակ Բիбл. Nationale-ի թիւ 247 ձեռագիրն և Վիեննայի Միթթ. Մատենագրանի թիւ 642 ձեռագիրը:

* * *

Ամիրտովլաթ բժշկութեան արուեստը սորգելէ ետք՝ կ'երթայ կը թափառի երկրէ երկր, ենթարկուելով զանազան հալածանքներու, տառապանքներու, աղքատութեան,

թշուառութեան, և ամէն տեսակ զրկանքներու, բայց ամէն տեղ ալ ճարտարօբէն կրդարմանէ իրեն զիմող հիւանդները, տիրանալով մեծ համբաւի: Ահա թէ ի՞նչ կը կարգանքայ մասին, Ամիրտովլաթի Օգուտ Բժշկութեան գործին ինձ սեպհական օրինակին մէջ (եր. 2-3). — «Շատ գժարութիւն եւ պատահմունք եմք քաշեր ի յանօրինաց, եւ ի յայլ աղջաց, եւ ի զատաւորաց, եւ ի լիսանց, եւ թագաւորաց. եւ շատ զրիփութիւն էի քաշել. եւ զժամանակին զչարն, եւ զբարին, եւ զպատահմունքն էի կրել. զնարսութիւն եւ զաղքատութիւն էի քաշել. ի յերկրէ յերկիր շատ բժշկութեան զարուեստն էի գործել. եւ փորձել էի ես իմ միտքն՝ շատ զեղեր եւ թարքիպնի. եւ շատ ծառայել էի հիւանդաց, եւ մեծամեծաց, եւ իշխանաց, եւ հազարապետաց, եւ հարիւրապետաց, եւ քաղաքացոց, եւ աղքատաց, մեծի եւ փոքու. եւ շատ չար եւ բարի էի տեսել. եւ հանց եղա(ց) հս հիմի, որ ո՛չ հարստութեան կու խնդամ, եւ ո՛չ աղքատութեան կու տրոմիմ. եւ զամէն չար եւ զբարին՝ մէկ կու տեսնեմ. եւ անհոգել եմ այս ամենայն ցանկութենէն կենցաղոյս»: Իսկ Անգլիաց Անգլէսի մէջ ալ կ'ըսէ (եր. 3). «Գնացաք ի շուրջ եկաք բազում քաղաքանի. եւ զ ծովին անցաք. եւ շուրջ եկի զաշխարհն Մակեդոնացոց. եւ եկայ բնակեցայ ի մայրաքաղաքն Կոստանդնուպալելիս. եւ հաւաքեցաք շատ զրեանք ի յայլ աղջեաց. եւ աշխատեցաք եւ ուսաք զբաներն եւ զանուանքն աղջի աղջի, եւ զփոխանն, եւ զառնելուն չաքն, հինգ լեզուաւ, կամօքն Աստուծոյ»:

Այսքան զիտութիւն եւ լեզուներ համբարելէ ետք՝ Ամիրտովլաթ կը ձեռնարկէ Անգլիաց Անգլէսի կազմութեան, կ. Պոլսոյ Ռ. Ներկողայս եկեղեցին մէկ խուցին մէջ, 1478 թուին: Անգէ երկք տարի ետք՝ 1481ին՝ կ. Պոլսոյ մէջ կը զրէ նաեւ Ախրապատինը, որ իր վերջին գործը կ'ըլլայ:

* * *

Մեր հին բժշկական գրականութեան մէջ բացառիկ գէմք մը եղած է մեր զիտնական հայրենակիցը՝ Ամիրտովլաթ, որ իր խորհմանութեամբ, խուզարկու մտքով և մեղ-

ուաշան գործունէութեամբ, ինչպէս տեսանք, պատիւ կը բերէ ոչ միայն իր ծննդավարին՝ Ամասիոյ, այլ և ըրջակայ բոլոր վայրերու, Մարզուանի, և մանաւանդ ամբողջ Հայութեան։

Իրօք՝ Ամիրտովլաթէ դարեր յառաջ ունեցած հնք նշանաւոր հայ բժիշկներ, ինչպէս Կեսարիոյ Ա. Բարսեղ հայրապետին յաջորդներէն Փիրմսոս եպիսկոպոսին (Երրորդ դար) կողմէ կը յիշուի «հայ բժշկապետ» մը, «Արքանու ճաշխէտքօց. սուկայն, ասիկա Յունաստան ուսած և ամբողջապէս հելլենական կրթութիւն առած հայ մըն է, որ թղթակցութեան մէջ էր Փիրմսոս հայրապետի հետ, ինչպէս կ'երեայ այս վերջնորս կողմէ հայ բժշկապետին ուղղուած մէկ նամակէն, զորիմ ուշադրութեանս յանձնած է Աւսուցչապետն ։ Աղոնց։

Գիտենք նաև Թրոյ գարեն Յովհաննէս անունով ուրիշ հայ բժիշկ մը, որուն մասին սա չափ տեղեկութիւն ունինք, թէ ի «Վիսիական»¹⁾ լեզուէ ի հայ թարգմանած է Ա. Դիոնեսիոսի պատմութիւնը, Յիթ (= 880) թուականին։

Բայց բժշկական գործեր արտադրած չեն ասոնք, հաւանականաբար։

Մեր հաւգոյն պատմիչներէն Դաղար Փարպեցիի մէկ խօսքէն, — թէ Այրարատ հահանգին մէջ կը գտնուին զանազան տեսակ բոյսերու արմատներ, որոնք սատուգահմուտ բժիշկներու ճարտարագէտ ճանաչողութեամբ՝ գեղերու մէջ օգտակարապէս կը գործածուին»²⁾, — կարելի է հետեւցնել, թէ բժիշկներ կային Հայուստանի մէջ, բայց անոնց ազգութեան մասին տեղեկութիւն չունինք։

Մեզի ծանօթ հայերէն բժշկարաններէն ամենէն հինը կ'երեայ՝ ԿԱՐՈՒՑ (ո՛չ թէ Անոյ) Բագրատունի թագաւորներէն ուսումնասէր Գագիկի ժամանակ (1028—1064) գրուած «Զաքարիայի Արքույն» (Razès) Բժըշկարանը, «թարգմանուած Գագիկի հրամանաւ», ինչպէս կջմիածնի Մատենադարանին մէջ ստուգած է Հ. Ներսէս Վ. Ակինհան։

Գագիկին երկու գար յետոյ (1294ին) այս թարգմանուած բժշկարանէն քաղուած կազ-

մուած է Հեթմեանց մօտաւոր ազգականներէն Հեթում Պատմչի գործածութեան համար ընդօրինակուած բոլորգիր մագաղաթեայ այն ձեռազիր Բժշկարանը, որ 1281 թուահամարին տակ կը պահուի Վենետիկոյ Մխիթարեանց Մատենադարանին մէջ, զաղափարուած Մրտեցի Վարզի կողմէ, որուն յլշատակարաններէն մին կ'ըսէ։

«Թթագաւորացն այր՝ զքրիստոսապաշտ խոնեմ և քաջարի արանց պարոն, զբարեհամբաւն Հեթում, տէր Կոորիկոսայ, յիշեսջիք ի Քրիստոս՝ որք Քրիստոսի էք վիճակեալք. որոյ հրամանաւ սկիզբն արարի զրութեան յոքնահանճար և յամենայնի պիտանոցու և հարկաւոր տառիս բժշկարանի, ես՝ ապիկար ծերունիս՝ Վարզ Մրտեցի, Սկիզբն՝ ի թու(իս) Հայոց Զիդ (= 1294), յամսեան յուն(ո)ւրի ի իլն»։

Հեթում Պատմչէլ՝ մեր Հեթում Ա. թագաւորին թոռն էր, որդին Օշին Պալիի (+ 1265)։

Ամասիացի մեր գիտնական ազգակից և հայրենակից Ամիրտովլաթէ յառաջ բժշկական գործեր արտադրող հայ հեղինակներէ ամենէն կարեւորն է՝ 1184 թուականէն ծանօթ Մխիթար Հերացիի պէս հանձար մը, զոր Ամիրտովլաթէ և Ասար Սեբաստացի միաբերան կ'անուանն և Մեծն Մխիթար»։ Բայց ասիկա եղած է քաջածանօթ մասնագէտ մը ջերմախտի, ակնաբուժութեան և միզաբանութեան, — որոնցմէ առաջինի մասին զրած աշխատութիւննը՝ ԶԵՐՄԱՆՑ ՄիկիթՈՐՈՒԹԻՒՆ, տպուած է Վենետիկ, Մխիթարեանց քով, 1832ին. իսկ միւսները կը մնան անտիպ, վասնզի անոնցմէ ամբողջական գործեր չեն հասած մինչեւ առ մեզ, այլ կան զանազան հայ բժշկարաններու մէջ ցրուած կորսուած հատուածներ³⁾ — Ասոնց հետ բաղդատմամբ՝ ԱՄԻՒՑՈՎԼՈՒԹԵղած է քաջ պրատող մը, բժշկականութեան ամէն ճիւղին՝ նոյն իսկ արտաքին զիտութեանց վրայ ստուար հատորներ զրող համայնագէտ մը, բառիս իսկական նշանակութեամբ։

Հերացի իր Նախարանին մէջ կ'ակնարկէ իրմէ յառաջ գոյութեան հայ բժիշկներու և

1) Վեռիականոն = վրականոն = géorgien։

2) Ղ. Փարպեցի, առաջ. Վենետիկ, եր. 23-4։

3) Հանդէս Ամորեայ, 1930, եր. 223։

1) Տեսնել Ա. Զօպանեանի Անահիտին մէջ (1935, Յուլիս) Մ. Հերացիի մասին տպուած ուսումնասիրութիւնս։

բժշկաբաններու, զօրս և համառօտ և ծաղկաքաղ կը գտնէ:

Միսիթար Հերացիէ զատ՝ Ամիրտովլաթ
կը յիշատակէ նաև իրմէ յառաջ և իրենց
գործերով իրեն ծանօթ ուրիշ հայ բժիշկ-
ներու անուններ, ինչպէս՝ «Ահարոն բժիշկն»,
և որդին նորա՝ Ստեփանոս բժիշկն, և տոհմի
նոցա՝ ձուլին բժիշկն, և Արգիս բժիշկն,
և Յակոբ բժիշկն, և Դիղլին բժիշկն, և Ու-
մաւոն բժիշկն, և Վահրամ բժիշկն, որ շատ
գրեանք յիներ էին»¹։

卷之三

Ամիսով լավի դործերն են .

1. Օգոստ բժիշութեան, որ սկսուած է
1466ին և աւարտած՝ 1469ին, Փիլիպպո-
պատու մէջ.

2. Անգիտաց անպէս, որ սկսուած է
1478ին և աւարտած՝ 1482ին, Կռուտանդ-
նուայուսու մէջ.

3. Այսապահին, որ զբաւածէ 1481ին,
կ. Պալատ մէջ. և

4. Գիրք Ռամկարկան, որ գրուած է
1474ին, նույնակա կ. Պալսու մէջ:

Ասոնցմէ ԱՆԴԻՑԱԾ ԱՆՊԻՑԸ՝ որտի կատարեալ զոհունակութեամբ և մեծ հրճուանքով կը յայտարարեմ, թէ անոր գրութեանժամանակէն հինգ դար յիշոյ՝ 1927ին՝ հրատարակած եմ զայն Վիեննայի Միխարեանց քով:

ՕԳՈՒՏ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ գործը պատրաստէ, առ ի հրատարակութիւն։

ԱՅԱՄԿՈՎՈՆ, ԳԻՒՐՔԸ՝ բժշկականութեան
հետ կապ չունի, այլ տեսակ մը աստեղահմա-
յութիւն (Astrologie) է, կատարելով գուշա-
կութիւններ, որ իր ժամանակին՝ եղած է-
լնդհանրացած «զիտութիւն» մը, որով Ա-
բեւելքի զբեթէ բուլոր «զիտնականներն
զբազած են և այդ ճիւղի մասին հասոր-
ներ լորինած :

Այս գիրքն Ամերտովլաթ զբած է Հայոց Զիդ ($= 1474$) թուին, մայիսի մէջ, և վերջացուցած է օհի յամսեանն յաւզստոսին ԺԴ աւբն, ի վայելումն Պր. Մինասին».
Խնչպէս կը կարդանք անոր վերջարանին
մէջ: Բուն յիշատակարանն է.

աՅանուն Աստուծոյ զթածին և ողորմա-
ծին և սկլիպը բանիս այս իմաստու-
թեան արհեստին՝ որ հաստատեցին իմաստ-
նասէքն, ողորմութեամբն անեղին եւ ան-
մահին բարձրելուն, որ զարարածս ստեղ-
ծեց. զծով եւ զցամաք, զհրեշտակը եւ
զմարդ, զհոգի եւ զչնչաւոր, եւ զանատուն
եւ զգազան, զթոչուն եւ զսոցուն. եւ փառք
տրարածոցն Այ, ամէն եւ կրկին գոհանա-
լով փառաւորենք զմիանցնական Մը Եր-
րորդութիւն՝ զՀայր եւ զՄրգի եւ զՄր Հո-
գին. եւ հաւատամ զաւետումն Քի, եւ
զծնունցն Քի, եւ զմկրտութիւն Քի, եւ
զխաչելութիւն Քի, եւ զաստուծապէս
յարութիւնն եւ զհամբարձումն Քի, եւ
զնովին մարմնով զգալուստն միւսանկամ,
եւ զգատաստանն յաւիտինական հաւա-
տամք: Եւ կրկին գոհութիւն միասնական
Մը Երրորդութեան, որ շնորհեց մեր Հայոց
աղջին՝ զՄր Կրիզորիոս Լուսաւորիչն Մեծ
Հայաստանեայց, եւ առաջնորդ եղեւ լուս
զիւսութեան Հայոց եւ լուսաւորեց զամե-
նայն տիեզերս Հայաստանաց, հրամանիւն
Այ, եւ զոհանալով փառաւորենք զարա-
րիչն ԱԾ, որ յայտնեց զսուրբն Սահակ Պար-
թեւ ի յազգէն Լուսաւորչէն, որ յայտնեցին՝
հետ Սրբոյն Մեսրոպ վրդպատին՝ զհայ զիբն,
եւ թարգմանեցին զամենայն Հին եւ Նոր
Կտակարանքն եւ զարտաքին զիմաստու-
թիւնք. եւ զքիրականութեան արվեստն.
եւ զաստղաբաշխական եւ զերկրաչափական
եւ զրժչկական եւ զումկական եւ այլ բա-
զում արվեստնի: Եւ ի վերջին զարուս որ
նվազել էր հայկակուն ազգս. ի կա-
թողիկոսութեան Տր. Սարգսին եւ եւ ի հայ-
րապետութեան Տր. Յովակիմայ արհի եպօս-
կոպսոսին, ի մայրաքաղաքն ի Կոստանդի-
նայպոլին, լճի հովանեաւ Սրբոյն Նիկողա-
յոսի սքանչելազորդին. եւ ի թուականու-
թիւնքն Հայոց Զի՞՞ ամին, ի մայրս ամսոյ
Հոռմացեցոց (այսպիս) ի՞Զ աւրն. եւ թարգ-
մանեցաւ Գիրքն Ըռամկալան՝ ի տաճիկ
լեզվէ ի հայ լեզու, ձեռամբ անպիտան եւ
անիմաստ ձառային Այ, Ամիրառովլաթ թշշ-
կին. եւ որք կարգայք եւ կամ աւրինակէք՝
թողութիւն խնդրէք ձառային Այ. եւ ԱԾ
յիշէ ի միւսանգամ զարուստն, ամէնք:

ԱԽՐԱԴՐՈՒՅԹ գալով, ասիկա արարեւ
բէն բառ է պահանջման կը նշանակէ Pharma-

4) Այս բժիշներու մասին տեսանել Ա. Փ. Աղջ. Հիւանդանոցի Բնդպարձակ Տարեցոյցին մէջ 1932ին գրած «Փլ. զարու հայ բժիշներ ըստ Ամերիկայի աթթի» տպուածս, երես 112-115:

սոքէ, այսինքն՝ Դեղազուգութիւն կամ Դեղերու պատրաստութեան Գիրք:

Զանազան մատենագարաններու մէջ կամ թէ անհատներու քով օրինակներ ունինք անկէ, բոլորն ալ ցարդ անտիպ: Ես ալ Ամիրտովլաթի կողմէ գրուած պատրաստուած օրինակ մը ունիմ քովս:

Ամիրտովլաթի Ալյաւապատինը երկու խրմագրութեամբ ծանօթ է. Ա. Լիալիատար խմբագրութիւն, և Բ. Համառօս խմբագրութիւն:

Իմ ձեռքս գտնուածը՝ Համառօս խրմագրութիւնն է, զոր կարելի է հրապարակ հանել, օգտուելով անոր միանգամայն ժողովրդական առձեռն բժշկարան մը ըլլալու հանգամանքն:

Յայտնի է, թէ մենք՝ Հայերս՝ բժշկականութեան վերաբերեալ ընազիր գործեր չունինք, այլ Արաբացւց Հայաստան մըսնելէն ետք, այսինքն 636է ասդին, բոլորն ալ թարգմանածոյ աշխատութիւններ են արաբերէնէ, քանի որ նոյն իսկ Եւրոպացիք օգտուած են արաբական բժշկական գործերէ, ըլլա'յ ուղղակի, ըլլա'յ անուղղակի, այսինքն՝ արաբերէնէ լատիներէնի վերածուած օրինակներու վրայէն:

Հետեւաբար՝ մեր Ամիրտովլաթի գործերն ալ այս կարգի աշխատութիւններ են, ձեռուած չափուած արաբական գործոց վրայէն: Ուստի, զարմանալու չէ երբեք, որ բժշկակելարանական բառերն ընդհանրապէս կը հնչեն արաբերէն, որոնց՝ շատ անգամ՝ հայերէններն ալ դրած է Ամիրտովլաթ, ըստ իր բարի սովորութեան, ճախացնելով հայ զիտական բառագանձը:

* * *

Մեր հմուտ հայրենակիցը բժշկականութեան մէջ գործածուած գեղենն՝ իրենց ախտաբանական յատկութեանց համեմատ, կամ՝ իր բառով՝ ըստ իրենց գործաւորութեանց և զօրութեանց, բաժնած է 64 գասակարգի. մինչդեռ Սինայի Որդւոյն Կանոն (لأنون)

զրքին մէջ անոնց թիւը՝ 54 կարգ կը դրուի. իսկ արդի բժշկական զրականութեան մէջ այս թիւը կրկնապատկուած է:

Պարիս

Կ. Յ. ԲՈՍՄԱՋԵԱՆ

(Մայդան Հայոց)

ՀԱՅ ՎԱՐԱԿԱՆՆԵՐ Ս. ՍԱԲԱՋԻ ՎԱՆՔԻՆ ՄԷջ

Զ. ԳՈՐԾՈՒՆ

Ակիւթապոլսեցի Կիւրեղ Ս. Սաբայի վարքին՝ մէջ կը պատմէ թէ Սարա (+ 524), որ բուն հիմնազիրն է Պաղեստինի մէջ վանական կենցագիրն, իր մահուան անկողինին մէջ իրեն յաջորդ նշանակեց Մելլատոսը, որուն զրաւոր յանձնեց իր վանքին մէջ կիրարկուած կանոնները, պարտք զընելով անայլալ գործազրել զանոնք: Այս Կանոնները կորսուած կը նկատուէին երբ յիսուն տարի առաջ սուս գիտնական Ա. Տիմիթրիյեւսքի զանոնք գտաւ Սինայի Մատենագարանին թիւ 1096 ձեռագրին մէջ (ԺԲ. — ԺԳ. գար) և հրատարակեց ոռուերէն թարգմանութեամբ և ծանօթազրութիւններով: Այս Կանոնները վերստին հրատարակեց Էտ. Քուրց, բնագրական կարգ մը ուղղումներով, Տիմիթրիյեւսքի աշխատութեան մասին իր գրախօսականին մէջ՝ — ուրկէ քաղոււած են այս բոլոր տեղեկութիւնները — համեմատելով զանոնք նոյն մատենագարանին թիւ 531 ձեռագրին մէջ պահուած ուրիշ մէկ օրինակին հետ, որ օրինակուած է ԺԵ. գարուն և նուազ հարազատէ քան առաջինը:

Ինչ որ հետաքրքրական է, Հայոց համար, այս Կանոններուն մէջ, ուս է որ Ա. Սարա իր հիմնած վանքին մէջ կը խօսի Վրացիներու և Ասորիներու մասին. բայց Տիմիթրիյեւսքի (որուն հակառակ չ'արտայայտուիր Քուրց), նկատելով որ Սկիւթապոլսեցի Կիւրեղ Ս. Սաբայի վարքին մէջ Վրացիներ չի յիշատակելը, այլ Հայ վանականները (թէ նամօթ է Վրացիներու ներկայութիւնը Պաղեստինի մէջ Ե. - Զ. գարէն սկսեալ), կ'ինթագրէ որ Ս. Սաբայի Կանոններուն սկըզբնական բնագրին մէջ վրացի բառին տեղ կը գտնուէր նայ բառը, և թէ յոյն ընդօրինակիններն են որ այդ փոփոխութիւնը կատարած են, մղուած այն տառելութենէն զոր Յայները Թ. - Ժ. գարուն կը սնուցանէին Հայոց դէմ:

Հ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1) Cotelier, Eccles. graec. monum., III, 353.

2) Ա. Տիմիթրիյեւսքի, Ս. Սաբայի Կանոնները (Քիւթ Հոգեւոր ծեմարանին Աշխատութեանց 1890 յունուարի թիւ, էջ 170-192), ոռուերէն:

3) Byzantinische Zeitschrift, III (1894), 167-170.

4) Cotelier, III, 247, 264.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԵՐԵՄԻԱ ԶԷԼԷՊԻ

•

Երեմիայի վաստակին առջև կ'ընեմ քանի
մը աւագ բաժանումներ.

- ա) — Մարդը եւ գրողը
- բ) — Պատմազը
- շ) — Քերպողը :

Այս բարակրաֆներէն առաջնոր զիս քիչ
կը զբաղեցնէ, քանի որ ամբողջական աշ-
խատութիւններ (Տ. Թորգոմեան, Հ. Ն.
Ռինեան, Մ. Սրբազն) տուած են այդ
մասին փափաքելի բոլոր ճանրամասնու-
թիւնները: Երեքին մէջ ալ Զէլէպին կը
նուանուի, կը կապուի իրականութեան, մեր
գրականութեան մէջ քիչ անունի վիճակուած
յատակութեամբ մը զիմերու:

Իմ մասիս, չեմ կենսագրեր գայն: Բայց
պարտաւոր եմ կազմել մարդը որ ի վերջոյ
ստեղծիչն է զործին: Չեմ ալ ընդարձակեր
շատ տարազին տարօնութիւնը, քանի որ
գրագէտի մը անձը և զործը թէե իրարմէ
կախուած, յաճախ իրարու ներհակ երեսները
կը թուին աւելի բարձր, երօրդ եղելութեան
մը՝ որ գրականութիւնն է այս անդամ: Ի՞նչ
կայ Ներածիստին մէջ Տիրան Չրաքեան
ըսուած խորհրդաւոր, առեղծուածային ե-
րեսոյթէն: — Ապահովաբար քիչ բան: Յե-
տոյ գրական զործի մը մէջ գրագէտին ան-
ձը անշուշտ տեղ մը ունի, զործին թափան-
ցումը դիւրացնելու տեսակէտէն, բայց միշտ
ալ չէ անհրաժեշտ: Անշուշտ, վերլուծողը
պարտաւոր է, իր հաշույն և ոչ թէ պատ-
մելու համար ուրիշներու, ճանչնալ իր անձ-
նաւորութիւնը, յատկանշական, նկարող
մանրամասնութեանց յորդ գրուազներու
մէջ, ըլլալ մօտէն շօշափած, հասկցած ու
կշռած անոր ներքին ծալքերը, կարճ զայն
իրացուցած, իր բոլոր կողմերուն ու մաս-
նայատկութեանց փաստերուն մէջ, ոչ թէ
այդ ամէնը պատմելու, անպատճառ շահա-
գործելու նպատակով կամ պարտքով, այլ
իր իսկ ապահովութեան համար: Երեմիայի
հետ այս վերջնին պարագան երջանիկ բացա-
ռութիւն մըն է բարեբախտաբար, վասնզի
Չրագրութեան չորս հարլւր էջերը, բաղ-

մահասցէ ուղերձները, երկարաշունչ ող-
բերը, անհամար լիշտակարանները, բա-
րեկէպ կերպով ազատուած իր բազմաթիւ
թուղթերը, նոյն իսկ երորդներու համար
չափաբերուած քերթուածները, գրականու-
թեան պատկանելէ առաջ, վիայուրիւններ(*)

(*) Ահետարակոյս զրողի մը անձին նախա-
ստերին, տարդանուած՝ զոյ և իր զործին մեց:
Մերու մըն և Հարու Հը յօքինել, զործին շար-
ժումի զիծեր հաւափելով որոնց անդողութիւնը
յանախ պիտի յանզի վաղաժամուածուածու-
մին: Ուրիշ մերու Գը Հարու Հը յօքինել,
զնիկ սոյն տողերը, անցները, կեները ուր զրո-
ղին նկարազիրը ինքզինը կը մասնի, ու աննց-
մով կազմել այս անզամ անձնաւորութիւն մը,
որ նողերամօրէն մեզ կը շահագրոն, յանի որ
անհատին շարժումները միշ անհատին չեն պա-
կանիր, կապ ունենալով անելի ընդարձակ, ու-
րիշ, արտային մղումներու հետ, մինչ նկարա-
զին փասերը անյեղի, անձնական ու մեզին
կախեալ նողեկան իրողութիւններ են: Երեմիա
անհաշի շուայած և ինքզինը, վանզկոյտ յափ
զրողի մը համար անհրաժեշտ լրջութիւն մը,
բայց ու զործի:

Թուշներուն մէջ, որոնք ուրիշներու մօս շա-
տագոյն գեիններն են նկարազիրներու պար-
զումին, Երեմիա մեզի կ'երեւաց յանող, անկա-
յուն, պատհենապաշ: Օրուան իշխանուր մը,
եկեղեցական կամ աշխարհիկ, անր համար
անհրաժեշտ պաշտպանութիւն մըն և: Ասոնց
սպար անիկա կատարած և օրինակելի հաւա-
սարմութեամբ մը: Ճիշդ և որ Եղիազար կարո-
ղիկոսի անշատղական բաղաբանութիւնը հա-
մարձակած և նենադատել, բայց յրած և ատիկա
իրեւա պատուիրակ, իր եսին զզալով անրող
հայութեան ուժն ու համակրամնը, ու վշացու-
ցած զրաւոր Այերապացին (Եղիազար կարողի-
կոս) բայց աւելի յիսոյ երկիւղածութեամբ իր
զզումը մատուցած և նոյն Այերապացինին երբ
անիկա կը բազմի նայոց նայրապետութեան Ա-
րուին: Եւելի տրութ և այս անկայուն նողե-
կանութեան միս փասըր որ մեզի կուզա նորհն
այդ բուղբերին: Երեմիան, դարուն անձնելն
հօր հայզի իշխանութիւն ուշուուեած և,
անոր ուսն ուղան, անոր հնաշը նոր ուրէ Հը, ինչ-
պէս չի վարանած զրելու իր մեկ մերուածին
մէջ (Վերաբերեան բար յԱրտ: Զելոյէ), անոր ըր-
նորին մած ընդարձակ շշանակներու ծածօ-

են անձէ մը: Անիկա Շնորհալիին հաս միը
այն գրողներէն է որոնց կեանքին, զոր-
ծունէութեան, գրական վաստակին համար
մինք ունինք առատ վաւերաթուղթ:

Երեմիա Զէլէպին չի տառապիր ինքզին-
քը քանի մը անգամ ուրիշներու զաւակ
յայտարարելէ : Անիկա անգամ մը զաւակն
է իր հօրը : Կը գրեմ այսպէս վասնդի այդ
պարագան երեմիային համար չէ առիթ այն-
քան խանգավառութեան որքան երբ եր-
կրորդ անգամ ինքզինքը զաւակ կը յայ-
տարարէ Ամբակումի մը, մէծահարուստ

բացեան, մանուանի տակալան բարձր պաշ-
սօնաւանեանու հիմքարունակ աշխարհին. անոր
հետ պատաճ է Կը-Եւ, Եւ-Կը, այսինքն բան-
կային, պատերազմական մեծ արարթներու համ-
րին ու, կը հասկցուի փառաբանած է անոր ա-
մենազօր անձը, անոր մանուան յաջորդ օրն իսկ
Եղիազար կարողիկոսին գրելու համար փոփոքի
զիր մը ուր կ'ուրախանայ բռնակալին ։
Հուն: Ինչ որ ազ ըլլայ շարժափրը այս քե-
րեաւ արդար աղ արտայայտուրեան, Երևանի կը
մնայ էր արարչին գուշունեան ունի, քեզարեալով
մեզի իրենին աւելի ընդառանի ուրիշ պատելու
մը: Ստիլիս նկարազիր մըն է, ընդառանի սա-
րդութեամբ մը, դարէ մը ու հոգեբանութենէ
մը: *Sarvadé* զայն իր վրայով իր ժողովուր-
դին: — Թերեւս անեսկի բայց ոչ սեկալէի: Երեւանից
բուղբեն ու ուղերձենք մեր մէջ
կը յօրինեն պատելու մը մարդ մը որ քերեւ է
ու ժնուր, անհաստան ու շուշ, խոնու բայց
ոչ-խոր. իիչիկ մը լուս (ականջը խօսի արեւե-
շահայ մարկսիսերուն), իիչիկ մը քանչուն,
հաճոյապաշ բայց պարկէց, տոկուն բայց ձա-
կասագրապաշ. — բորբը կողմեր ու զիծեր
որոնի այնին յանախ իրարու հետ կ'երեւան
Պղասանաց առանձին վրայ, անոր միջին ժիպա-
րին, բանի որ ուղենի ցուցենի, պարտաւոր ենի
այդ բաղաքը ընդունիլ այն վերջին հնոցը ուրիշ
նորակերս դուրս է եկեր մեր ժողովուրդին վեր-
ջին դարերուն յատկանի համարդական իր պա-
կերը, ևս, առաջնուն, իր առակեղուրիաց ու
քերութեամբ հանդկումը: Ամիւանեար, իշ-
խանեներու ուրիշ աղ կարգ մը կայ անշուշ, միշտ
այդ բաղաքին մէջ, քերեաւ սպացուանելու հա-
մար վարկածը: Այս վերջինները անեսկի չկ
ընդունի ցեղին ազնուական, մարտական, զոր-
ծօնական բնապղմերուն արտայայտուրինը (կրո-
նակ դարերը պեղել, հաստակու համար վար-

հայթայիթիչ մը կայսերական բանակներուն, հացէ և ալիւրէ։ Այս Ամբակումը հաւանաբար գիծէն է այն մարդոց սրոնք իրենց բնական ընդունակութիւնները զործի աշխարհէն՝ զարգացուցին քիչ մը շատ զբական իմաստութեամբ, ու գտան ճամբան իշխող տարրին հետ լեզու, հասկացողութիւնն ճարելու։ Անշուշտ ուրիշ ծնունդ չունին ամիրանները։ Երեմիա այս մարդուն տունը ճաշի երթալն իսկ պատմական իրողութեան մը կը բարձրացնէ ու կ'արձանագրէ իր Օրագրութեան մէջ։ Երորդ անդամ անիւ-

կածը հայ կայսրերու, զօրապետներու, օսմաններու սպասին մեջ մեծ անոններու վրայ)։ Պող-ասիայը բայց ենի բնազրիներու զարգացումն է, հաւանաբար, բայց անառու միշալայրի մը մեջ, երբ ցեղին մեծ պաշտպաններին հառն, քառութեած դաւած էն իրեն, բայց լիզուն, կրօնիք, պար-տուրեանց կափիծն ու յիշաւալը կը շարունակն մեալ հաւատարիմ։ Թուրքը անզիսակից կա-դասարողն է այս Կայութքին։ Անոր բոնուրեան տակն է որ հայ ելքարարներ անհետացած է իր շեռնական ժողովուրդի բարդ complexeր (Երե-միայի դարեն 6-7 դար առաջ բուրժ ազգակը ի գորու է մեր վրայ)։ Ու հակազդեցուրեան մուր ճամբաններով՝ ցեղը իր հոգեկան դրու-րիւնը դրած է նոր հաւատարակշուուրեան մը մեջ, երբ խոհական, ճաւար, համակերպա-կան, débrouillard ուրիշ բնազրներ կը կերպա-ւորուին դար առ դար։ Անշուշ չի տառած հայ ժողովուրդը, իր վայրավատին, առեն չա-րիքի համար յարդարուած դրութիւնը չն զի-սեր ինչ հրաշոյ պանպանիլով։ բրդուրեան ծո-վուն մեջ։ Անոր այն մասը որ բաղանենք պիտի ապաստամի, թերեւս կ'ընկը փորձը այն յարևա-րացման զոր պատերազմին վերջ տևամի մեր աշ-քերով։ Այն մասը որ հողին պիտի կապուեր, զիսաւորար արեւմտեան համանեներու մեջ, կը շարունակի իր հայրենիքին աւանդուրիւն-ները։ Դիւդ թէ խալաֆ Պողիսին համար եղան անսպաս մրերց մը ուժի, արիւնի, խանի որ մայրախանակին շափող պարմանեներուն դիմ հին աւիշին այս անդարդում նախասը մեծազոյն ազդակ մըն էր։ Զրկեցիք այդ փրկարար պա-տասը ու դուր կ'ունենամ, այդ Պողիսկն, հա-ւանաբար անառու, այն պասակարզը ուրուն եր-մոյցները իրենց վերջին կերպարանափոխու-րիւնը զան ժթշտ դարուն, — Զիշկիսկներու տակար ապազգայնացած զերպարաններուն ան-

կա զաւակն է իր ուսուցիչ-քահանայ Տէր
Յովհաննէսին։ Հոգ չեմ վիրաւորուիր,
արուած ըլլալով սովորութիւնը նովելոր ու-
ղիւրեան որ բարքերու մաս կը կազմէր
այդ գարերան և որուն տկար արձագանցը
զեռ կարելի է զգալ քահանայական թըլ-
թակցութեանց մէջ։ Զօրորդ անգամ կարզը
կուգայ ըլլալու զաւակը Ապրօ Եկէպիփի։ Աւ
որպէսզի ամբողջանայ ցանկը, յաջորդաբար
զաւակն է անիւկա Եղիազարի, Փիլիպպոսի
և այլն։

Երեմիա Զէլէպի ընդարձակ խռաբերութեանց մարդ մին է։ Այս աֆահին նօտարուած

փառունակ մեացորդները, որոնք հայերենը սեղը իրենց պարտիւնուն տապահնելը պիտի սկզբն ուսպագի իրենց զաւակները աւելի հարազատ իւր-պով կարենան կրել իրենց Առողջ ազնուականութեան և լեռտան տիզունները: Ցեղային տարրեն պարզուած այս դասակարգը մեզամօս ճամա-նակներու մէջ չունեցաւ ցեղին զարգացման վրայ աղիսաքեր ազդեցուրին մը, բանի որ ունեի արդիական ազդակներ, զիր, զրականուրին, դպրոց կը մտնեն կրկս: Երեմիայի ճամանակ Պողոսիա շառած: ինչպէս անիկս կը պարզուի ձեռ մժին մէջ Երեմիայի զործերեն, դու չէ բիրկացած: Անոն Օքաքը-Շեն մեծ հե-րունները երեք shrskrslr են գրեր, համանուն, Թւեմ-Ըւ, Քեօ, Պարք-ի-ն-լ պիտակներով իւրա-մէ զանազանող իրենց անունը, Աստվածառու: Աւելցուցք ճշգնաւու Հերքի մը մը աղ աւ երեց: ու կ'ունենաս պատկերը հասարակութեան մը ուր այս մարդերը կացուրեան բանապինները կը ներկայանան, Թուրքներու պազաններուն զրո-ները բացող որսկոցի աննացնի զան համան-ներ....: Ամրող հասոր մը անբաւական է նը-կարապիրները հանձնու համար այդ տարօրինակ համայնքն: Ժիշտ դարը կերտունական այն շր-ցանն է ուր նողերանական սա շիմուն կը զոր-ծի, ինձնազոււխ, պղուր, պաօր անհաւասարի իր օրկեններով: Ժիշտ դարուն Վենետիկի հրա-սարակուրինները կը նպաստեն ոչ ք փոխելու այդ պատկերը, այդ զայն հասկեալու: Ահա ք ինչո՞ւ վերջին դարեւնու բորբ ձեռապիրները միշ կշիռ մը ունին բանի որ մեծ կամ պատկեր կը քերեն պողոսիայ յացցին սկզբան: կամ նըկարապիրը պարզեց մեր մժին մէջ: Կը ծանրանամ հարցին վրայ, վաստի ըլլալով որ մեր ձեռապիրներուն սուլար մասը զործ է այդ դարեւնու:

ինչպէս ինքինքը կ'անուանէ տեղ մը, կը
ձահնչոյ երւասպէմբ, կօմիածինը, երիմբ,
Առւրիան, Կեհևն, Բուժելին, Պոլամեռն
ուշանները, ոչ զրուաշրջիկի մը աչքերով,
այդ այդ գարերու առաքելութեանց յատուկ
զանգաղ բայց նաև ապաւորութեանց ընդ-
մէջէն։ Իմ տեսած կարներուն մէջ այդ
վայրերէն իր մեզի ձգածները անշուշտ ան-
բաւական են մեր արգիական հետաքրքրու-
թիւնները զոհացնելու։ Բայց ատմաք, այդ
պոտոյտները կազմած են իր զրագէտի փոր-
ձառութեանց ամենէն ամուր նախատարրե-
րը։ Իր գործին ընդպարձակ զանազանութիւնը
սիսալ չէ կապել այդ հանգամանքին։ Գրելլ
ըմբռնելու իր համապարփակ կերպը Ժթրտ
գարուն միայն ընդհանրացաւ, զիստորա-
րար Վենետիկեան հայրերու միջոցով։ Իր օ-
րերուն օրագրութիւնը ինքնին զրացում մըն
է և իրը այդ ինքնարաւ։ Բայց կ'ենթազրեմ
թէ «Վիպասանուրիինն յԱպրօ Զելեպիին» ը
երեմիայի կերպին(*) նկարազիրը ամենէն
հարազատ արտայայտող քերթուածն է, որ
կը հետեի, անպայման, իրականուրեան մը,
ընդհանրապէս եղերական։ Հոն զրողը ինքը
իրեն կը ներէ շեղումներ՝ պատմելու ստի-
պողութենէն, ու նման հին օրերու զիւցա-

Ներգութեանց կամ արեւելեան աշուղաւկան յօրինումներու մէջ յաճախուած սովորութեան, կը քերթէ պատահարին դասը: Պոլսոյ հրդեհին պատմութեան մէջ անիկա երկու զոհերու (կրտկի) գրուագը տալէ յետոյ, անոնց տապանաքարերուն վրայ իր զրած ստանաւորն ալ կը զետեղէ, քերթողական որու չնորհներով, որմէ վերջ անիկա կ'ենթարկուի ներշնչումի թափին: Ոտանաւորները կը յաջորդեն ոտանաւորներուն, յաճախ հասարակ, կրօնա-բարոյախօսական այն օրերու ընթացիկ ողիսով, առատ, անըսպաս: Մարդ ցաւով կը համակուի սա զեղծանումին զիմաց երր անձանօթ է թէ կը դանուի գրական շատ ընդարձակ, հեռուները իշնող աւանդութեան մը առջեւ: Այդ ոտանաւորի կաղապարներուն անտանելի միօրինակութիւնը (երբեմն յանդերը հարիւրը, երկու հարիւրը կ'անցնին՝ եալ, ալին, ի, աց ...) մեզի կուգայ նարեկացիին իսկ օրերէն: Տաղանդաւոր զբագէտներ, Գր. Մագիստրոս և Ն. Շնորհալի գիրքեր զրած են հարիւրաւոր էջերով ուր յանգը չորս անգամ կը փոխուի: Ըսի այս ամէնը վասն զի կ'ենթագրեմ որ ոտանաւոր գրելը այն օրերուն ալ արհեստ մըն էր ինչպէս հիմա. ու յարաբերութեանց մեծ ընդարձակիչ մը: Ժթրտ գարուն պատուելին է որ կը կատարէ սա գերը:

Աշխարհը, մարդերը, ու բառերը քիչիկ մը պրկելով՝ հոգերանութիւնները թափանցել գիտնալը անստարակոյս գրական տուրք մըն է, երբ այսպէս ճարուած մեր փորձառութիւնները պիտի պատմինք թուղթերու վրայ, ինչպէս նոյն արդ կարողութիւնը իրմով օժտուածը կ'ընէ վարիչ տիպար մը, գործոնական առաքինութեանց ակոսով: Զէլէպիէն իմ տեսած զիրքերը կուտան տպաւութիւնը գրագետին (մի պահանջէք առուեսալիքը որ միշտ բացառիկ չնորհի մը ծնունդն է): Երբ կը խօսի Պոլսոյ քաղեցիներէն, անոնց իշխանաւորներէն, անոր բառերը ինքնարերաբար կը գտնեն լայնք ու զօրութիւն, զարնելու աշխոյժ, փոելու համար մեր առջեւ ներքին, ասիական ապականութիւնները մեղքի, աղտի, աղբիւսի մէջ անասնացած, լպրծուն մեծատլերուն, այնքան տարեր մեր տեսածներէն, գիտածներէն: Անշուշտ պատկերին ուժգընութիւնը անդրագարձն ալ է պատկերու-

ղին: Այդ գարշութիւնները նկարող մարդը, իր կարգին մաքրութեան հերոս մը չէ, զոր ըլլալ չենք պահանջեր մարդոց միջինէն: Բայց կը զգաս իր տառապանքը, իրական, վարակիչ: Այդ Սոգոմ-գոմորեան, նինուէաւ կան համապատկելներուն^(*) զիմաց, կը զգաս որ բառերու վրայ աշխատող չնչին նոտարմը չէ այդ պարսաւին մունեատիկը, այլ իր մարդերը մինչեւ իրենց մազերուն ծուծը ճանչող ուրեքութիւնը պարագաները, հաւանաբար նկարագրի ուրիշ յարմարութիւններ զինքը անհրաժեշտ կ'ընեն օրուան մեծ հարցերու յարգարման: Զուր տեղը չէ որ Ապրօ Զէլէպիէն հետ կը պտտի աշխարհէ աշխարհ: Անիկա 18^{րդ} դարու ամիրաններէն գործածուած պատուելին չէմ զիտեր ինչու կը լիշեցնէ քիչ մը: Իր

(*) Մեր հիմ մատենագիրներուն համար մեր բարեկրուն պատկերացումը կուզայ Ս. Դիրքին որ մատենուր ծողովուրդի մը պատմուրինը չէ անոնց աշխին, այլ կարելի մարդկութեան մը հանդիսաւածիլ: Անշուշտ այն ամենը որոնի զայրորդի և սարսափի կը հանեն մեր բոնիկացիրները, զոյ հին, են ամեն եղան, ամեն ժամանակի համար: Ասկայն կան շշանելու ուր մեծ այհեներու մնջումին տակ մարդիկ կը կորպնցնեն իրենց հոգեկան հաւասարակշռութիւնը ու կը հորդեն առները: Նեման ժամանակ մըն է մէջրդ դարը: Ճեւալիներուն սարսափներէն, Շահարասեան բոնուրիններէն վտարական մեր ծողովուրդը «իրեն երամ հաղածական» տարդնուած է արեւմտան Սնատոյու, Թրբական եւրոպա: Ու զահուրանիկն աշենը դեռ դողահար, կ'ընէ վերաբաղը դիմունուն ու . . . մեղֆերուն: Պոլսոյ մէջ անիկա այդ դարուն եւկրորդ կիսուն ձեռք է ձագծ բաղդասական ապահովութիւն: Իր ճարապիկ ձեռքերը հացը կը նարեն զոնէ: Ու անա ծայր կուտայ հոգեկան կործանումը, երկար ատեն զայռուած դրուեան մը իրեւ հակաղեցուրիւն: Երևմիա այդ վիճակին նկարազիրը կ'ընէ ու կը հասկցուի թէ այդ վիճակը հեռուի պատմում մը, բուդրի վրկայութիւն մը չէ անոր համար, այլ ամրող ցուրիւն մը ուրիշ իր մասը ունի Ապրօ Զէլէպիէն սկսեալ մինչեւ յետին Տերէրը, մեծերու դասին: Ու պարաւը ինքնարեւարար կը վերածուի մարզակական բոնին:

ոտանաւորները հաւանաբար կշիռ մը ունեին բարձր գասուն մէջ ուր նանրամտութիւնը չէ պակսիր որ և է ատեն։ Վարդամ վարդապետի մը խնդրանքով կը դրուի Պատմութիւն Սամազօլյն։ Ապրօ Զելեպին իր ընտանեկան դիւցազներպութիւնը կը հատապնդէ զրի կապել, երբ առջին ձգած խելացի նոտարը, երեմիան, թուրք բանակներուն ետեւէն իր հարամիտ կարողութիւնները կը գործածէ արշաւանքներու ամրող եղերթականութիւնը վերածելու համար կործանած կղզիէ մը . . . եկեղեցի մը շահելու բանակին իր ցեղակից բանւորներուն։ Երեմիայի ուղերձները ընդհանրապէս ծնունդ են օրուան պահանջներուն, ու կը նմանին ժթ՛րդ գարու մեր ընտանի քնարերգութեան նմոյն ներուն որոնք մեր բանաստեղծներուն վարկը կը վիրաւորեն այսօր այնքան, երբ կը կարդանք օրինակի մը համար Մ. Պէջիկթաշլեանը որ այս ինչ արբային տարեգարձին ասթիւ հարիւրաւոր տող ոտանաւոր կը թխմէ։ Երեմիայի ողբերը կը հպատակին նոյն ոգիին, մարդուն մէջ թաքուն փառասիրութեանց շահագործումին։ Անիկա ոչ միայն անհրաժեշտութիւն մըն է մարդկային նանրամտութեան գոհացման տեսակէտէն, այլ բաժակի հաճելի ընկեր մը թերես այս է պատճառը որ Երեմիայի ածխարհը ըլլայ ամենէն ընդարձակը մեր հին մատենագրութեամբ մէզի հասածներէն։ Մի մոռնաք որ աշխարհական մըն է ան ու ատով իսկ ինքզինքը զիտէ ագատ պատկերացումներու որոնք պիտի նեղէին մեզ օրինակի մը համար Օձնեցիի մը, Շնորհալիի մը զրչին տակ։ Երեմիան Խրիմ է, անշուշտ կրօնական առաքելութեան մը իրբեւ հետեւորգ։ Օրագրութիւնը հատուած մը ունի նկարագրականէ մը որուն մէջ Երեմիա կը պատմէ ուխտագնացութիւն մը կուսանաց վանք մը։ Կոյն, շարժում, բացատրութիւն, զգացումներ, կիրք, ամէն բան կայ Երեք էջին մէջ, ժամանակակից զրագէտի մը նախանձը չարժող իրականութեամբ մը։ Բայց այդ չէ որ պիտի ըսէի, Երեմիա կատղած է որ յիսունի մօտ աղջիկներու պարը գարող նուագածու մը այնքան մօտիկն է անսոնց ու կը վայելէ, «լլբանայ ի տեսութիւն զուարբազունեղ գեղեցկութեանց մատաղաւնին տիոց, որպէս աղուաւ ընդ վարդենիք»։ Այս մարդուն, այս տնելերին (իրն է բառը) հանգէպ տեսէք թէ

ինչ զգացումներ ունի. «Ուր եր թէ իշխանութիւն կալեալ էի զարիւն տնելերին արժանի յերկիր ի նոյն տեղին բափեի»։ Ասիկա ինքնինքը պատկերելն է ահա, անվերածելի իրականութեամբ։ Դրական առաջնակարգ թէ քնիկով մը գործադրուած այդ նկարագրութիւնը ոչ միայն չքեզ նմոյշ մըն է մեր լիզուին ընդունակութիւններէն(*) այլ նոյն

(*) Սովորութիւն կ դատապարտութեան խօսելու միայն արտասանել մեր մէջ այն գրողներուն որոնք կանոնաւոր ներականութեան մը չեն ենթարկեալ իրենց լեզուն։ Վիճակացիները անհերթութիւն անդեմքին իրենց անդուն անդուն է բարեկան է կիրառութիւն կայ արդիքը. Արդ, լեզուն զործիք մըն է, Կ'ընդունիմ թէ փաստ մըն է, մշակորք մը, նոյն ատեն, բայց ի վերցոյ զործիք մը։ Գրականութեան մը արդեքը, ներփին արդեքը իր շէ-ըն-է-ըին նիշեարով։ Արդ, լեզուն զործիք մըն է, Կ'ընդունիմ թէ փաստ մըն է, մշակորք մը, նոյն ատեն, բայց ի վերցոյ զործիք մը։ Գրականութեան մը արդեքը, ներփին արդեքը իր շէ-ըն-է-ըին է ոչ թէ այդ նիշերը ձևարդող զործիքը։ Ուեր կը հանդիպահութիւնը մարդու որոնք իրենց լեզուական կ'ընենքին նիշեարութիւն կայ արդեքի մըն է ան ու ատով իսկ ինքզինքը զիտէ ագատ պատկերացումներու որոնք պիտի նեղէին մեզ օրինակի մը համար Օձնեցիի մը, Շնորհալիի մը զրչին տակ։ Երեմիան Խրիմ է, անշուշտ կրօնական առաքելութեան մը իրբեւ հետեւորգ։ Օրագրութիւնը հատուած մը ունի նկարագրականէ մը որուն մէջ Երեմիա կը պատմէ ուխտագնացութիւն մը կուսանաց վանք մը։ Կոյն, շարժում, բացատրութիւն, զգացումներ, կիրք, ամէն բան կայ Երեք էջին մէջ, ժամանակակից զրագէտի մը նախանձը չարժող իրականութեամբ մը։ Բայց այդ չէ որ պիտի ըսէի, Երեմիա կատղած է որ յիսունի մօտ աղջիկներու պարը գարող նուագածու մը այնքան մօտիկն է անսոնց ու կը վայելէ, «լլբանայ ի տեսութիւն զուարբազունեղ գեղեցկութեանց մատաղաւնին տիոց, որպէս աղուաւ ընդ վարդենիք»։ Այս մարդուն, այս տնելերին (իրն է բառը) հանգէպ տեսէք թէ

առաջն Երեմիան է ամբողջուրեամբ. այսինքն մէկը այն տարօրինակ մարդոցմէն որոնք արևմտահայ զբականութեան վաթառն, եօթանասուն տարիներու ընթացքին եղան հրաշալի ընդունարասները, ռամանները ու սրբազն բառ մը գործածելով, ձեի, զոյնի, զգացման գեղեցկայարդար համապրութեանց. Դուրեան, Մեծարենց, Զրաքեան: Յանդգնութիւն, պոլսական տարփալից^(*) հոգեբանութիւն մը հաստատելու փորձը Երեմիայի մէջ: — Թերեւս: Ինձի համար կառկածէ գուրս է սա ածուլ, տարփաւոր, հանոյապատ, տրում, զգայամոլ, յանդուզն, քափառիկ, անյապուրդ նկարագիրը մարդուն: Անցուշտ այդ բառերը ընդհանուր են բաւական որպէսզի պատշաճին մեր առ ու ան գրողին: Բայց կուգան նորէն այս ժողովուրդին անդրագոյն գարերէն: Խորհածունիք թէ ինչ ընկերութեան կը պատկանի այդ մարդը: Տեղը չէ հոս մանրամասն վերլուծման ենթարկել մեր ժիշտ զարը: Բաւէ յիշագրել միայն որ այդ հասարակութիւնը մեծ աղէտներէ խուճապահար մարդոց ամբոխ մըն է որ զլուխը սեղմելու անկիւն մը հազիւ ճարած, կ'անդրագառնայ իր վրայ գործադրուած անողորմ պատգամներու և ներքնապէս կ'ըմբռուտանայ իրեն սորվածին ու իրեն իրը ճշմարտութիւն մատուցուածին գէմ: Յրագրուրիմեր ունի սարսապղե-

ցիկ էջեր այդ հոգեբանութիւնը արտայայտող: Մինակ Տէրտէրի տղայ մը ըլլալուն չէ որ կը խորանարդէ այդ դասակարգին հանդէպ գործադրուած ճիւաղային արարքներուն տարողութիւնը: Իրական են այդ մարդերը սրոնք տէրտէր կը ծեծեն, զանոնք կը պառկեցնեն ժամերու բակին, անոնց ոտքերը կը պայտին, պատրիարք մը բանաւ կը նետեն ու թոյնով կ'ըսպաննեն: Մինոյն բաները, այդ գարէն, կը պատմէ ուրիշ մը Լեհասատանցի Սիմէն դպիրը իր Ռլեզգրութեան մէջ: Իր գարուն մեծ հարցերուն հաղորդ է ամէն մարդ: Գրակէտը այն է որ այդ հարցերը պատմած է իր դարէն վերջ ալ շահեկան հրապոյրով մը, ինքնութիւնը պահող ու մեղ գոն ձգող:

Թող կանչուի Երեմիա ողբալու կաթողիկոս մը, բնութեան մեծ աղէտ մը, նահատակութիւն մը, անիկա պիտի ընէ այդ պարտքը բացարձակ հարազատութեամբ նախ նիւթին յետոյ ինքը իրեն ու պիտի գտնէ շեշտը, ոգին, ջերմութիւնը, երանգը որոնցմով մեր անձնականութիւնը կ'անցնի մեզու գուրսին, հեռուին: Մեր բառերուն մէջէն ստուերի մը նման որ կեանք ունենար: Գիտէ՞ք թէ քնարերգակ բանաստեղծի մը սահմանը կայ սա կարճ տարազին ետին:

Յ. ՕՇԱԿԱՆ

(Հարուսակէլ)



Յորժամ կամենայ ո՛ք սիրուն վարդ բաղել, Պիտի փուզ զանուսն ի յարիւն տաղախել, Միտք ա՛ծ զերմանացան՝ ո՛րքան համբերել, Մինչեւ զայ ժամանակ որ պիտի հնձել:

Ամենայնի շափ կայ եւ ժամանակ կայ, Թէ առաւոսն ենուս եւ իրիկունն կայ, Զերեկս քէ յես ձրգեա՛ եւ առաւոսն կայ, Մինչեւ որ ենզ բարի ժամանակըն գայ:

ԵՐԵՄԻԱ. ԶԵԼԷՊԻ

Ճշգրտապաշտ ուղղափառութեամբ: Ինչ վոյր ուրեմն իր մեղերը, երբ հակառակ ատենց, ամիկա զաղսնիք ունի զիս գրակելու: Դժուար պիտի զտնիք իւրաքանչիւր նախադասութեան տակ ապրումին վիշտութիւնը: Չեմ խօսիր ինս ու ինն պրոպանդող բեանութեան որոնք օրհենին կը ձեւեմ մեր զիխուն երբ կիս դար գրիչ շարժեկ վեց չեմ յաջողիր կենցանի էջ մը ստրագրել, Քերականները պիտի սփոփուին, իրենց դժբախտութեանը փասը ոչ թէ տարածելով, փուկով, այլ լուելով, դիտելով ուրիշները որոնի գեշ սղէկ հարուսակէլ: Չեմ հանդուժած գրել չկրցող նենայատորիւնը: Կը մնանք անսարեր գրել սորվեցնել ձգտող պատուելիուրեան առջեւ:

(*) Ինչ մեծ տարեկուրիւն արեւելահայ սիրային թարեկուրեան եւ արեւմտահայ պոլսահայ սիրեկուրեանց մէջտեղը: Կ'արժէ կենալ ու խորհրդածել:

ԴՐԱԽ-ՕՍԵԿԱՆ

ԱՌԱԳԱՍՏՆԵՐ

Ա. ԽԱՌԱՋԱԿԱՆԱԿ

Դէմք մը յետ պատերազմնան սերունդի այն գրողներէն, որոնք կարծեն զամանաթեամբ գրիչ կը չարժեն, իրենց յօյսերուն աւերակները և շախչախուած երազներուն մախրակոյսերը ուրուանիարելու մասնագութիւնը վերածելով կարգախոսի:

Ցե պատեազմնան սերունդի: — Բառ մը չէ անիկա, հասարակ կամ վոեմ իմաստներու յայտարար: Անիկա զինն է անհուն գրկանքի: Ի՞ր հոգէն հեռու, ուսար հոսանքներու առջև ինքինք ըըռնելու ուժէն իսկ պարզուած է երբեմն: Բայց որ ձգնեցաւ ստեղծագործել, առանց իրենց ամրոգնութեամբ մէջ անհնարինուած հայ հոգեբանութիւնը, հայ աւանդութիւնները, հայ հոգին: Մեծ Պատերազմի սաբամիներէն խելակըրոյս այս աժդայի սերունդը, չգաղրեցաւ սակայն ընկերու իր կարելին: Եթէ գուրս ինկաւ հաւաքական հայ հոգիի ընջանակն, եթէ չկըցաւ զրական մէջ կախուանալ արելուածք, եթէ չկըցաւ բիւրդագոյննել իր պատերուն մեծ ձգութեամբ, կըցաւ գոնէ ընկել ճիզզ ատար: ու ասիկա քիչ է իրեն համար:

Այսոր հայ զրականութիւնը, և մասնաւորելով՝ Հայ թանաստեղծութիւնը կը մշակուի երեք մեծ կեղարմաներու մէջ, ատոնք նն. — ա — Մայր Հայրենիք՝ որոն ուղղութիւնը ծանօթ է մեզ, բ — Տարի և Ամերիկա ուր տիրապետող են դարձած միջազգային վիճելի ախորժակները յեղաշրջուած զասակարդի մը, և զ — Նեղպատու և Սիւրիս, որոնց մէջ մշակուած բանաստեղծութիւնը կուտայ յաղթուած ժողովուրդի մը հոգեբանահութեան տախուակները առաւել չափով:

Մայր Հայրենիքի անտարբերութիւնը՝ գաղթախարհի հայ զրական շարժումին հանդէպ, զուրս է մեր հետաքրքրութենէն: Սիիւռքի մէջ սակայն, միջակութեանց հոծ փաղանդին մօտ, ուրատապետիչ է հաստատի մէկէ աւելի քանը քարաւորներ որոնք էին յամառին բարձր պահել վարկէլ բանաստեղծութեան: Ա. Ծառուկեան կրնայ տեղ բանել այդ քիչերուն քով:

Ան կուգայ Սիւրիայէն, ուր անշուշտ հասակ չէ առաջ զրական սերունդ մը, բայց ուր ունինք անուններ ու գործեր որոնց մէջ խանդակառութեամբ կարելի է մատնանշել զրական որոշ տարողութիւն և հաշակ վահեկ վահեկան իր Ալբելլանքով, Մ. Էշխան իր հուռներու երգը և Կըրակը ըստ կը դառնան զէմք՝ Սիւրիայէն մեզ եկաղ շատ մը գործերու մէջ: Ա. Ծառուկեան երրորդն է ասոնց զիծին: Ան ունի առնուազն բանաստեղծամբ: իր ստանաւորները կը կարդա-

ցուին համբերութեամբ (չեմ ըսեր հաճայքով), վասնդի անոնք գրուած ըլլալու համար չէ որ գրուած են, այլ բան մը կ'ուզեն ըսել աշխարհին, մաս մը կը ճնին բանալ իր մախու ու ոսկորին հիւսուած տառապանքէն: Կը կարզա՞ւ ու կը զգա հոսումը իր տողերուն մէջէն բանի մը, որ ձեռք չի բերով, հսկութառութեամբ, քրտինքով ճարտարապետուած կառուցումներով: Այդ բանը՝ զոր գժուար է տարագել: բանաստեղծի իր խառնուածքն է: իրին այդ անշուշտ պիտի չկրնանք զայն զնել քովիկը Զարիֆիեանի մը կամ Սիւրմէկիանի մը՝ (Դուրեկանի, Մեծարենցի կամ Տէրեանի մերձեցումը չատ պիտի գար իրեն) որոնք ամրողութեամբ տիրապետութեան տակն են բանաստեղծի իրենց խառնուածքն և իրենց զործը արժէքի կը բարձրանայ իրին այդ միայն, անոնց զործին մէջ անմեկնելի բանաստեղծականութենէ զատ ուրիշ ոչինչ կայ աշքառու Ա. Ծառուկեանի մօտ այդ երակը ներշնչման, ընդմիջուած է երբեմն հսկութառութեամբ, տաղաչափական կանոններու խիստ կիրարկումով, կոկիկ և մաքուր լեզուով զիելու մտահոգութեամբ, և այդ պատճառաւ աղքատացած ու փաքքացած:

«Ալապասները իրեն արուեստի զործ ունի իր վիրապոր կողմերը: Ատոմ եարձանեանի յատուկ հսկութական չունչ մը իր տողերէն կուզայ մերթ ռազմական հնչականութեան տակ թաղել բանաստեղծական մերթ ու հանգարա զնացքն ու երաժշտականութիւնը, Փօքր է իր երեակայութիւնը ու տակր իր թելազրելու ուժը: Իր բանաստեղծութիւններուն կը պակսի անհրաժեշտ տարրը՝ կառուցուածքը: Գեղեցիկ տողեր կարօտի հայրենարագձութեան, լքումի և որրութեան, ընդլիումի և զջումնի, իրար հրելով տեղ կը բանեն իր քերթուածին մէջ, ու երբ կը կարգաս այսոնք, հոգիի մէջ կը մնայ պարապ մը, վասնդի չես կրնար գտնել այն նպատակը որուն համար կառուցուած են տողերը, այն հոգին որմէ կը մեկնին և որուն կ'երթան սակայն տողերն ու մտածումները: Այս թերութիւնը զժքախտարար մեղքն է իր սերունդի բալոր զրողներուն: Բիւզանդ թօփալեանի և Գլըճեանի նման քիչեր միայն պիտի փորձն աղատուիլ անկէ, և քիչ անգամ միայն պիտի յաջողին:

Ծառուկեանին խսասած է նաև երկարաշունչ տանաւորներ գրելու իր ճիզզը. բանաստեղծ է իր պղտիկ հոգին տուններու երկար շարքերու վրայ: Իր գործը աւելի լեցուն և աւելի դynamique պիտի դառնար երբ փորձէր աւելի կարճ տունաշարքերու մէջ խտացնել իր գեղումները:

Այս թերութիւններուն զիմաց ունի առաքելութիւններ որոնք սիրելի կը զարձնեն իր զէմք. քը մեղի: Հսկութիւնին քայլ կայ զգայուն սիրու մը չափ կը զնել աւելորդ ձայնարձակութեանց ու պարկետութեամբ և անկելծութեամբ կը մօտենայ իր էութեան, զայն զնելու համար աշխարհէն աքացուած, աշխարհէն լքուած, աշխարհէն որբացած՝ ուրիշի մը զիմաց: Ունի իր տողերուն մէջ ջերմութիւնը հաղորդականութեան որ զինք կը բանայ մարդոց: Ու այս զգայնութիւնն ու

հաղորդականութիւնը կը ծորեն իր տողերուն ու բոլ չերմօւթիւն, յատկանչական բարիք. քերթուածէ մը սպասելի զերագոյն առաքինութիւն, — մարդկայնութիւնը, որ չըլլայ խղղուած բառերուն սնութի պերճանքին մէջ:

Մաքուր է իր լեզուն, ճշգրիտ ու կոկիկ: Մեր բանաստեղծներէն Սիամանթոյի և Վարուժանի աղղեցութիւնը իրը խորքի իրողութիւն կ'երկարաձգուի իր մօտ:

Զարնուած սերունդի մը դժբախտ այս երգիշ ունի իր տեղը մեր օրերու վաւերական բանաստեղծներու շարքին. և աւելի սիրելի թերեա, վասնդի ան կրցած է առնել իր մէջ ամբողջ սերունդի մը հոգին, ու իր նսին վրայ թառող պըզտիկ սէրերէն վեր, ան ջանացած է թելազըն մանաւանդ խաբուած, պարտուած հոգին ևս այդ սերունդին: Ահա պատառիկ մը խսոսովանութեան:

Այլ սրբեներս անուը ու բազուկներս վիտիս
Անգույքեամբն իրենց խուլ կր զալարուին անդարդում:

Բայց ան ունի քաջութիւնը մտնելու այդ դժոխքին մէջ, անկէ երգեր մեզ բերելու: Մեծ աղէտէն ետք, զալարուող սերունդին հաւասարիմ բանաստեղծն է ինք: Կը համարձակիմ ընել այս շատ յանզուզն մատնանշումը իր մասին, վասնդի իր սերունդի բանաստեղծներէն ոչ ոք այսքան իրաւ կրցած է թարգմանը ըլլալ զանդուածի մը հոգերանութեան. բացի թիւզանդ թօփալեանէն որ մեծ քաղաքներու հեքոտ կեանքն ու տառապանքի զինով հայուն այս հոգին վրայ ապրի կարենալու հիգն է որ երգած է յաջողապէս: Մառուկեան իր կալի ՏՏՈՒ եզ տիտղոսուած առաջին ոտանաւորին մէջ զեղեցիկ կերպով զրած է արդէն իրողութիւնը.

Հայրենազնութիւն իմ ընկեր, ախորի խոնջ իմ եղբար, Այս զալիսար երգերուն մէջ վինու ցո՛լին օւերուդ. Գաւումանար երազիր վինու մարմինն ովկնուր, Փինու հոգիդ՝ պայխարի մէջ իր բախտին դէմ անզուր...

Հայրենիքիդ դուն վինուէ լոկ խենք կարօ՞ք այնտեղ:

Փինու խարուած Հայ Տրդուն նաւատիր բերդն սկեսակ:

Իր երգած հոգին՝ Հայու հոգին, ահաւոր է Գնիլիքն և աթայութեան չափ, զոր սպասելու համար Հայ Միլտոն մը պէտք է զայ մեզ:

«Առագաստներ» հասորը իրը յաջողած գործ մը չէ որ կուզայ մեզ. բայց ինչ որ կը բերէ անիկա, սիրելի է ու կը զրուի որոշ արժեքի մը վրայ:

Կը սիրենք տեսնել իր երկրորդ հասորը նոյնքան և թերես աւելի յաջող երգերու փունջ մը իրու:

Ա. ԽԵՆՏՈՒՄ

ԵՐԿՈՒՆԱԳՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԴԱՐՄ ՄՔ

Ս. ՀԵՂԻՆԷԿԻ ՄԱՏՈՒՐ

Ս. Յարութեան Տաճարը ընտանի տեսարան մը կը պարզէ Արեմտեան Եւրոպայի զրօսաշրջիկին, որ Սաղիմական Հին Քաղաքի ներկայ ձմբան սակաւաթիւ այցելուներէն մին եղած է: Տաճարին ճակատը պաշտպանելու համար շինուած պողպատեայ յաղթամարմին նեցուկը, մութ արջնագոյն լաստակներու անտառը՝ որուն ետեւ Բոլորակին ու Քաթոլիկոնին ճարտարապետութիւնը ծածկուած է՝ ոչ մէկ զարմանք պիտի պատճառէ անոր տեսողութեան, որ օգային յարձակման գէմ զգոյշ կենալու վարդուած է: Անիկա շատ աւելի պիտի զարմանայ հաւանաբար երբ իմանայ որ օգային յարձակմանց գէմ զգուշութիւնը նելու հարց չկայ, այլ տեսնուածները ձեռք առնուած առժամենայ միջոցներ են միայն արդիւկու համար Տաճարին կործանումը, մինչեւ որ հասնի ժամանակը անոր ամբողջական վերանորոգութեան:

Վաղուց արդէն Հարվէլի գրութիւններով ծրագրուած էր այս վերանորոգութեան գործը, ամենէն նշանակալից երեսը Միջերկրականեան երկիրներու մշակոյթին: Այժմ աւելի քան երբեք անորոշ է այդ աշխատանքին ձեռնարկելու թուականը: Բայտ այսմ ամենաբարեբաստիկ պէտք է համարիլ այն իրողութիւնը որ այդ ամբողջական ծրագրին ամենէն կարեսը մասերէն մին ներկայիս կը գործադրուի արդէն հանդարտօրէն. ասիկա նորոգութիւնն է Ս. Հեղինէկի Մատրան որ ամենապատկառելի մէկ շէնքն է ճիւզաւութեալ այն կառոյցին, որուն շինութիւնը երկու հազար տարի տևեց:

(*) Ի Ս. Յարութիւն մեր ազգային սեպանկանութիւնը եղող Օ. Լուսաւորչի եկեղեցին օսար կ'անուանն Օ. Ճեղինէկի մատու:

Անու մասին տոյն զրուածքը, հրատարակուած տեղուոյ օրաբերերէն՝ the Palestine Postի 31 Դեկտեմբեր 1939ի թիվն մէջ (Vol. XVi, № 4144, էջ 6). տանեկան կը համարիմ բարձմանաբար ներկայացնել հնա:

ՀԱՅՈՑ ԲԵՐԱԾ ՆՊԱՍՏՔ

Սիւներու բաւիղի մը և միջանցքներու մթութեան մէջէն անցնելով առխորիխափ, այցելուն կը նշմարէ լոյս մը որ պայծառաօրէն կը շողայ խորութիւններէն, ցուցնելով լայն աստիճան մը որ Կ'իջնէ դէպի Մատուցը, ուր ցերեկի լոյսը լայն ճառագույթի ներով ներս կը հօսի գմբէթին պատահանչնէն: Ոյն որ կը չիշէ այս հնագործեան կէս-պետայարդ կեղործական չէնքը իր խուար ներքինով, իր զաղբատեսիլ բռածեփ պատերով և գարերու փոշիով թաթառուն իր պատուհաններավ, իրկնապէս ոյիտի հմայուի այսօր զաժան զեղեցկութեամբը այն բաց տարածութեան, որուն բոլոր աւելորդութիւնները սրբուած են:

Պատերը, իրենց ծեփերէն մերկացած, հնամենի բիրու քարաշէն որմածն է որ իր ցուցադրին: Կամարներն ու գմբէթը, զայնառ գոյնով բռուած, նկարագեղ հայապատճեր մը շինած են զիրենք վեր բռնող միակուուր մութ քարէ սիւներուն հետ: Հոյակատ խոյակները, որոնք մնացորդներն են Ադրիանոսի Այնըլա Կասպիտուլիներին, Խընամքով մաքրուած են: Ասանք հինաւուրց չքիշութեան երանդ մը կ'աւելցնեն Քիւստոնէական նախնի այդ սրբավայրին խռութեան վրայ: Խաչակրական երկու սեղուններ, երկար ժամանակէ ի վեր մոսցուած, ի յայտ բերուած են կողակին մէջ: Գետնի կոշտ ու տծեւ քարերը փոխանակուած են լայն սալաքարերով: Մատուցին յատակը կազմող ժայռին մէջ գտնուած են երեք խորունի նկողուններ, որոնք իրենցմով զբաղած կը պահեն հնախօսները: Սանդուխին երկու կողմերու քարապատ խորշերը բացուած են ու իրենց սկզբնական վիճակին վերադառնուած: Կեցած Ա. Հեղինէի մատրան մէջ, մարդ անգամ մ'եւս կը գիտակցի թէ կը զտուի Կոստանդիանոսի Պաղիլիքային պատիրէն ներս ու Խաչակիր թագաւորներու ձեռակերտ գմբէթի մը ներքեւ:

Ա. Հեղինէի Մատրան վերանորոգութիւնը Հայոց Պատրիարքարանին կողմէ յանձնուած էր ճարտարապետ Քիվորտ Հումակի (F. R. I. B. A. M. T. R. I.), որ Հնագիտական Վարչութեան տուած ուղղութեամբ՝ գործը ի գլուխ հանեց Վիէննացի:

Ճարտարապետ Օթթօ Հօֆմանի ձեռքով: Ներկայիս Մատուցին ներքինը կը ցոլացնէ զանազանութիւնը սեպհականութեան կէս-կրօնական և կէս-իրաւական պահանջքներու, որոնք գժուարութեանց պատճառ եղած են յաճախ: Կամարին այն մասը որ Փրանչիսկեանց Գիւտ Խաչի այրին մուտքին վրայ կը տարածուի և որ նմանապէս այս վիրջններուն կը պատկանի, մնացած է անհպելի: Կէպի այրը իջնող աստիճանին տուածին սանզզարատը միայն նորոգուած է ու այդ ալ հայոց սեպհական է: Յած պատին հայոց քարերը որոշապէս կը զանազանուին Փրանչիսկեաններու հին քարերէն: Փայլուն քարէ տապանակածն երկու սեղաններ, իջմիածնի ոճով, Օթթօ Հօֆմանի կողմէ ուրագծուած, պիտի շինուած ըլլան ու օծուին հայկական Ա. Ծննդեան տօնակատարութեանց օրերուն: Այդ սեղանները կ'արտայայտեն հայկական պաշտամունքի այն ոգին որուն գարերէ ի վեր նուիրուած է Հռովմէացիններու, Բիւզանդացիններու և Փրանչներու կառուցած այս մատուաը:

«ԱՄԵՆԱԴԵՊԵՑԻԿ ԵԿԵՂԵՑԻՆ»

Աըր Խոնալտ Աթորս Ժամանակին Ա. Քաղաքի ամենազեղեցիկ Եկեղեցին կոչած է Հայկական Մայր Տաճարը, նկարազրելով զայն իր յախճապակիններուն և փայտեայ սոկեգրուագ քանդակիններուն չքեղութեանը մէջ: Այժմ հայերը նոյն աստիճանի երկրորդ սրբավայր մըն է որ կ'ունենան Ա. Հեղինէի Մատուուով: Հայ Հասարակութեան Պատրիարքարանը իրաւունք ունի ըսելու թէ մշակութային հարազատ արժէքով գործ մը կատարած է այս Մատրան նորոգութեամբը ու հայերն արդարե իրենք զիրենք հապրակրնան զգալու որ առաջինը կ'ըլլան իրենց նպաստը բերելու համար Ա. Յարութեան Տաճարի վերանորոգութեան ընդհանուր գործին:

Թ. Ֆ. Մ.

Թրգմ. Տ. Գ. Տ.

ՊԱՏՄՈՒԱԾՔ

ՄԱՆԿԱՆ ՄԸ ԵՐԱԶԸ ԱՍՏՂԻ ՄԸ ՎՐԱՅ

Կար ու չկար տղեկ մը կար, որ շատ կը չը-ջազայէր, ու կը խորհիք շատ մը բաներու վրայ, Քոյր մը ունէր որ նոյնպէս մանուկ մըն էր, և իր մայուն ընկերը Անոնք կ'սքանչանային ծաղիկներու գեղեցկութեան, կ'սքանչանային երկնքի բարձրութեան և կապուառութեան, կ'սքանչանային ջուրերու խորութեան, կ'սքանչանային Աստուծոյ կարողութեան և բարութեան, որ զանոնք ստեղծած էր այնքան սիրուն:

Երբեմն իրարու կ'ըսէին, հնիմազրելով որ բոլոր մանուկները երկրի վրայ մեռնէին, ծաղիկները, ջուրը, և երկինքը պիտի տիրէին: Անոնք կը հաւատային թէ պիտի տիրէին: Վասնվի, կ'ըսէին անոնք, բոլորները ծաղիկներու մանուկներ են, և փոքրիկ խաղասէր վտակները որոնք ցատկատելով վար կ'իջնեն բլրակոլերէն, ջուրին զաւակներն են, և ամենափոքրիկ փալփրուն չողերն իսկ, որոնք պահութառութ կը խաղան ամբողջ գիշեր, անշուշտ մանուկներն են աստղերուն, և անոնք բոլորն ալ պիտի վշտանային եթէ տեսնէին թէ իրենց խաղընկերները, մարդոց մանուկները ոչ ևս են:

Միակ շողշողուն ու ջինչ աստղ մը կար որ կուգար և կ'երեւէր երկնքի մէջ միւս բոլորէն առաջ, եկեղեցոյ սրածայր զանգակատան ծայրին մօտիկ, զամբարաններուն վերի: Անոնք կը խորհիկն որ այդ աստղը աւելի մեծ և աւելի գեղեցիկ էր, քան բոլոր միւսները. և ամէն գիշեր կ'սպասէին զիտելու զայն ձեռք ձեռքի զանգնած պատուհանի մը մէջ: Ով որ առ առաջին անզամ նշմարէր զայն կը զոչէր «Կը տեսնեմ աստղը»: Եւ յետոյ երկուքը միասին կ'ազգազակէին, շատ լաւ գիտալով թէ երբ պիտի ելլեր ան և ուրատեղ: Այնպէս որ անոնք կամաց կամաց այնքան բարեկամացան անոր որ անկողին մտնէլէ առաջ միշտ զուրու կը նայէին անզամ մը զիշեր բարի ըսելու համար անոր, ու երբ զանային քնանաւու կ'ըսէին «Աստուծած օրնէ իմ եղբայրը և Աստղը»:

Բայց մինչ նա մանկունակ էր տակաւին, ո՞հ շատ մանկատի քոյրը թառամեցաւ և ընկճուեցաւ տակաւ առ տակաւ այնքան որ անկարող էր աւելի երկար կինալ պատուհանին մէջ զիշերը, և առա տղեկը զուրու կը նայէր մելամալձիկ միսմինակ, և երբ ան տեսնէր աստղը կը դառնար և կ'ըսէր անկողնոյն վրայ զտնուող զալիակէմ հիւանդին «Աը տեսնեմ աստղը» և այդ պահուն ժպիտ մը կուզար երեսին վրայ և պղտիկ ծայրին մը կ'ըսէր «Աստուծած օրնէ իմ եղբայրը և Աստղը»:

Եւ այսպէս եկաւ ատեն, և ան ալ շատ շուտ, երբ տղեկը զուրու կը նայէր միսմինակ, և երբ զէմք մը չկար անկողնին վրայ, և երբ միայն հողակոյա մը կար հողակոյաերուն մէջ, որ առաջ հոն չէր, և երբ աստղը կ'երկարէ ճառագայթները ան կը տեսնէր զայն իր արցունքներուն մէջէն:

Հիմա այս ճառագայթները այնքան պայծառ էին, և կարծես թէ կը չինէին այնպիսի փալփրուն ճամբարայ մը երկրէն զէպի երկինք, որ երբ տղեկը գնաց իր մենաւոր անկողինը երազեց աստղին մասին. և կ'երազէր թէ այն տեղը ուր ինք պառկած էր կը տեսնէր մարդոց կարաւան մը, որոնք վեր կը տարուէին պապլուն պողոտային հրեշտակներու կողմէ, և աստղը բացուելով, կը ցուցնէր անոր մեծ աշխարհ մը լոյսի ուր շատ աւելի այսպէս հրեշտակներ կ'սպասէին զանոնք ընդունելու:

Բոլոր այս հրեշտակները որոնք կ'սպասէին, զարձուցին իրենց չոլարձակ աչքերը ժողովրդին վրայ, որոնք վեր կը տարուէին աստղին մէջ, ումանք զուրս եկան այն երկար շարքերէն որոնց մէջ որ կը կինային և ինկան մարդոց պարանոցներուն վրայ, և համբուրեցին զանոնք քնչքութեամբ և հեռացան անոնց հետ լոյսի պողոտաներէն վար, և այնքան ուրախ էին իրենց ընկերութեամբը որ իր անկողնին մէջ պառկած տղեկը կուլար ուրախութենէն:

Բայց կային բազմաթիւ հրեշտակներ որոնք անոնց հետ միասին չգացին և անոնցմէ մէկի ան ճանչցաւ: Հիւանդագին, զէմքը որ իրենի տարածուած էր անկողնին վրայ փառաւորուած էր և կը ճառագայթէր: Բայց իր սիրութ գտաւ քոյրը երկնքի բաղմաթեանց մէջ:

Քոյզ հրեշտակը կը տնտեսար աստղին մօւտքին մօար, և ըսաւ ժողովուրդը մինչեւ հոն բերող առաջնորդին:

«Եղբայրու եկած է».

Եւ ան ըսաւ «Ոչ»:

Նա յօւսալից ետ կը զառնար երբ որ տղեկը երկարեց իր բազուկները և աղաղակեց «Ո՛քոյր իմ, ես հոս եմ, առ տար զիս»: և ապա աղջիկը զարձուց իր շողշողուն աչքերը անոր վրայ: — Գիշեր էր, աստղը կը փայլէր սենեակին մէջ, յօրինելով երկար ճաճանչներ վար զէպի իրեն ինչպէս որ կը տեսնէր իր արցունքներուն մէջէն:

Այդ ժամէն սկսեալ մանուկը կը նայէր աստղին իրեկ այն տունը՝ ուր ան պիտի երթար երբ իր ժամանակը հասնէր, և խորհնեցաւ թէ ինք երկրին չէր պատկանէր միայն բայց աստղին ևս, վասնդի քրոջը հրեշտակը զացած էր առաջ:

Օր մը մանկիկ մը նաւ տղեկին եղբայրը ըւլալու համար, և մանկիկը այնչափ պղտիկ էր որ տակաւին բառ մը իսկ չէր խօսած, տարածեց իր մանրիկ կերպարանքը իր անկողնին վրայ և մեռաւ:

Տղեկը դարձեալ երազեց բացուած աստղը և հրեշտակներու ընկերութիւնը, և մարդերու կարաւանը, և հրեշտակներու զօրքերը իրենց շողափալը աչքերով բոլորն ալ դարձած այդ մարդերու զէմքերուն:

Տղեկին քրոջ հրեշտակը ըսաւ առաջնորդին «Եղբայրու եկած է»: Եւ ան ըսաւ «Ո՛չ այն մէկը բայց ուրիշ մը»: Երբ տղեկը տեսաւ իր եղբօր հրեշտակը քրոջ բազուկներուն մէջ, գոչեց ան: «Ո՛չ քոյր իմ ես հոս եմ առ տար զիս»: և նա զարձաւ և ժպտեցաւ անոր վրայ, — և աստղը

կը փայլէր : Տղեկը մեծցաւ երիտասարդ զարձաւ :
և կ'զբազէր իր զրքերով եթր ծերունի ուկասա-
ւոր մը եկաւ և ըստաւ, «Ո՞յցր ոչ ես էս, ես կը
ունիմ իր օրնութիւնն իր սիրուած զաւկին» :

Գարձեալ գիշերը սն տեսու աստղը, և այդ
ամբողջ Նախկին ընկերութիւնը Ըստ իր քառ
հրեշտակը սռաջնորդին էնդքայր նկած է, և
ան բար — ընացրց:

Անժաման ուժին աղաղակի մը արձակութեաւ անբարձ տառզերս մէջէն, վասնզի մայրը միացած էր իր երկու զաւակներուն. և անիկա ապրածեց իր բազուկը և գոչեց, օ՛հ, մայր իմ, քոյր իմ և նպաստիր իմ, հոս իմ ես, անէք տարեց զիս:

Առ անձնք պատաժեանեցին անոր, ո՞ի եւ ո՞չ
և ասացր կը փայլէր:

Սկզբուն ան և մարդ եղաւ, սրբն մասկերը
ոսխտակացնե և ան կը նստէք իր աթոռին վրայ
վասարանին նօտիկը ծանրացած վլատվի ու զեմ-
քը ցողուած արցունքներուն, եթի ասալլ ան-
գամ մը ես բացաւեցաւ.

Առաջ քրոջ հրեշտակը առաջնորդին «Խղբայս
եկած է»; Եւ ան ըստ «Ռ»՝ բայց իր կուր առ-
թարմ Անգլ. ԶԱՀԵՆ ԱԲԵԴԻԱ

չիկը»: Եւ մարզը որ նախապէս տղեկը եղած էր
ձևսաւ իր դռւտուր նոր կորսնցուցած իրեն հա-
մար երկնային էակ մը այդ երեքին մէջ, և ըստ
ան «Աղջկան զլաւիը քրոջն կուրծքին վրայ է և
իր բազուկը պլլուած մօրս պարանցին, և անոր
ոտքերուն երբամինի մանկիկը ես ինչպէս տոկամ
բաժնուելու անկէ, Օրնեեալ ըլլայ Աստուած» —
և աստոր կը փայլէր:

Այսպէս տղեկը ձերունի մարդ գարձաւ և
երբեմնի ողորդ զէմքը կնճռուեցաւ, և իր քայ-
լերը զողովոջ և տկար էին, և իր քամակը կո-
րացած: Գիշեր մը երը ան կը պառկէր իր ան-
կողնին վրայ, չուրջը իր մանուկները կեցած ան-
լացաւ ինչպէս լացած էր երկար ժամանակ ա-
ռաջ և կը տեսնեմ աստղը: Իբրարու փափացին
անհնք «կը մեռնի», և ան ըստ «Այս կը մեռ-
նիմ» Տարիքա Կիյանց ինձմէ նման զգեստի մը,
և ես առաջ կը շարքիմ զէպի աստղը տղեկի մը
պէս: Եւ ո՞հ հայր իմ, կը դռանամ քեզմէ որ
այն աստղը այնքան յաճախ բացաւ ընդունելու-
համար այն սիրելիները որոնք դիս կ'սպասեն:

Եւ աստղը կը փայլէք։ Եւ կը փայլի իր գերեզմանին վրայ։

• ԱՐԴԱՐԵՑՑԻ ԶՆԸՆԿԱՐԵԱՆ
ԲԵԿՈՐԸ ԶԻ ՄԻ ԻՆՉ ԿՈՐԻՑԵ

Խարսխին Հոգեւոր Հովհաննէ S. Խոսկիկ Վարդապետ
իր Ս. Պատշաճին առջև առնելու նոյնընթիւ 10 նամակուն, ի միջին այլոց, կը գրէ.

«Աշխարհի արյի նաղակական ու մատեսական ապագաները կ'եւեալիքը թէ որևան ճանորդն կը նետեն նաև Ս. Եքուոյ եկամտից և այլ կարելիութեան վրայ, որմ կը առաջի համայն մարդութիւնը ամենուեմ, և մասնաւոյ ուրազանի արքի վրայ արդի խօսք առած անաւուուր անաւուուր պատերազմին արհանդիւրք, ու կը պատրաստ հարակի ամբողջ աշխարհի վրայ, կը շատաց մարդոց յառաջիմեռու և աշխատեալ կարդութիւններու և եւանձը, մարդոց իշխանք վաղաւան անսակուցչեան և անսպասահութեան առջև դնենք»:

Թայրացին Արեւադր, ուր արդէն աւելի համ երկու
տարի առաջ ծայր տուած եւ Զինօսաբնական ամսէցը-
նախ պատերազմը, այժմ Խաչղանի աւելի պայծառ չէ,
այնու ու այնու կը գործանան շարունակական համ-
բարդութիւններ։ Մայիսին երբ Համինայ էի, և կողոյն
ազգայիններ զգացոցին ինձի Համինայի համար առան-
ձնի հագուստականի պէտքը։ վասնզի այսօր հեռաւոր Ա-
րեւելի Հայ զարդորին կարեւոր մէկ մասը հոն ծուարած
է աւելի համ 300 հոգք։ Կը պատահին յանախ ամսակի-
կայ դժբախտութիւններ, մանեւ, և ես չեմ կարոյ համա-
նակին հասնիր, վասնզի բաւական հեռու է։ Քանիշու-
մամ շամախը, խառապանուր ճամ ալ ծովոյ պիտի համ-
բարդեմ հոն հասնելու համար, և երեսն ալ երկու օ-
նուու պէտք է սպասել, որ անպատճութեանց առջև կը
դնէ զայք և ստիպուած կ'ըլլան Ռուսաց դիմել։ Այս կեր-
պայ մեր ծագմաւոր կը սպանի իր Եկեղեցին և կը յարի
Ռուսաց կամ Լատինաց, ինչ որ առաջի է։

Նաև կարող է լինել այսպիսի համարակալութեան:

պուած է ընորի Տիւր Հայկ Աստութեանի ազնի ու
ազգաւե հայոցի հրաբան և բարյական մեծ շահ-
եթան ու կրովի աշխատոքանց : Անձնի վարձու տան-
մը, որու մէկ մաս իր այօրաւան կը ծառայէ, իսկ
մասացած իր ակրոմք : Մեծ ու փաք միւս հով կը նա-
մախմառի ին, երիսաւարդներ ատէն օր, իսկ տարեցներ
զանապատ առիթենուի : Նանկայի մէջ սեպական մատու-
մը ունենաբ ընդհանուրին փափառն է, եւ առաջի կա-
զի խնդիրներն է, երկ նոր անակնակ դժբակալի նենե-
չան խանգարելի է, նանկայի Հայեր կազման են Բա-
րեզորական Միուրին մը, որու անդամագուած են ի-
վինակի եղոյ զաղութիք բրու անդամներ եւ կը վճա-
րեն իրեն անդամատուրք կանոնաւորապէ : Այս Միու-
րեան մշանչենական համազանն է Եղիշենի Տիւր Հայկ
Աստութեանը : Երաց այս յաւսողիչ վինակին մէջ ան-
համեծ կը դառնայ նուու կրօնականի միւս այ պէտք,
որովհի բաշայերէ անոնց ազգօքու ձեռնարկներ, ար-
ածածէ անոնց մէջ իր մը բարած ազգային ոգին եւ Հայ-
եկեղեցւոյ սէր ու բարեւար գեր անոնց կեանին մէջ :

Հօգեւորակն մը եւս ունենալը այս կազմելոր ունի
նաև այս անհրաժեշտութիւնը, որ դժբախութեան մը պա-
րագային, իրաւունքութեան կամ մասնաւն, իրաւու-
թեան կը փորան, փասնի մինչեւ Հնդիասանի կղզի-
ներ, որ 10-12 որուան նախապար է, Հայ կրօնական
գտնելոր դժուան է, իւ իմ նախորդ Խարայինի Տէր Եղիշե-
անաւան Առւաց ծեսով բարուած է Առւացու կղզին:
Թարմ է սակային տիտր իշտաւակը վերյիշեալ պարա-
գաներէն մէկնան: Մօս Եկլոյ ամիս առևաչ պախանակն է
ի Շանհիան յայտնի բասանիքի զաւակ Տիրաք Ժաքար Ժա-
նանանանը: Թարման չլրց Երբալ ջրախտարար վերյի-
շեալ պատճառներով, ինչ որ ինձի մեծ ցան մը պատճա-
ռեց Մաքի, պրովինցի յայտնի ազգայինի մը բաղման կազմ-
ուանեւու վիճակուելուն համար: Ի մօսոյ Երբ Շանհիան
Երբալ, այդ մասին հարկ Եղածը պիտի շանամ կարգ-
ութիւն տեղուոյն ազգայիններուն ևետ Տիրոց օգնութեամբ, իւ
պիտի տեխնիկագրեմ Տէր Բարձր Մրգանութեան»:

Ա. Էջմիածինի Երթօնակալի

Տ Ե Դ. Ա. Կ. Ա. 1.

Ա.ՄԵՐԱ.Ա.ԸՆ.ՀԱ.ՑՈ.Ց

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

№

4 Նոյեմբեր 1939 ամբ

Ս. ԷՇԽԱՍԻՆ

Նորին Ամենապատութեան Պատրիարքին

Առաքելական Արքուոյ Ս. Յակովիքեանց
յերուազիմ.

Սացել եմ Ամենապատութեանդ տարւոյ Յուլիս 25 րուրիկի ՀՀ 8791-30 պատուական գրութիւնը, որով հանել էիք հաւզորդել Մեզ Ս. Արքուոյ Ընծայարանի ընթացաւարտ վեց սարկաւազների կուսակրօն ժամանայ ձեռնադրուելու եւ աբեղայական կոչում սահանրու մասին։

Սեղծուած պայմաններում Սադիմայ վանքը միակ հաստատութիւնն է, որ Արքուոյ դպրեվանքի փակումից յետոյ՝ ի վիճակի և ընծայելու գաղութահայ եկեղեցւոն բարեկիրը, մասվարծ եւ հաւատով լի հոգեւորականներ, ժողովրդին՝ հարազա, ազգաւու ու հայրենաւոր զաւակներ եւ հայ գրականութեան՝ բեղուն եւ զիսուն գրիշներ։

Մազրում եմ կենասու Փրկչին, որ ընորհի Ձեզ առողջութիւն եւ արեւատութիւն բեղմնաւոր գործունեութեանդ եւս առաւել յաջողութեան համար։

Մազրում եմ Ամենաբարձրեալին, որ պարզեւէ Դպրոցիդ եւ Ընծայարանիդ լեկովարներին կար եւ զօր պատուի եւ յաջողութեամբ տանելու իրենց վրայ գրուած դժուարին, բայց բայց լուծք։

Ազրում եմ Փրկչին, որ իր հովանին եւ օրհնածիր Ազը տարածէ նորընծաների վրայ եւ օրհնէ նոցա, որ նոյն արժանաւոր սպասաւորներ լինին եկեղեցւոյ եւ դառնան անվեներ ու անձնադիր հովիւներ իրենց հօսին։ Այլ եւ ծառակ նոցա վերայ իր ընորհաբաւս նոզին, որպէս զի բացուի նոցա մտի առաջասար նանաշելու նումարիք, բարին ու գեղեցիկը եւ իրացնելու զայն կեանին մէջ։

Թո՛ղ օրհնէ Տեր նաեւ Սադիմայ Միաբանութիւնը, որ օր աւուր անի ու զօրանայ

ի սպաս եւ ի մսիբարութիւն Ազգի եւ Եկեղեցւոյ։

Յարգանաց եւ սիրոյ ողջունիւ։

ԳէՈՐԳ Ա.Ր.ԲԵՊԻՍԿՈՊՈՍ

Տեղակալ Ամենայն Հայոց Հայրապետութեան

(Կ Ն Ի Ք

ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵԿՈՐ ԽՈՐՃՐԴՈՅԱ)

№ 133

4 Նոյեմբեր 1939 ամբ

Ս. ԷՇԽԱՍԻՆ

Ա. ԵՐԵՎԱԴԻՋԻ Ամենապատի Պատրիարք

Գերաքնորհ Տ. Մեսրոպ Արեպիսկոպոս
Նշանեանին

Ամենապատի Մրգական եղբայր,

Տարւոյ Օգոստո 16 րուակիր ՀՀ 8904-27 գրութիւնը նոյնուկու սացել եմ, սակայն բաւական ուժ՝ Էջմիածնից բացակայելու անտեւանելով, որով պէտք է բացատրել նաեւ պատասխանի ուժացումը։ Առ այժմ լիքեալ գրութեան առաջին մասին վերաբերեալ նոր ասելիք չ'ունիմ, բայ այն որ հաղորդել է Ամերիկանայոց Նորընիք Առաջնորդը մեր գրութեանց գօրութեամբ։

Բարենորոշչական ծրագրի նկատմամբ Ձեր հաղորդաները հանուրեամբ կարդացի։ մեծապէս ընորհակալ պիտի լինիմ, երե հանիք լիքեալ հարցի նկատմամբ հանգուցեալ Տ. Թորգոն պատրիարքի «Սիոն»ի մէջ սպագրած ուսումնասիրութիւնը ուղարկել*։

Տարւոյ Յուլիսի 2-ին, չեմ լիւում ՀՀ 108 գրութեան հետ՝ թէ առանձին ծրարվ ուղարկել էի նաեւ մի անձնական նամակ** իմ բարոգրերիս եւ երածաւկան աշխատանքներիս սպագրութեան վերաբերեալ, ուրոնց պատասխանը չ'ունիմ։ Ենթագրելի է, որ նամակս Ձեր ձեռքը չէ նամել։ արակոյսիս լուսաբանութեան համար ընորհակալ պիտի լինեմ։

Յարգանաց եւ սիրոյ ողջունիւ։

ԳէՈՐԳ Ա.Ր.ԲԵՊԻՍԿՈՊՈՍ

Տեղակալ Ամենայն Հայոց Հայրապետութեան

(Կ Ն Ի Ք

ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵԿՈՐ ԽՈՐՃՐԴՈՅԱ)

* Դրկուեցան ասենին։

** Սոյն նամակը չէ սացուած։

No 140

15 XI 1939 amf

U. ԵՐԱՌԱՋԻՆ

Ս. Երանակի Ամենասատի Պատրիարք
Դեմուսորի S. Մեսրոպ Արքապա.
Նունիանին

Ամենայափակ Մաքուսի Եպոնի,

Տաճի կիթիկիոյ Խախոկ Ռ. Կարալիկոսի
բազմոն առքի հեռացրով խնդրել էի, որ
Խաչեկի Ա. Խենան Հայոց Հայրապետութեան
Ներկայացնեցիչը լինել, որի Խախոկ հեռա-
գրաւել է Խաչե Եկեղեցը: Եռուսակիմից հե-
ռազդական պատասխան ստոցնեցու քե-
միայն ամբողիեւէն եւ Թրանսներէն լիզութեան
կարելի է հեռացրել: Ազգի հեռացիքն ու-
սացել էր իմ կշիքներից պատօնական զո-
ծով բացակայեաւ հետեւանեավ, ուստի եւ
հեռացրի Եկեղեցելիք նախակի շոյիսի ծա-
ռայէր. բաւով նախառուեցու հաղորդա-
գել մեր ասելիքներն ու անելիքները՝ ուզա-
կելով նաև Եկեղեց հեռացիքները, որ կը դնեմ
ծրագիր ծոցում:

Մարքելով Ամենապատութեան եւ Միաբանութեան անդամներին արեւատուրին եւ հոգու անարութիւն մնամ

Եղբայրական սերու ռոջուցիւ

ՆԱԽԹԻ. — Ներփակուած հեռագիր
պարունակութիւնն է. — «Հանեցէք լինել
Մայր Աթոռի Ներխայացուցիչը Սահմակ Կա-
թողիկոսի թաղմանը, հեռագրուած է».

STUDY

ԳԵՐԱԿ ԱՐՔԱՊԵՏՈՎՈՒ

Ամեն . Ա . Պատրիարք Հայոց պատասխանեց որ թէև հեռազիբը չէ ստացած առենին , բայց առանց ասուր աէ ինքնարեցար կատարած եղաւ այդ պարտականութիւնը թէ՛ իրբեւ Ա . կշմիածին ձեռնադրուած Եպիսկոպոս , և այդու իսկ Միաբան Ա . կշմիածնի , և թէ՛ իրը երկու տարի անդ ապրած մէկը :

Ա. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԻԿԱՆ

ЧИВАЛЪЮРІКЪ ЧІРІВ ВІЛЬЯРІОЛЪ

ԱՆԴՐԻԱՆԻ ԱԿԱДЕՄԻ

ի սկիզբն 1940 տարւոյս, մեր վանական ընտանիքի անդամներուն թիւն է 120. Պատրիարք և հայփառապու՝ 2, Վարդապետք և Արքայք՝ 43, (որուց մէջ 9 հոգին արտասահման՝ զանազան պաշտօններու վրայ, իսկ 6 համը Պաղեստին՝ մեր թիւմերու մէջ). Սարգաւագունք՝ 4, Ժառանդաւորք՝ 34, Աւրարակիրք՝ 5, Աշխատաւոր Միաբանք՝ 17, Մայրապետք՝ 15, Ասոնցմէ զուրծ են Դիւանի Պաշտօնեայք՝ 6, Տպարանի աշխատաւորք՝ 6, զանազան այլ պաշտօնեայք՝ 8:

Ա. Աթոռս, ի Պաղեստին և յլլոնդրոդանան,
իր իրաւասութեան սահմաններուն մէջ, կը հու-
զմաւորէ և կը վարէ, բացի ժառանգաւորաց
վարժարանէն և Ընծայարանէն, 4 Նախակրթա-
րաններ իրենց Մանկապարտէզի բաժիններով,
և 2 Ծաղկոցներ, ընդամէնը չուրչ 1150 աշակեր-
տութեամբ, և 45 անձերէ բաղկացած ուսուց-
չական կազմով, բացի սոյն Նախակրթարաններու
մէջ Տեսչի և դաստիարակի պաշտօն վարող Վար-
դապետ հայրերէ:

U.S. GOVERNMENT

Ըստ Նախորդ տարիներու սովորութեան Ամառորի նախօրեակի երեկոյին Միաբանութիւնը ամբողջ իր կազմով կ'ելէ Պատրիարքարան, ուր Ամեն. Ո. Պատրիարք Հայրը, յիտ պատշաճ խորհրդաժութեանց և չնորհաւորութեանց կը բաշխէ ամենքին Ո. Աթոռոյս աւանդական կաղանդէքը — մէկական Օրացոյց : Նոյն երեկոյին Ժառ. Վարքարանի մէջ կը սարբուի կաղանդի գուարթ երեկոյիթ մը, որուն կը մասնակցէր նաև Ռւսուցիական Մարմինը:

Առաւտօնեան Ս. Պատարագէն անմիջապէս ետք ,
զոր կը մատուցանէ ժամօրհնող Տ. Գէորգ Վրդ., և
ըստ պատշաճի աւուրն կը քարոզէ Տ. Արտաւազդ
Արքեպիսկոպոս։ Միաբանութիւնը կը քարձրա-
նայ Պատրիարքարան։ Լուսազարդ Դահլիճը լի է
խուռն բազմութեամբ, որ եկած է չնորհաւորել
Ս. Պատրիարք Հայքը և Միաբանութիւնը, սկսող
նոր Տարւոյ սեմին։ Հոն է Միաբանութիւնը իր
ամբողջ կազմով, որուն մէջ տեղ բանած են նաև
երկու հիւր գէմքեր։ Հալէպիթ թեմին բարեջան
առաջնորդը, Դիեր, Տ. Արտաւազդ Արքեպոս։ Սիւր-
մէեան և նոր-Շուղայի Ամենափրկիեան վանքի
Դպրանոցի տեսուչ Տ. Թէոդորոս Տ. Վրդ. Խա-
կակեան։ Հոն են Ժառանգաւորաց ու Ա. Թարգ-
մանչաց վարժարաններուն անկերը իրենց զա-
տիարակներով։

Պատրիարքարանի Դահլիճին մէջ կը կատարուի առանձին պղտիկ հանդէս մը: Նախ կ'երգուի Ժառ, Վարքարանի երգչախումբէն՝ Ա. Պատրիարքարք Հօր ծօնուած երգը: Ապա՝ Ս. Աթոռու լուսարապես Գեր. Տ. Կիւրեղ Մ. Վրդ., յանուն Միաբանութեան կը չնորհաւորէ Որբազան Պատրիարք Հայրը: Ան իր ուղերձին մէջ չի մոռնար անդրադառնալ այն տիսուր զէպքերուն, որոնք ընթացք տուին անցնող տարույն մէջ, և անսնցմով իսկ կը բանայ շարքը այն յոյսերուն դրս Միաբանութիւնը կը սնուցանէ ներկայի չէմքին: Երբեք միթիթարական զէպք վեր կը հանէ նորին Ամենապատուութեան ընտրութիւնն ու գահակալութիւնը, ու կը թուէ այդ օրէն սկսած՝ անցնող Ծ ամիսներու ընթացքին՝ ձեռք բերուած յաջողութիւնները և կը մատունանչէ այն երջանիկ ապագան սրուն կը դիմէ Ս. Աթոռու իր կրօնական, վարչական և կրթական գործունէութեան ճամբուն վրայ: Այս գեղեցիկ յօյսերով ամբապնուած և ոգեսրուած՝ Գեր. Հայր Սուրբը յանուն Միաբանութեան կը մազթէ Հայաստանեայց Եկեղեցւոյ երջանիկ ապագայ, և Հայ Խոլովուրզին՝ իր սրբազան յօյսերուն իրականացումը, և Ամեն. Ս. Պատրիարք Հօր, Երկար և առողջ կեանք և արդիւնաբար գործունէութիւն, իր այնքան պատասխանատու պաշտօնին մէջ:

Լուսարարապետ Հօր այս ուղերձին ետք, ոտքի կ'ելէ թէողորոս Ծ. Վրդ., որ 50 տարի առաջուան և ներկայ Միաբանութեան բազզատականը ընելէ վերջ, ցոյց կուտայ այն վերիքք զոր կատարած է Միաբանութիւնը այնքան յաջողապէս: Ու այս գեղեցիկ գործունէութեան առջև խանդակառ՝ կը չնորհաւորէ իր կարգին ամբողջ Միաբանութիւնը իր Պետին մէջ, ու կը մազթէ որ աղքին միակ պարծանքը եղող այս Աթոռու մասայ միշտ պայծառ ու հաստատ և ունենայ բիւրաւոր առիթներ դիմաւորելու երջանիկ նոր տարիներ:

Ապա՝ Ս. Թարգմանչաց վարժարանի սանունիներու կողմէ երգուած Զօնէ մը ետք, սաներէն մէկը յառաջ կուգայ, իր և տարեկիցներուն ձայնը խառնելու՝ եղած չնորհաւորութեանց ու մազթանքներուն: Մանկավարտէզի պղտիկներն ալ կը բերեն իրենց երգն ու անմեղ ձայնը այս հանդէսին, որմէ ետք ժառանգաւոր սաները կ'երգին երգը Այգին, որ կարծես երգն ըլլար նորածագ Տարիին: Ապա՝ Դրանիկ Սարկաւագ Դապարեան՝ իր գրած գեղեցիկ և իմաստալից ճառին մէջ զրած ամբողջ սիրտը զպրոցին՝ կուգայ անգամ մը ևս պարզել այն նուիրումը և սէրը որով կապուած են իրենք Ս. Աթոռին և այդ Երախտագիտական զգացումներով՝ չերմ չնորհաւորութիւններ ու բարի մազթանքներ կ'ընէ իր կարգին:

Սրբազան Պատրիարք Հայրը զգածուած՝ ընելէ ետք իր ուղերձը, որ կ'երեկի «Սիլն» ի ներկայ թիւի առաջըն էջին վրայ, կ'օրինէ բոլոր ներկաները ու համօրէն Ազգը, և Տէրունական աղօթքով կը փակէ հանդէսը: Միաբանութեան անդամները և ամբողջ ներկայ ժողովուրզը, համբուրելէ ետք Ս. Պատրիարք Հօր Աչը, կը բաժնուին Դահլիճէն գոհունակ սրտով:

Յ Ն Ո Ւ Ն Գ

Յունուար 18 Հինգչաբթի, ձեզալոյց Սուրբ Խննդիման ըստ Հին Տոմարի, ամրող Միաբանութիւնը, զլխաւորութեամբ Ս. Պատրիարք Հօր, ունիցաւ, ըստ սովորաթեան, իր հանդիսաւոր երթը զէպի Բեթղեհէմ: Քանի մը օրերէ իլիեր մայլած և անձրեային եղանակը տեղի կուտայ ու քանչելիօրէն պարզուած երկնքին, ու գարունը լինեցնող արեգակը կը շողայ պայծառօքէն: Երուսաղէմի ժողովուրզը զունդ առ գունդ կը զիմէ Բեթղեհէմ:

Ուստօնեան, ժամը 9ին հեծելանուորդ երկու անգղիացի սպաներու և հայ սկառաւոներու առաջնորդութեամբ ճամբայ կ'ելլէ ինքնաշարժեարու թափօրը զանգաղ ու հանդիսաւոր, առաջնունենալով, բաց ինքնաշաբթի մը մէջ, արեղաներէ վերամբարձուած պատրիարքական խաչն ու ասան:

Կէտ ճամբին, թափօրը կը գիմաւորուի Բեթղեհէմէ փութացող հայ ազգայիններէ և Բեթղեհէմի քաղաքապետութեան անդամներէն: իսկ քաղաքի մուտքին՝ կառավարական ծիւաւորներու խումբէ մը՝ որոնք՝ զայն կ'առաջնորդին զէպի Բեթղեհէմ: Այն տեղ են՝ Բեթղեհէմի վանքին Տեսուչը, Տ. Սուրբէն Վրդ., ինկաման և վարդաջուր ի ձեռին և ի գլուխի՝ նախապէս եկած ու չարուած Ժառ. սաներէ եւ հայ սկառաւոներէ կազմուած թափօրին: Հոն են՝ Բեթղեհէմի Երջանային կառավարիչը, Քաղաքապետը և այլ մեծամեծներ, որոնք կ'ողջունեն և կը չնորհաւորեն Ամեն. Ս. Պատրիարք Հայրը Երը նա կ'իջնէ ինքնաշարժէն: Ժողովուրզը, հայ և օտար, լեցուցած են ընդամական հրապարակի կամքի արտաքին բակէն, «Խորհուրդ մեծօի Երգեցողութեամբ թափօրը՝ զլխաւորութեամբ Ս. Պատրիարք Հօր: Հրչապատուած պիտական բարձր աստիճանաւորներէ ու հայ հաւատացեաներէ, կ'ընէ իր պաշտօնական մուտքը Ս. Եննդիման հինաւուրց Եկեղեցիէն ներս, կը բարձրանայ մեր վանքը, ուր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը Պահպանիչի կարճ օրնասացութենէն ետք կուտայ իր առաջին աւետիսը Մեծ Օրուան:

Քրիստո ծնաւ եւ յայտնեցաւ:

Բարձրաստիճան հիւրերը կը պատուասիրուին վանքի Տեսչարանին մէջ:

Յետ միջօրէի, Հրաշափառի թափօրով, ամրող Միաբանութիւնը կ'իջնէ ծննդեան Ս. Այրը և կը կատարէ իր Ուխտը: Ապա տպաւորիչ խորհրդաւորութեան մը մէջ կը պաշտօւի ծրագուցիքի կարգը իր Սուրբ Գրական ընթերցուածներով և Ս. Պատարագով:

Ուշ գիշերին, կանթեղներու լոյսին մէջ, Ս. Ծնունդի Այրին քովս ի վեր, կ'օրներգուին գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները:

Համաձայն Միաբանութեան փափաքին ու չանքերովը լուսարարապետ հայր սուրբին, իսպիւս ցրուած հայ ժողովուրզն ալ կ'ունենայ

մսիթարանքը ձայնատիպիւթիւն մէջէն հալորդ Ը-
լալու Ժամերգութեան այն մասին որ կը կատար-
ուի ուղղակի Ս. Այլին մէջ, ու մեծ աւետիսին՝
զոր Կուտայ իրեն Ս. Պատրիարք Հայքը, կէս գի-
շերին, Ս. Այլըն խօսած յուսառու պատգամի մը
մէջէն, Ան իր խօսքը.

Ազգի խմբերի, ազդյալուր Հայոց, որ ի տաճանա
Պահպահին և յաւառամբան նորին եւ ի սիլուս աշ-
խարմակ:

Այս խոնարհութեալիքն, Եպրեմիկի այս նախական Ակրեն, ուր ուղարկած գործը առաջ, Խորեգութեամբ մեր Գրիգոր, տեղի ունեցած Խաղաղիքի ազգի Գրիգորութեան խորհուրդն ունեց և՛ ու ուստինի, յանձն մեր ուղարկութեալիքն, յանձն Հպատակութեայ Ուղարկեցիկին և՛ Մըրգ Յակարեանց Մրասնուէ Միարանութեան՝ ինչ կը խօսի Եռապաղիկ Առափեալամ Արքունի Պատշաճութեալ ունեցեար:

• ԱՌԵՑՆՈՒ ՎՐԱՐԵ ԵՐ ՑՈՅՑՆԵՐԻՆ:

Ճօմարտքիմ և արդարութեան յաւերժալոյ Ասկը,
ու աշխարհի համար եցածիկի օր մը. ճագեցու այս Ար-
քավայրի վերեւ, բայ իրեւ երազ յահետնական յօդի՝
անչէ մայ եւր սրեան մէ:

Հետեակային փառաւորթան եղք, որ ապդ օրը
Մարդկութան առաջ խաղաղութեան և պրոյ աստվա-
ծային պղոյնը, բայ շարաւանկ թերեցնել նողիներ՝
փառատեր ատելութեան ամեն անպ, որ կը իրագիտ
պղեառ հետանի և մարդոց պիտեր : Խանաւանի Շե-
կային՝ երգ վերասիր ընթացեած եղած էն չարիդմ ու-
ժեր ու կը գործն սպանի ու մասուան բանակներ :
Թո՞ղ եւկիմէն հնոյ հետեակային եղք, իրեւ աստվա-
ծային պատզան, անզու մըն ոլ արձազանիք՝ մեզինը
համար պիտեր, կարծութիւնը ու պարզեւեր համար
արդարութան ու պատութեան դաշին յարքանակը : Այս
նպաստին չկ որ մեր Սուրբ Նիկոլային կը խոյց յար-
անամ . «Ու ես Սուրբ Պատրիարքունք, Դադունքնեան,
ՅՈՒՐԱԿԱԿՈՒՆՔ ԹԵՇԱՄԵԱԾ, ՏԵԿԵԱԾ Սիր եւ ԱՐ-
ԴԱՐԱԿՈՒԹԻՒՆ և ՅԵՐԱԿԻ :

Սիրելի ճազբակող Հայոց, ուխտ եւ մանկացք Ա. Արքունոյ եւ այժմ այստեղ համախմբութ այս հաւասացեալ եղարքները եւ պրեկդ, իրեւ եռ պատզամւութեալ ու ենթասացութիւները, ծաւլը գրած եւ անա Եթերէմ հայութ այս հույսիական ու աւետարանական բարորդին մէջ եւ բոլ հաւաքիդ, բոլ յօփիդ եւ պրայդ ուկին, զմուռ ու հայուէն կը մասուցանն Մանկացեալ Ասուածութիւն ու իմ ուղինով կ'աղերանք որ իր Առը Խնճշեան խանութիւնը ըլլոյ ենք հսկան ոսի նոցիւր վերաբնձիւնքներ եւ անընդուն մեհեսուու պահ:

Այս խանդաւոր պահուս կը նուիրեմ մեզ սրբազնաւոր փաթիւ ժամանաքաւիս օրինաւորիւնը ու ամենին մեր այսից Եւթիթէն հնչող հնեւսակային եղքին կը մրցացնեմ ու կը գցէմ ի լուս ընդ ամենայն տեղին սփռեալ մեր ազգակից և արենակից հուատացեալ պիրելիթեռուու. «ՓՈԱ.Բ. Ի ՄԱՐՏՈՒՆՅԱ ԱՍՏՈՒՆԵԱՅ Են ՅԵՐԿՈՒՐ ԽՈ- ՊԱԴ.ՈՒԹԻՒՆ Ի ՄԱՐԴԻԿ ՀԱՃՈՒԹԻՒՆ» Ա.Մ.Ե.;

Ս. Պատրիարք Հայոք վերադարձաւ Երուսա-
լէմ, Զինք փոխանորդից, տօնական օրերու ա-
ռիթոպի, մեր մէջ զանուազ Տ. Արտաւագդ Արք-
եպիսկոպոս, որ խօսեցաւ օրուան քարոզը տօ-

նին խորհուրդներ, իր ձայնին զոռ չեցտավը ու պարթե հասակովը աւելի տպաւորիչ դարձնելով միսիթարութեան ու սփոփանքի իր բառերը: — Գեղեցիկ էր ու մանաւանդ խորհրդաւոր, ջրօրհնեկքը, հայ ժողովուրդին այնքան սիրած, մաքրութեան ու որբացումի այդ արարողութիւնը: հայ տղեկի մը թեհերուն մէջ այնքան երկիւ զածութեամբ զրգուած խաղով: — Հրեայ ուսանողներ, ձայնասիւռի հայ երգէն հետաքրքրուած հայ ծնուռնդի արարողութեամբ, հիացիկ նայուածքներով կը հետեւին ծէսերուն ու երգերուն, խառնուած հայ հաւատացեալներու: Կէս զիշերը անցած էր երբ մատուցուեցաւ Ս. Ենունդի երրորդ ու մեծ Ս. Պատարազը, ժամարարութեամբ Տ. Արտաւազդ Արքեպոսի: Առաւատեան դէմ ժամը 6ին կ'աւարտի զիշերային հսկման այս երկարածիդ պաշտամունքը:

Աւրաբաթ առաւտու, ամբողջ Միաբանութիւնն
ու ժողովաւրգը, երթի նոյն հանդիսաւորութեամբ
կը վերադառնայ Երուսալէմ. կը բերէ իր աւե-
տիսը Ս. Պատրիարք Հօր, որ կ'ընդունի զայն
Պատրիարքարանի Մեծ Գահին մէջ, տալով
իսխակարձարար իր հայրական օրհնութիւնը ա-
ռնեւն:

ԳԱՅՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Քանի թը զը զը թի Արքեպիսկոպոսը, իր 28 նոյ. 1939 թուակիր Նամակով կը չորհաւորէ Ամեն. Դ. Պատրիարք Հօր Գանձակալութիւնը:

* Նոյեմբեր 29 Դշ. — Ժամը 4 ին (կ. վ.) Ե-
սուսալէմի զպտոց եպիսկոպոսու, որ ժամանակէ
ըլ և զեր Դաշիբէ կը գտնուէք, վերազարձած ըլ-
ալով տեղս, իր միաբանութիւնով միասին այ-
լիք զպտորիարքարան, եւ իր ու Եղիպտոսի
պտոց պտորիարքին չնորհաւորութիւնները
երկայացուց Ամեն. Ո. Պատրիարք Հօր գահա-
լութեան առջիւ:

* Դեկտ. 1 նոր. — Կէսօրէ վերջ ժամը 2.30ին
ուղի ունեցաւ քաղաքիս Յ. W. C. A. ի տարեկան
գաղաքը Յ. M. C. A. ի չքեր չէնքին մէջ նախա-
ահութեամբ Պայմեստինի վաեմ. Բարձր Գամիսօնը ի
ոկնոց՝ լէտի Մէք-Մէքքլի: Հրաւէրով ներ-
այ գունդեցաւ Ամեն. Ս. Պատրիարք Հայոց՝
ետն ունենալով լուսարարապետ Գեր. Տ. Կիւրեղ
. Վարդապետը՝ Նորին Ամենապատռութիւնը
ըրտասանեց բացման ազօթքը: Ներկայ էր նաև
ըրուսաղէմի Յունաց Ս. Պատրիարքը որ արտա-
անեց փակման ազօթքը:

* Գեկու. 14 ել. — Ժամը 10.15 ին Ամեն, Ս. առթիւարք Հօր այցելեց Անգլիոյ վեհ. Թագարին խօստովանահայր և անդքայս Սկզբանական կեղծեւոյ երէց վեր, նորման Մագլին, ընկեսկցութեամբ Տօքթ. Սթիւրոնի,

※ Դեկտ. 19 դշ. — ժամը 10.30ին Ամեն. Ա-
ստրիաբը Հօր այցելեց Լիբանանի ազգային բու-
րանի երուսաղէմի Տիկնանց Վարչութիւնը՝
այս առթիվ Ս. Պատրիարք Հօր յանձնեց
Պ. 35.470 միլի գումար մը: Կոր հանգանակած
երուսաղէմի հայ բարեսէրներէն յօդուտ յիշ-
ու բուժաբանին: Այս գումարը Ամեն. Ա. Պա-

տրիարք Հօր կողմէ չէքով մը զրկուեցաւ Պէլքութ՝
թոււարանի Խնամակալութեան նախագահին:

* Կեկտ. 20 Դշ. — Կէսօրէ վերջ ժամը 4 ին
Ամեն. Ս. Պատրիարք Հայրը հետոն ունենալով
լուսարաբագեան Գեր. Տ. Կիւրեղ Ծ. Վարդապետը
փոխազարձ այցելութեան գնաց վեր, նորման
Մազլինի:

* 26 Կեկտ. — Եւրոպացւոց Խննդեան տօնին
առթիւ Ս. Պատրիարքը Գեր. Լուսարաբագեան
հայր սուրբի և վարդապետ հետեւորդներու ըն-
կերպակցութեամբ այցելեց Ֆրանչիսկեան Միա-
բանութեան կիւսողոտիւան, Լատինաց պատրիար-
քարանը և Անկիքան եկեղեցւոյ եպիսկոպոսին
չնորհաւորելու Ս. Խնունլը:

Նոյն օրը Տ. Գէորգ Վրդ., Տ. Ներսէս Վրդ.,
և Տ. Պատր Վրդ. այցելեցին Յոյն-Հռովմէական-
Ներու, հազորգելու Ս. Պատրիարք Հօր չնորհա-
ւորութիւնները Ս. Խնունլի առթիւ իսկ Տ. Շա-
ւարչ Վրդ. և Տ. Յակոբ Արքեղայ այցելեցին Հայ
Հռովմէականաց, նոյն նպատակով:

* Յունուար 8 Բշ. — Յրթուուքո եկեղեցիի
Խննդեան տօնին առթիւ Ամեն. Ս. Պատրիարք
Հօր կողմէ Տնօրէն ժողովոյ անդամ Հոդ. Տ.
Գէորգ Վրդ., Տ. Վահան Վրդ., Աւագ Թարգման
Տ. Պատր Վրդ. և Տ. Յովհաննէս Արքեղայ չնորհա-
ւորական այցելութիւն տուին քաղաքիս Ղպտոց,
Ասորւոց և Հապէչաց վանքերը:

* Յուն. 10 Դշ. — Պատրիարքաբարանս այցե-
լեց քաղաքիս Խոտալական Պ. Փոխ-Հիւպատոսու,
Խոտալա իր մեկնումին առթիւ:

* Յուն. 15 Բշ. — Ըստ Հին Տոմարի մեր նոր
Տարւոյ առթիւ չնորհաւորական այցելութեան
եկան:

Նախկին քաղաքապետ՝ Բաղրամ Պէջ Խէչաշիպի:
Թրքական և Ֆրանսական հիւպատոսները՝

Վահեմ. Բարձր Գոմիսերի կողմէ իր թիւնապա-
հը՝ հետոն ունենալով Բուհի Պէջ Ապուէլատիւն:

Շնորհաւորական քարթեր Վրկած էին. Քա-
ղաքիս Խոտամանական, Եռկալաւ, Զէխոսովլաք
հիւպատոսները:

* 20 Յուն. Եր. — Մեր Ս. Խննդեան Տօնին
առթիւ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, պատրիար-
քաբանի մեծ զահին մէջ ընդունեց չնորհաւո-
րական այցելութիւնները՝ Ֆրանչիսկեան Կիւս-
ոտին, Լատինաց Պատր. Փօխանորդին, Անդ. Ե-
պիսկոպոսաբանի կողմէ՝ Կանոնիկոս Հ. Պիհնմէ-
նին, Ղպտոց վանքի Մեծաւորին, Ասորւոց վանքի
Մեծաւորին, Հապէչաց վանքի Մեծաւորին, Հայ
Կաթոլիկաց Պատր. Փօխանորդին, Յոյն Կաթոլի-
կաց Մեծաւորին և Սիոնի Տօրմիսիոն վանքի Մե-
ծաւորին:

* 27 Յուն. Եր. — Պատրիարքաբարանս այցե-
լեց Երուսաղէմի Վահեմ. Կառավարչի հօրեղբօր-
որդի Rev. C. A. Roach, որ հովուական պաշտօնով
կը մեկնի Ղպտատ:

8. ԱՐՑՈՒԱԾՎԱՐ ԱՐՔԵՊՈՍ ՄԵՐ ՄԷՋ

Ամեն. Ս. Պատրիարք Հօր մասնաւոր հրաւե-
րով Հալէպի թարեջան Առաջնորդ Գեր. Տ. Ար-
տաւազզ Արքեպոս. Սիւրմէեան Յունուար 11 ին

Ա. Քաղաքս ժամանեց, Ծննդեան տօները մեզի
հետ և մեր մէջ անցնելու նպատակով: Աւագ
Թարգման Տ. Պատր և Տ. Պարզե վարդապետները
կիւզէն զիմաւորեցին Նորին Սըրազնութիւնը,
որ իր ուխտը կատարելէ վերջ Ս. Գլխազրի մատ-
րան մէջ՝ ներկայացաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր,
իսկ երեկոյեան զէմ հետեւորդ վարդապետներով
այցելեց լուսահոգի Տ. Թորգոմ պատրիարքի գե-
րեզմանին:

Սըրազանը նոր Տարւոյ առթիւ քարոզեց
Մայր Տաճարի մէջ, Կէսօրէն յետոյ նորին Անե-
նապատռութեան ու Տնօրէն ֆոլովի անգամնե-
րուն հետ այցելեց Ժառ, Վարժ. ուր Պատրիարք
Սըրազան Հօր հրաւերով ինք տուաւ նոր Տարւոյ
պատգամը վարժարանի սաներուն: Ժամը Յին
Նախագահեց Ս. Թարգմ. Վարժ. ի Ամանորի հան-
գէսին, և պահէն թիւլողը ած խոսեցաւ հանգի-
պականներուն: Յաջորդ օրը, Երկուշարթի, Մա-
տենագարանի Տեսչութեան մասնաւոր հրաւերով,
Նորին Սըրազնութիւնը բանախօսեց Միաբանու-
թեան, աշակերտութեան, և ընթրեալ բազմու-
թեան մը, Սամարիոյ և անդ կատարուած նո-
րագոյն պիւլումներու մասին: Ծննդեան ձրագա-
լոյցը և տանը անցուց Միաբանութեան հետ
ի Բեթղէհէմ, Հսկելով ամբողջ գիշերը, և առա-
ւոտեան գէմ քարոզեց ու պատարազեց Ս. Այրին
վրայ: Նախապէս Անուանակոչութեան տօնին
առթիւ պատարազեց Ս. Գերեզմանին վրայ և
տպաւորիչ քարոզ մը խոսեցաւ: Նոյն օրն իսկ,
Ժամը մէկին մեկնեցաւ Ս. Քաղաքէս:

ՄԵԿՆՈՒՄ ՃԱՄԱԿՈՒՄ

* 9 Յուն. Դշ. — Հայքայի հաղեոր տևուն
Տ. Յուսիկ Վրդ. քանի մը օրուաւ համար եղիպ-
տոս երթաւու արթոնութիւն ստացած ըլլալով
Տ. Շնորհք Վրդ. Տայքա մեկնեցաւ զինքք փա-
խանորդելու իր բացակայութեան: Վերագարձու
Յունուար 16 ին:

* 27 Յուն. Եր. — Ճահէ Արեգայ Քաղաք
զրկուեցաւ տեկունի փոքրաթիւ հայութիւնը հո-
գեռապէս միսիթարելու և հոգորդիւն, Ս. Ծը-
նընդեան տօնին առթիւթով: Վերագարձաւ յաջորդ
օր կէսօրէն վերջ:

* 29 Յուն. Բշ. — Նոր Ճառզայի Հոգեոր Դըպ-
րանոցի վերասեսուչը՝ Տ. Թէկողորս Ծ. Վրդ.
Խանակեան որ շուրջ հինգ ամիսներէ ի վեր մեր
մէջ կը գտնուէր հիւրաբար. այսօր մեկնեցաւ իր
հայրենիքը, Եղիպտոսի և Հնդկաստանի համրով:

ՆՈՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ

Տ. Արթուն Վրդ. Հրաժարած ըլլալով Ժառ,
Վարժ. ի Փախ Տեսչութեան պաշտօնէն, Պոր Կը
վարէք երեղ տարիներէ ի վեր, իր տեղ սոյն
պաշտօնին կանչուեցաւ հայերէն թղթակցու-
թեանց ատենազիւրի Տ. Հրազդան Արքայ: Վ. Վ. Հու-
նոյս Խախին պաշտօնը յանձնուեցաւ տպարանի
փոխ տեսուչ Տ. Յակոբ Արքեղայի, իսկ տպարանի
փոխ տեսուչ Հայանակուեցաւ Տ. Շահէ Արքեղայ:

ՄԵՍՐՈՎՐ Յ. ՍԵԹԵԱՆ

ՆՈՐ-ԶՈՒՂԱՑԵՑԻ

Նախորդ սերունդներին պատկանող նշանաւոր գէմքը կան, որոնք իրենց մասուցած ծառայութեամբ ու մեծարժէք հրախտիք էր պէտք է մոռացնին, այլ յիշատակի մի անկինն պէտք է ունենան ամեն մի հայի սրան խորքում:

Ելլպափի դէմքերից էր՝ միշտ իրեն «Նոր Զուղացեցին» յորդորվելու պատիւն համարող Մերուվը Յ. Սէթեանը, որ կնքեց իր մահկանացուն Կողկաթայում Հոկտ. 31-ին, 68 տարեկան հասակի մէջ:

Հանգուցեալլը իր ծննդավայր Նոր-Զուղափի մէջ, գեր տղայական հասակում, ցոյց է տեև որ իր արտակարգ ընդունակութիւնների շնորհի կարող էր զրագան մարզի մէջ իր արժանի տեղը զրաւել, ուստի եւ նրա հայրը — Յակովը Սէթեանը — զանելով որ նոր-Զուղան իր 80-ական թւականների ուսումնական մաշտաբով անկարող էր գոհացումն տալ իր ուսումնածարաւ որդուն, բրում է Կալկաթա եւ մայնում «Հայոց Մարդասիրական ծեմարան»ը, որի ուսումնական ընթացքը երկու տարւայ ընթացքում աւարտում է ամենամեծ յաջողութեամբ, արժանանալով «ոսկէ մէտալ» մրցանակի:

Բայց հազի 20 տարին բոլորած պատանի Մերուվի մէջ յաւաջդիմութեան ցանկութիւնը անյագ էր եւ ընթերցասիրութեան ու ինքնաշխատութեան կորուլը զօրեղ: Նա անքուն զիշերներ է լուսացնում, հնտեւելով անդլիական եւ հայ զրականութեան, վերջինի մէջ զրաբարը իր «հանգանակ հաւատոյն դարձնելով: Ոյլ իսկ պատճառով եւ նա սկզբունք էր դարձնել ոչ մի տող աշխարհաբար ք գրել եւ ստացած նախակներին էլ «ոսկեղինիկ զրաբար»ով պատախանել: Ո՞վ չ յիշում արտասահմանի հայ մամուլի մէջ նրա զրաբար յօդւածները, միշտ համեմած իր իտէալլ կազմող՝ Մերուվը Թաղիատեանի խօսքերով:

Կեանքի վրայ հանգուցեալլը նայում էր փիլիսոփայական աչքերով: Նա ունեցել է լաւ ու վատ օրեր, ինչպէս բրորն են ունենում, բայց ո՛չ վատ օրերն են յուսահատեցրել նրան եւ ո՛չ էլ լաւ օրերը ոգեւորել: Հանգուցեալն ընտրել էր իր համար ամուրի

կիանքը, զիրքն ու զրիչը յատկացնելով միակ ընկերն ու միխթարութիւնը:

Անգլիագիտութեան մէջ ծնաբ բերած արտասովոր յառաջադիմութեամբ եւ օժտուած զրելու կարութութեամբ, 1895 թիւն, 24 տարեկան Մերուվը հրատարակում է իր առաջին երախայրիքը «Հնդկաստանի հայոց համառօտ պատմութիւննը», 2օն ած Անգլիոյ օրի այ նախարարապետ Գլատստոնին, ի գնահատութիւն հայկական գատի համար նրա տածած համականներին, որպիսի ծօնի համար երիտասարդ հեղինակը ստանում է գոհունակութեան եւ խրախուսանքի ինքնազիր պատասխան:

Գրական-բանասիրական աշխարհին ըսպասաւորելու տենչով բռնւած, ժրագան մեղի նման, նրանց հիւթովն ու նեկտարովը սնանելու եւ արբենալու համար որպիսի չարքաշ օրեր է ունեցել հանգուցեալլը: Նա 45 երկար տարիներ, տրոպիքական երկրներին յատուկ կլիմայական սոսկալի պայմանների տակ, տընել է Հնդկաստանի ըորս ծագերից հաւաքել եւ մոռացութիւննց լոյս աշխարհ բերել նախանի մեծագործ հայերին — Խօզա Խրայէլ Սարհառին, Խօզա Պետրոս Ոսկանին, Սուա Խաչիկ Առաքելին, Խօզամալին, Գուգին Խանին եւ — չերկարելու համար շարքը — իրենց հոյակալ գործերով՝ հայ անունը պանծացնող՝ ուրիշ շատ նախնիների: Հանգուցեալլի «Հայերն Հնդկաստանում» անգլերէն մեծահատոր վերցին աշխատութիւննը (տպագրւած 1937 թիւն, եւ բաղկացած 629 էջից), հաշվի չառնելով նիւթի հետ կապ չունեցող մի քանի շեղումները, մի զլուխ գործոց է, որի համար աշխարհահոչակ բանաստեղծ՝ Դր. Ռաբինդրանաթ Տագօրը իրաւամբ որակել է «հնախուզական տքնացան աշխատանքի մի յուշարձան»: Եւ նոյնքան իրաւամբ պէտք է յայտնել, որ հանգուցեալլի այս աշխատութիւննը միջազգային մեծ փուրօք հանեց, ըստ որում Լոնդոնի «Times», օրաթերթից սկսեալ մինչեւ Կալկաթայի «The Statesman», եւ Հնդկիկ օրաթերթերը, ինչպէս եւ արտասահմանի համարեայ բոլոր հայ թիրթերն ու ամսագրերը զրախոսականներ ու գնահատականներ նւիրեցին:

Հանգուցեալլը պատիւն ունեցաւ ըստանալու նաեւ Հնդկաստանի Փոխ-արքայարանից, Բէնգալի նախանգապետարանից եւ Լոնդոնի՝ Հնդկաստանի Գործոց նախարարութիւննից զոհունակութեան զրութիւններ: Երա հրատարակած մեծահատոր աշխատութեան արձագանքն այնքան զօրեղ եղաւ որ հեռաւոր Ամերիկայից զանազան ազգային-

ներ, ինչպէս եւ Եւրոպայի քաղաքներից, որոնց թւում եւ Վատիկանից պատւէրներ ստացւեցին:

Անկախ իր գրական աշխատանքներից, հանգուցեալը անդամ էր նաև Բէնգալի Արքայական Ս.սիական Ընկերութեան, Մեծնորդութանիոյ եւ Իրանստայի Արքայական Ասիական Ընկերութեան, Կալկաթայի Պատմական Ընկերութեան, Ամերիկայի հին դըրամական (pumismatic) Միութեան, Բէնգալի գրադարանական միութեան եւ Քննիչ Կալկաթայի Համալսարանի՝ գրաբար եւ աշխարհիկ հայ լեզուների: Աւելացնենք այս բոլորի վրայ եւ այն, որ անցեալ 1938 թւին Թէհրանի Գիտութեան Ակադեմիան իր յատուկ պաշտօնագրով տևեց նրան «պրոֆէսոր»ի տիտղոսը:

Իր անդամակցական հանգամանքով, հանգուցեալը օտարազգի ծանօթների ու բարեկամների լայն շրջան ունէր եւ երթեան Հայ մեծագործութիւններն ու Հայ կուլտուրան դասախոսութիւնների նիւթ էր դարձնում Բէնգալի Արքայական Ս.սիական Ընկ. տարեկան հաւաքոյթների մէջ:

Հանգուցեալը իւրովսան ծառայութիւնը չէ զլացել նաեւ ազգային-հասարակական ասպարիզում: Վարել է Կալկաթայի Հայոց Եկեղեցական Յանձնախմբի եւ Մարդասիրական ծեմարանի Հոգաբարծութեան անդամակցութեան պաշտօնները: Միջանկեալ աւելացնենք, որ Հնդկաստանի հին հայոց տոնմային մանրամասնութիւնները զիտէր ամենայն ճշտութեամբ, այդ իսկ պատճառով էլ՝ իր սուլ ժամերից բաժին էր հանում իրեն դիմողների նախնեաց նիւղագրութիւնները կազմելու եւ նրանց պէտքերին ծառայեցնելու համար:

1928 թւին Կալկաթայի հայ հասարակութիւնը մեծ շրջով տօնեց հանգուցեալի 40-ամեայ զրական գործունէութեան յորութեանը, որի առթիւ ստացւած բազմաթիւ շնորհաւորական հեռագիրների ու զրութիւնների թւում պէտք է յիշել Գէորգ Ե. երջանկայիշատակ Արքազնագոյն կաթողիկոսի եւ Թեմի օրւայ Առաջնորդ Արքան Մեսրոպ Մագիստրոս արք-Կափիկոպոսի օրհնութեան կոնդակները:

Անյուսալիքորէն քայբայւած առողջութեամբ, ըստ նայած իր բազմաշխատ ծեռքն անզօր էր անգամ զրիչ բռնելու, սակայն տեսնելու էր թէ ինչպէս նա կորացած քամակով օրն ի բուն նատած էր զրասեղանի առաջ՝ աշխատելիս: Նա մարմնացումն էր աշխատափրութեան, տիպարն էր անդուլ տքնութեան: Սակայն մահւան նախընթաց

երեք ամիսները ընկնւեց անողոք հիւանդութեան ծանրութեան տակ, զգալով որ աւուրք իւր երեկոյացեալ են, ուստի եւ անհունօրէն մտահոգ էր, որ այլիւս զրկւած էր իր կիսաւարտ գործերը վերջացնելու եւ գեռ նորերը ծեռնարկելու անդարձ հնարաւորութիւնից:

Ոհա այսպիսի արգասալից, բայց չարքաշ կեանք ապրեց Նոր-Զուղայեցի Մեսրովը Յ. Սէթեանը — մէկը հայ ժողովրդի՝ հայ հոգով ու հայ սրտով սնած ու մեծացած զաւակներից — որի յուղարկաւորութիւնը կատարւեց ամսոյս 1-ին (Նոյեմբեր) ստար հասարակութեան ներկայութեամբ: Ծաղկեպասկներ էին դրւած հանգուցեալի դազաղի վրայ՝ Կալկաթայի հայոց վիճակաւոր քահանաների, Եկեղեցական Վարչութեան, Հայոց Մարդասիրական ծեմարանի Հոգաբարձութեան, Ուսուցչական խմբի, աշակերտութեան եւ յարգողների կողմից: Ի նշան սզի, փակ էին Եկեղեցական Վարչութեան գրասենեալը եւ ծեմարանը, աշակերտութիւնը ուսուցչական կազմի նետ ներկայ էր յուղարկաւորութեանը: Եկեղեցում, զագաղի առաջ, քաղաքիս հայոց վիճակաւոր Տ. Ներսէս քահ. Դաւթեանը մի դամբանականով հանգուցեալի շուրջ վերջիշումներ անելով, դրւատեց մատուցած ծառայութիւնները զրական-բանասիրական աշխարհին՝ հին հնդկահայոց մեծագործութիւնները անյայտութիւնից ի յայտ բերելու մէջ եւ եղրակացրեց որ հանգուցեալի մահը մի անփոխարինելի բաց է թողնում Հնդկահայ զաղութիւնից, որպիսի բացը բնականորէն անդրադառնում էր եւ զրական-բանասիրական անդամատանի վրայ:

Հանգուցեալի մահւան առթիւ Կալկաթայի «The Statesman» օրաթերթը այսպէս էր արտայայտում. — «Պ. Մեսրովը Յ. Սէթեանի մահւամբ հայ հասարակութիւնը կորցրել է մէկի, որ երիտասարդ օրերից ներեց իրեն հայ պատմութեան եւ կուլտուրային: Իր հետախուզութիւններով, նա ո՛չ միայն լոյս սփռեց հին հայերի՝ Հնդկաստանի մէջ հաստատման ծագումի եւ ընթացքի, այլև երկրի պատմութեան վրայ: Լինելով մի տքնաջան ուսումնական, նա այս նահանգի կրթական մարզում նաև աշխատավոր էր»:

Յարգանք իր լիշտական եւ հանգիստ յոգնատանց անհինին:

ԹԱՂԱԿԻՑ ՆՈՐ-ԶՈՒԴՅԵՑԻ

S. ՎՈՐԱՄՇԱՊՈՒՀ ԱՐՔԵՊՈՍ. ՔԻՊԱՐԵԱՆ

Յաւով կ'իմանանք այս պատուական և վաստակաւոր եկեղեցականին մահը, որ հետեւանքը եղած է յառաջացած տարինքի: Սրբազնը կը վախճանի իրեւ չօ-ամեայ, լցակ աւուրբք: Քանի մը տարիէ իվել գրեթէ անզործութեան մատնուած էր և կը խնամուէր հիւանդանցի մէջ:

S. ՎՈՐԱՄՇԱՊՈՒՀ ԱՐՔ. ծնած է Շապին-Գարահիսար. ամուսնացեալ քահանայ ծեռնապուած բայց կանուխէն այրիացած: Ժամանակ մը պաշտօնավարած է Կ. Պոլիս Գատը գիւղ, ուրիէ Հովիւ ընորուած է Բարիզի Թիմին և ուր կը պաշտօնավարէր մինչեւ իր մահը: Երջանկայիշատակ Ե. Դորեան Պատրիարքէ վարդապետական աստիճան ստացած և քանի մը տարի վերջ ալ եակիսուպուացած՝ արժանալով նահեւ արքութեան պատուին: Վերջին տարիներուն երբ ալ զրեթէ զործէ քաշուած էր, Բարիզին կատարուած դիմումին վրայ, իրեն իրեւ փոխանորդ զրիուած էր Ս. Սթոռոյս Միաբաններէն Տ. Տիրան Վրդ, Ներսոյիան:

Իր պաշտօնավարութեան ընթացքին Սրբազնը ցոյց տուած է անձնուէր ոգի մը, բարձր պահելով հայ եկեղեցականի պատիւը, իր ուղղամիտ և պարկեշտ գործունէութեամբ սիրուած ու յարգուած է ան ամենքէն: Սրբազնը կը վախճանի իր ընթացքը լիովին կատարած ըլլալու գոհունակութեամբ, նետը տաներով ամբասիր եկեղեցականի մը համբաւը, և աստ ծգելով բարի եկեղեցականի իր օրինակը:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

S. ԽՈՐԷՆ ՔՀՆՅ. ՄԵԼԻՔՉԱՆ

Խոր վիշտով կը լսննք նահեւ Գահիրէի քահանաներէն Տ. Խորէն Քահանայ Մելիքշահ հօր մահը, արդիւնք սրտի կաթուածին:

Տէր Հայրը շտրջ հինգ տարիներէ ի վեր կը պաշտօնավարէր իրեւ քահանայ և իրեւ յիւանապես Գահիրէի Ազգ. Առաջնորդարանին: Իր արժանիքով և մտերիմ ու անկնջդ վարմունքով ընդհանուր համակրանք մը ստեղծած էր իր շուրջ:

Կը վախճանի 57 տարեկան հասակին, ծնած ըլլալով 1883 ին ի Գաղատիա, ու սումը առած Արմաշու Դարեվանքին մէջ. մտած աշխարհական կինցաղ, ունեցած զովելի պաշտօնավարութիւններ Պոլսոյ ազգային շրջանակին մէջ: 1922 ին մեկնած Պոլիսէն և ապաստանած Բարիզ, ուրիէ 1935 ին կանչուած է Գահիրէ և մտած եկեղեցական ասպարէզ: Եղած է զարգացած հոգեւորական ու եկեղեցիի անձնուէր պաշտօնեայ:

Դժբախտութեանց և ընտանեկան վիշտերու բովէ մը անցնելով կը մտնէ Տէր Հայրը իր յաւիտենական հանգիստը:

Խաղաղութիւն իր հոգիին:

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.

Editor - Father Shnorh Kaloustian. Armenian Convent, Jerusalem.

Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem,

